ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (98). 2018

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԻ ՈՒՂԵՐՁ-ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

МАТЕРИАЛЫ ТРЕХДНЕВНОЙ КОНФЕРЕНЦИИ ПО ОБСУЖДЕНИЮ ОБРАЩЕНИЯ-ВИДЕНИЯ МИНИСТРА ОБОРОНЫ РА ДАВИДА ТОНОЯНА

MATERIALS OF THE THREE-DAY CONFERENCE ON THE DISCUSSION OF THE ADDRESS-VISION OF DAVID TONOYAN, THE RA DEFENSE MINISTER

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ



ՀԱՊԿ-ի Հավաքական անվտանգության խորհրդի անդամները

Ձախից աջ. Հայաստանի Հանրապետության Վարչապետի պաշտոնակատար *Նիկոլ Փաշինյան*, Բելառուսի Հանրապետության Նախագահ *Ալեքսանդր Լուկաշենկո*, Ղրղզստանի Հանրապետության Նախագահ *Սորոնբայ Ժեենբեկով*, Ղազախստանի Հանրապետության Նախագահ *Նուրսուլթան Նազարբաև*, Ռուսաստանի Դաշնության Նախագահ *Վլադիմիր Պուտին*, Տաջիկստանի Հանրապետության Նախագահ *Էմոմալի Ռահմոն*, ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար *Վալերի Սեմերիկով*

Աստանա, 2018 թ. նոյեմբերի 8

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության մասնակից պետությունների պատվիրակությունների ղեկավարները 17-րդ գագաթնաժողովում

Երևան, 2018 թ. հոկտեմբերի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (98). **2018**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Հովհաննիսյան Գ. Մ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Շահնազարյան Թ. Ն.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սիմոնյան Ս. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Փախչանյան Դ. Բ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դ. Է. Տոնոյան, ՀՀ պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը 7

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԻ ՈՒՂԵՐՁ-ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ռ. Հարությունյան, ՀՀ Պաշտպանության նախարարի տեսլականը ՀՀ Կառավարության ծրագրի մտահղացման շրջանակներում 20

Ա. Գ. Ղևոնդյան, ՀՀ դաշինքային քաղաքականության հիմնախնդիրները «Հավաքական անվտանգության» հայեցակարգի իրացման համատեքստում 25

Լ. Ս. Հովսեփյան, Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները 33

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Յ. Մկրտչյան, ՀՀ ԶՈՒ-ի զարգացման հեռանկարները ՀՀ Պաշտպանության նախարարի տեսլականի համատեքստում 50

Ա. Կ. Հովհաննիսյան, Ճկուն և ստատիկ պաշտպանության խնդիրները նոր սերնդի պատերազմներում. դիտարկում ՀՀ ՊՆ տեսլականի համատեքստում 55

Ն. Վ. Մարտիրոսյան, ՀՀ ԶՈՒ-ի զորամիավորումների, միավորումների և զորամասերի կառավարման համակարգի զարգացման ուղիները 76

Գ. Ս. Համբարյան, Ռադիոէլեկտրոնային պայքարի զարգացման ուղիները 81

Ա. Կ. Հովհաննիսյան, Ա. Ս. Գրիգորյան, Մեր տեղանքում գումարտակային մարտավարական խմբերի կիրառման առավելությունները 86

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Գ. Գ. Ասրյան, ՀՀ Զինված ուժերի զինծառայողների շարունակական պատրաստման համակարգի զարգացման հեռանկարները 96

Բ. Ս. Մուրադյան, Հայրենասիրական դաստիարակությունը՝ որպես պետական քաղաքականության գերակա ուղղություն, և իրականացման ծրագրային դրույթները 102

Ա. Մ. Շահվերդյան, Սոցիալական մեդիայի միջոցով ՀՀ Զինված ուժերի հեղինակության բարձրացման խնդիրը՝ ՀՀ պաշտպանության համակարգի զարգացման տեսլականի համատեքստում 108

Զ. Դ. Ասատրյան, Զինվորական ստորաբաժանումներում հակամարտային իրավիճակների կանխարգելման որոշ մեթոդաբանական հարցեր 118

Ա. Ս. Գրիգորյան, ՀՀ ԶՈՒ-ում սպաների վերապատրաստման հետբուհական դասընթացները ավելի արդյունավետ դարձնելու հարցի շուրջ 125

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 130

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ս. Քոթանջյան, գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող), քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (98)**. 2018**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Алтунян Г. Р., Аперян В. В.,
Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Давтян А. М.,
Макарян А. А., Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А.,
Ованнисян Г. М., Пахчанян Д. Б., Погосян Б. П., Симонян С. В.,
Тер-Григорьянц Н. Г., Хачатрян Т. В., Шахназарян Т. Н., Ширинян М. А.,
Яланузян А. К. (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

Д. Э. Тоноян. Видение развития системы обороны РА 7

МАТЕРИАЛЫ ТРЕХДНЕВНОЙ КОНФЕРЕНЦИИ ПО ОБСУЖДЕНИЮ ОБРАЩЕНИЯ-ВИДЕНИЯ МИНИСТРА ОБОРОНЫ РА ДАВИДА ТОНОЯНА

БЕЗОПАСНОСТНАЯ ПОЛИТИКА

А. Р. Арутюнян. Видение Министра обороны РА в рамках замысла программы правительства РА 20

А. Г. Гевондян. Основные вопросы союзнической политики РА в контексте осуществления концепции «коллективной безопасности» 25

Л. С. Овсепян. Преобразования внешней и безопасностной политики Турции: переоценивая вызовы безопасности Армении 33

ВОЕННАЯ НАУКА И СТРОИТЕЛЬСТВО ВС

Н. Я. Мкртчян. Перспективы развития ВС РА в контексте видения Министра обороны РА 50

А. К. Оганесян. Задачи гибкой и статической обороны в войнах нового поколения: обзор в контексте видения МО РА 55

Н. В. Мартиросян. Пути развития системы управления соединений, объединений и войсковых частей ВС РА 76

Г. С. Гамбарян. Пути развития радиоэлектронной борьбы 81

А. К. Оганесян, А. С. Григорян. Преимущества применения батальонных тактических групп в нашей местности 86

ВОЕННОЕ ОБРАЗОВАНИЕ И МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ

Г. Г. Асрян. Перспективы развития системы продолжительной подготовки военнослужащих Вооруженных сил РА 96

Б. С. Мурадян. Патриотическое воспитание как приоритетное направление государственной политики и программные положения осуществления 102

А. М. Шахвердян. Задача повышения авторитета Вооруженных сил РА посредством социальной медиа в контексте видения развития системы обороны РА 108

З. Д. Асатрян. Некоторые методологические вопросы предотвращения конфликтных ситуаций в воинских подразделениях 118

А. С. Григорян. К вопросу повышения эффективности послевузовских курсов переподготовки офицеров в ВС РА 125

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 130

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
Г. С. Котанджян, генерал-лейтенант (в отставке),
доктор политических наук, профессор;
А. А. Манташян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА,
О. Я. Саядян, доктор географических наук, профессор,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (98)**. 2018**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Altunyan G. R.*, *Aperyan V. V.*, *Ayvazyan L. G.*, *Balayan G. K.*, *Davtyan A. M.*, *Gasparyan O. V.*, *Ghambaryan M. A.*, *Hovhannisyan G. M.*, *Idinyan R. A.*, *Khachatryan T. V.*, *Makaryan A. A.*, *Margaryan R. P.*, *Margaryan V. H.*, *Martikyan A. M.*, *Martirossov L. A.*, *Pakhchanyan D. B.*, *Poghosyan B. P.*, *Shahnazaryan T. N.*, *Shirinyan M. A.*, *Simonyan S. V.*, *Ter-Grigoryants N. G.*, *Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief)

CONTENTS

D. E. Tonoyan. The vision of the RA defense system development 7

MATERIALS OF THE THREE-DAY CONFERENCE ON THE DISCUSSION OF THE ADDRESS-VISION OF DAVID TONOYAN, THE RA DEFENSE MINISTER

SECURITY POLICY

A. R. Harutyunyan. The vision of the RA Defense Minister in the framework of the program concept of the RA Government. 20

A. G. Ghevondyan. The main issues of the RA allied policy in the context of implementing the "Collective Security" concept 25

L. S. Hovsepyan. Turkey's foreign and security policy transformations: reassessing challenges to Armenia's security 33

MILITARY SCIENCE AND DEVELOPMENT OF THE ARMED FORCES

N. J. Mkrtchyan. The development perspectives for the RA Armed Forces in the context of the RA Defense Minister's vision 50

A. K. Hovhannisyan. The tasks of flexible and static defense in new-generation wars: a review in the context of the vision of the RA Ministry of Defense 55

N. V. Martirosyan. The ways of developing the control system of tactical formations, units and military units of the RA Armed Forces 76

G. S. Hambaryan. The ways of development of electronic warfare 81

A. K. Hovhannisyan, A. S. Grigoryan. The advantages of using battalion tactical groups in our locality 86

MILITARY EDUCATION AND PSYCHOLOGICAL AND MORAL SUPPORT

G. G. Asryan. The perspectives for the development of the system of servicemen's long-term training of the RA Armed Forces 96

B. S. Muradyan. Patriotic education as a priority direction of state policy and the program regulations of its implementation 102

A. M. Shahverdyan. The problem of increasing the prestige of the RA Armed Forces via social media in the context of the RA's defense system development vision 108

Z. D. Asatryan. Some methodological issues of preventing the conflict situations in tactical units 118

A. S. Grigoryan. To the issue of increasing the efficiency of the officers' retraining post-graduate courses in the RA Armed Forces 125

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 130

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;

N. H. Arakelian, Full Member, NAS RA;

L. S. Arzumanyan, Doctor of Philology;

G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;

K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;

S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;

S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;

H. A. Gevorkian, Full Member, NAS RA;

B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;

V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;

H. S. Kotanjian, Lieutenant General (retired),
Doctor of Political Sciences, Professor

A. H. Mantashian, Full Member, NAS RA;

M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;

H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;

E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;

M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;

K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;

R. A. Safrastyan, Full Member, NAS RA;

Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;

A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;

H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Դ. Է. ՏՈՆՈՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար

Հայաստանի Հանրապետության անվտանգային անկայուն միջավայրը, պետության և հասարակության առջև ծառացած մարտահրավերները, դրանցից բխող արտաքին, այդ թվում՝ անմիջական ռազմական բնույթի սպառնալիքները պահանջում են ունենալ հուսալի պաշտպանության համակարգ: Ի լրումն նախաձեռնողական արտաքին դիվանագիտության՝ այդ համակարգը Հայաստանի և Արցախի երաշխավորված, կայուն և տնտեսական զարգացումը խթանող պաշտպանունակության, Արցախի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում Հայաստանի և Արցախի համար բարենպաստ բանակցային պայմաններ ապահովելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ուժի դիրքերից հանդես գալու հիմնական գրավականն է:

Պաշտպանության համակարգի գերագույն նպատակը մարտունակ, ապաքաղաքականացված, հասարակության համակողմանի ներգրավմամբ և ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվող զինված ուժերի ձևավորումն է: Այսպիսի զինուժ ունենալու համար պահանջվում են զգալի՝ Հայաստանի Հանրապետության հնարավորությունների համեմատ ***անհամաչափ մեծ միջոցներ***, որոնք պետք է զուգակցվեն թափանցիկության բարձր չափորոշիչների, ուժերի և միջոցների առավելագույն արդյունավետ օգտագործման, վատնումների բացառման և բանակի նկատմամբ հասարակության լիակատար վստահության հետ:

Կառավարության ծրագրում հստակ ամրագրված է բանակաշինության և զինվորական ծառայության շուրջ հաստատված մթնոլորտի ու մոտեցումների արմատական փոփոխության հրամայականը՝ որպես Զինված ուժերի մարտունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոց: Այս գերխնդրի իրագործման համար պաշտպանության համակարգում մենք պետք է անցնենք իմացական վերափոխում՝ ***պարտականության զգացողությունը*** փոխարինելով ***առաքելության զգացողությամբ***: Սա վերաբերում է պաշտպանության ոլորտի անձնակազմի անխտիր բոլոր կատեգորիաներին՝ գեներալներից ու սպաներից մինչև կրտսեր և ավագ ենթասպաներ ու շարքայիններ, հայեցողական պաշտոններ զբաղեցնող

պաշտոնյաներից և քաղաքացիական հատուկ ծառայողներից մինչև բանվոր-ծառայողներ: Պարտականության զգացողությունը մարդու մեջ սերմանում է մշտապես վերադասի հրահանգներին սպասելու, իսկ անգործության պատճառով առաջադրանքը ձախողելու դեպքում՝ նման հրահանգ չստանալու պատճառաբանությամբ արդարանալու մշակույթ: ***Տրամագծորեն հակառակ մշակույթ է ձևավորում առաքելությունը***. այն ենթադրում է տվյալ գործին, ձեռնարկին կամ հղացմանը սեփականության իրավունք, երբ նպատակի իրականացման պատասխանատվությունը հավասարաչափ դրված է պաշտպանության նախարարի և կրտսեր ծառայողի, գեներալի և շարքայինի վրա, և երբեմն սեփական կարգապահ նախաձեռնողականությունդ կարող է ունենալ հիրավի ***ռազմավարական նշանակության բարենպաստ հետևանքներ***:

Հետևելով այս տրամաբանությանը՝ բոլորս պետք է առաջնորդվենք մեր պետության և ժողովրդի առաջ ունեցած պատմական առաքելության գիտակցումով: Ղեկավար պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ, առանց բացառության, պետք է գիտակցի, որ իրեն վստահված այս առաքելությունը լավագույնս իրականացնելու համար պետք է գերազանցություն դրսևորի երկու առանցքային գործառույթում:

Առաջինը դա ենթականերին առաջնորդելն է: Առաջնորդիր սեփական օրինակով, մարդկանց խրախուսիր ըստ արժանիքների, պատժիր արդարացի կերպով, սահմանիր հստակ առաջադրանք, տուր դրա իրականացման խելամիտ ուղղորդում, թույլ տուր կարգապահ նախաձեռնողականություն՝ միաժամանակ վերահսկելով առաջադրանքի կատարումը և չխուսափելով ընդհանուր պատասխանատվությունից, և վերջապես՝ հանդուրժող եղիր ոչ էական վրիպումների համար, և կտեսնես, որ ձևավորել ես բարձր կատարողականությամբ թիմ՝ դրա անդամների բնավորության, խորագիտակության և հանձնառության առողջ հավասարակշռմամբ:

Երկրորդ առանցքային գործառույթը միջոցների մտապատկերումն է, դրանց պլանավորումը, ձեռքբերումը, հատկացումը և օգտագործման վերահսկողությունը: ***Նախևառաջ պետք է գիտակցենք, որ Հայաստանի մարդկային ռեսուրսները սահմանափակ են, հետևաբար հայոց զինուժի զինվորն ու սպան պետք է շեշտը դնեն ոչ թե քանակական առավելության, այլ որակական գերազանցության վրա:*** Յուրաքանչյուր հրամանատար և պաշտոնյա պետք է առաջնորդվի հասարակության և պետության կողմից հատկացված մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսները պետության և հասարակության անվտանգության ապահովմանը առավելագույն արդյունավետությամբ ծառայեցնելու գիտակցումով: Ռեսուրսների ոչ նպատակային, ոչ արդյունքային, ոչ խնայողաբար և անարդյունավետ ծախսը հատկապես վնասակար ազդեցություն է գործում Հայաստանի նման սահմանափակ ֆինանսական հնարավորություններ և

համեմատաբար մեծ զինված ուժեր ունեցող երկրների վրա: Բոլորս պետք է գիտակցենք, որ հասարակության կողմից Զինված ուժերին հատկացված նյութատեխնիկական և ֆինանսական միջոցները քաղաքացիների՝ սեփական սոցիալական, կրթական, առողջապահական և մյուս ոլորտներից խնայված և անվտանգության ապահովման առաջնահերթությունից ելնելով մեզ տրամադրված ռեսուրսներ են: Այս հարցն էլ ավելի է կարևորվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն ունեցող երկրներում, երբ պետությունը պատասխանատվություն է կրում զինվորի կենցաղային պայմանների, սննդի, հագուստի, հանգստի և ժամանցի պայմանների ու մի շարք այլ խնդիրների համար: Այս տեսանկյունից յուրաքանչյուր հրամանատար պետք է գիտակցի ծնողների կողմից իրեն վստահված զորակոչիկների կյանքի, անվտանգության և բարեկեցության ապահովման բարձր պատասխանատվությունը: ***Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ժամկետային զինծառայող պետք է գիտակցի, որ լինելով հայրենիքի պաշտպան, ինքն այլևս չի գտնվում ծնողների և հարազատների խնամքի տակ, և ֆիզիկական ու հոգեպես պատրաստ լինի պատվով կրելու զինվորական ծառայության դժվարությունները և սահմանափակումները:***

Ինչքան էլ հզոր ռազմական տեխնիկա և մեծաթիվ անձնակազմ ունենաս, միևնույն է, դատապարտված ես ձախողման, եթե բանակումդ չի տիրում անհրաժեշտ արդարության, նվիրվածության և համախմբվածության մթնոլորտ: Այս հատկանիշները չեն ձևավորվում ինքնին, այլ կախված են առկա բացասական երևույթները կամ դրանց վերապրուկները արմատախիլ անելուն և դրական դրսևորումները ամրապնդելուն ուղղված ամենօրյա աշխատանքի հաջողությունից: Կոռուպցիոն որևէ դրսևորում տեղ չպետք է ունենա բանակում: ***Կոռուպցիան ինքնին չարիք է*** պետության կենսագործունեության ցանկացած ոլորտում, սակայն այն կրկնակի աղետ է ռազմական բնագավառում, աղետ, որը չսանձահարման դեպքում կարտահայտվի մարտի ժամանակ խափանված կրակոցի, հավաքակայանից դուրս գալ չկարողացող տեխնիկայի, զինվորի համար անհրաժեշտ կալորիականություն չպարունակող սննդի տեսքով: Այնպես որ՝ բանակի շարքերում բարեվարքության ամրապնդման, անհրաժեշտ հաշվետվողականության զարգացման աշխատանքները պետք է լինեն ղեկավար կազմի ուշադրության կիզակետում:

Պաշտպանության բնագավառում և զինված ուժերում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, դրանք կառավարելու և բարեվարքության նորմերն ամրապնդելու համար պետք է մշակվեն նաև *նյութատեխնիկական ռեսուրսների կառավարման, այսինքն՝ պլանավորման, գնումների, սպառման, վերահսկման և հաշվետվողականության թափանցիկ ընթացակարգեր: Այս ընթացակարգերը կոչված են* երաշխավորելու պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների բաշխումը և կարողությունների ձևավորումը, կառավարման և բյուջետային որոշումների

ներդաշնակեցումը, բյուջետային ծրագրերի՝ նյութատեխնիկական առումով կայունությունը և մրցակցող պահանջների միջև ռացիոնալ որոշումների կայացումը: Եվ քանի որ առկա անվտանգային միջավայրում Զինված ուժերի պահանջները հիմնականում գերազանցելու են պետության տնտեսական հնարավորությունները, պետք է ռեսուրսների կառավարման ոլորտում իսպառ վերացնենք տեղայնական շահերի ազդեցությունը, երբ զինված ուժերի այս կամ այն բաղադրիչն իր կարիքները ներկայացնելիս դրանք չի դիտարկում մարտական կարողությունների ընդհանուր տարրապատկերում, միաժամանակ խուսափելով ռազմական գիտության տեսանկյունից չհիմնավորված այնպիսի ձեռքբերումներից՝ լինեն դրանք համակարգերի, համալիրների, ապրանքների կամ ծառայությունների տեսքով, որոնք պարունակում են վաղաժամ բարոյապես հնանալու կամ ձեռքբերման համար ոչ մատչելի դառնալու ռիսկեր:

Զինված ուժերի կարևորագույն խնդիրներից է նաև պաշտպանության համակարգի և Զինված ուժերի՝ ապաքաղաքական լինելու և քաղաքական չեզոքության պահպանման սահմանադրական պահանջի իրագործումը: Այս առումով արդեն հիշատակված իմացական վերափոխման արգասիքներից պետք է լինի նաև այն, որ բանակը գործնականում զերծ մնա քաղաքական և ընտրական գործընթացների վրա որևէ հնարավոր ապօրինի ազդեցությունից կամ հակառակը՝ ինքը ուղղորդված կերպով չազդի ընտրությունների արդյունքների վրա: Լինելով համազգեստ կրող քաղաքացիներ՝ զինծառայողները երկրի իշխանության ձևավորման գործընթացին մասնակցելու իրենց իրավունքը պետք է իրացնեն բացառապես ընտրությունների ժամանակ ազատ կամաարտահայտության միջոցով և զինվորականներին հարիր կարգապահ կերպով՝ առանց որևէ ապօրինի ներգործության: ***Այս նպատակով առաջիկայում կմշակվեն առաջարկություններ ՀՀ Ընտրական օրենսգրքում ՀՀ Զինված ուժերում նախընտրական քարոզչության իրականացման մեխանիզմներ սահմանելու վերաբերյալ***:

Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ բանակը հասարակության անբաժանելի մասն է և պետք է առավելագույն թույլատրելի սահմաններում թափանցիկ լինի քաղաքացիական հանրության համար: Հասարակության լայն շերտերի, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների կողմից զինված ուժերում առկա խնդիրների վերհանումը կապահովի անկողմնակալ կարծիքի հաշվառմամբ ընդլայնված մտքերի փոխանակում՝ նպաստելով առավել արդար և արդյունավետ լուծումների որոնմանը և կենսագործմանը:

Կառավարության ծրագիրը նախատեսում է նաև ճշգրտումների կատարում Զինված ուժերի զարգացման պլանում և սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրում: Որպես պաշտպանության ոլորտի ռազմավարական նշանակության երկու հիմնական ուղեցույցներ,

այս փաստաթղթերը կարիք ունեն ինչպես իրենցում պարփակված հայեցակարգային դրույթների՝ նոր քաղաքական առաջնահերթություններին և պաշտպանության կազմակերպման մոտեցումներին համապատասխանեցման, այնպես էլ կատարված աշխատանքների միջանկյալ վերստուգման և խնդիրների թարմացման: Նորացված փաստաթղթերի վերջնանպատակը կլինի զինված ուժերի մարտական կարողությունների և անձնակազմի մարտական վարպետության բարձրացումը, որին հասնելու համար կպլանավորվեն որոշ ոլորտներում ռեսուրսների ավելացման, այլ ոլորտներում դրանց ծախսի արդյունավետության բարձրացման, մեկ այլ տեղ՝ խնայողության ռեժիմի անցման միջոցառումներ՝ հասնելով պաշտպանության համակարգում ընդհանուր արդյունքայնության բարձրացման:

Որպես պաշտպանության ոլորտի և Զինված ուժերի զարգացման առաջնահերթություններ, անդրադառնամ հետևյալ խնդիրներին.

Առաջնահերթություն 1.

Զինված ուժերի համալրումը անհրաժեշտ քանակի և ժամանակակից սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և նյութատեխնիկական միջոցներով, ռազմական կառավարման արդիական սկզբունքների և համակարգերի ներդրումը և անձնակազմի մարտական վարպետության բարձրացման նոր չափանիշների սահմանումը: Այստեղ մեր վերջնանպատակն է բանակի մարտունակության մակարդակի համապատասխանեցումը ռազմական սպառնալիքների մակարդակին և հավանական պատերազմի բնույթին՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված ոտնձգությունը զսպելու և կանխելու, իսկ պատերազմի ժամանակ՝ ռազմական գործողությունները հնարավորինս վաղ փուլում և ՀՀ-ի համար շահավետ պայմաններով դադարեցնելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմամբ:
Մեր թիվ մեկ խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար բարենպաստ ռազմական պայմանների ստեղծումը: Մենք թույլ չենք տալու, որ հակամարտության կարգավորման գործընթացում, ինչքան էլ այն երկարաձգվի, հակառակորդը մեզ հետ խոսի ուժի դիրքերից և հետամտի առավելապաշտական նպատակներ: Սահմանին որևիցե, այսպես ասած ապակառուցողական դրսևորում՝ լինի դա դիվերսիոն ներթափանցումների, դիպուկահար կրակի, դիրքային փոփոխությունների և լայնածավալ հարձակման համար ուժերի կուտակումների տեսքով, արժանանալու է կտրուկ և սթափեցնող պատասխանի: Դա անելու համար մենք շարունակելու ենք հետևողականորեն զարգացնել Զինված ուժերի մարտական կարողությունները, հակառակորդի նկատմամբ ճիշտ պահին, ճիշտ տեղում և ճիշտ ձևաչափով անհրաժեշտ ազդեցության ներուժը պահպանելու և էլ ավելի զարգացնելու համար: Խնդիրներն արդեն առաջադրված են, կարողությունները՝ ձևավորված, և մենք աշխատում ենք դրանք էլ ավելի հզորացնելու ուղղությամբ:

Զինված ուժերի երկարաժամկետ արդիականացման գործընթացը ներառելու է ռազմական հզորության բոլոր ոլորտները՝ առաջնագծում մարտական հերթապահությունից, հեռահար միջոցներով զսպումից, մարտական պատրաստությունից սկսած և վերջացրած ռազմական կառավարման համակարգով, մարտ վարելու նոր եղանակներով և կրթությամբ: Անշուշտ, առանցքային նշանակություն ունի Զինված ուժերի զինանոցի համալրումը արդիական սպառազինությամբ, և այս գործում մեր աշխատանքներն իրականացնելու ենք ինչպես դաշնակից ու գործընկեր պետությունների հետ ռազմատեխնիկական համագործակցության իրականացման, այնպես էլ՝ հայրենական ռազմարդյունաբերության զարգացման շրջանակներում: Մեր վարած ռազմատեխնիկական և ռազմաարդյունաբերական քաղաքականությունը նախ մտասևեռված է *Զինված ուժերի հարվածային և կրակային խոցման հեռավորության, ճշգրտության և արդյունավետության ավելացման վրա, որի համար նախատեսվում է շարունակել* բանակի զինանոցի համալրումը *գերճշգրիտ հեռահար հրթիռային հարվածի, հրետանային խոցման և հակաօդային պաշտպանության* ժամանակակից զինատեսակներով, ***ինչպես նաև առաջնահերթ բազմաֆունկցիոնալ ավիացիայով****:*

Գերակա խնդիր է նաև Զինված ուժերի կառավարման համակարգի և կառավարման մշակույթի արդիականացումը: Այդ համակարգը պետք է ունենա ժամանակակից ռազմական գործողություններ վարելու համար բավարար օպերատիվություն, կենսունակություն, շարժունակություն և տեխնոլոգիական հագեցվածություն: Այս խնդրի կատարման համար, բացի տեխնիկական լուծումներից, շարունակվելու է նախաձեռնողականության, արագ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու և դրանցով գործելու խթանմանը միտված «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» կառավարման ու ղեկավարման սկզբունքի ներդրումը: Այս սկզբունքի էությունը հետևյալն է. տուր ենթականերիդ անհրաժեշտ ռեսուրսներ, ուժեր և միջոցներ, խելամիտ ուղղորդում և վստահություն, և կտեսնես, որ տեղում նրանք կգտնեն ավելի լավ լուծումներ և ամենակարևորը՝ կիրականացնեն դրանք ավելի օպերատիվ կերպով, քան եթե դու փորձես որոշել բոլորի փոխարեն, միաժամանակ չտեսնելով յուրաքանչյուր առանձին հրամանատարի պատասխանատվության գոտում ծագած իրավիճակի առանձնահատկությունները:

Ոչ պակաս կարևոր է *ռազմական գործողությունների վարման ձևերի ու եղանակների, այսինքն՝* ***ռազմարվեստի արդիականացումը և ապակենտրոնացված ու տարատեղված գործողություններ վարելու կարողությունների ձևավորումը՝*** Զինված ուժերի պատրաստությունը հավանական պատերազմի բնույթին համապատասխանեցնելու, որոշումների կայացման և գործողությունների իրականացման փուլերում հակառակորդի նկատմամբ առաջանցում ապահովելու նպատակով:

Եվ իհարկե, առաջնահերթ նշանակություն ունի ***ռազմաարդյունաբերական համալիրում ներդրումների խթանման և համատեղ ձեռնարկությունների ստեղծման քաղաքականության վարումը՝*** *հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավման, օտարերկրյա ներդրումների ներգրավման և հանրային, մասնավոր ու միջազգային կոոպերացիայի սկզբունքով համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով: Պաշտպանության նախարարությունը խթանելու է համապատասխան արտադրական կարողությունների ստեղծումը, գիտահետազոտական և կիրառական գիտության զարգացումը և գիտատեխնիկական մասնագիտական ներուժի ավելացումը՝ սպառազինության ու ռազմական տեխնիկայի մշակմանը, արտադրությանը, շահագործմանը, նորոգմանն ու արդիականացմանն ուղղված պետական պաշտպանական պատվերի՝ սեղմ ժամկետներում կատարումն ապահովելու նպատակով:*

Առաջնահերթություն 2.

Հակառակորդի հետ անմիջական շփման բնագծերի շարունակաբար համալրումը արդիական տեխնիկական միջոցներով և մարտական խնդիրների կատարման արդյունավետության բարձրացումը: Մենք պետք է առավելագույնի հասցնենք մի կողմից՝ հակառակորդի դիպուկահար կրակի, դիվերսիոն ներթափանցման և հարձակման նախապատրաստման փորձերի բացահայտման, հավաստանշման, թիրախորոշման և կրակային խոցման կարողությունները և մյուս կողմից՝ յուրային անձնակազմի քողարկման, պատսպարման և պաշտպանվածության աստիճանը:

Այս համատեքստում գերակա խնդիր է մարտական հերթապահության կրման պայմանների կատարելագործումը և անձնակազմի անվտանգության աստիճանի բարձրացումը: Պետք է աստիճանաբար քայլեր ձեռնարկենք առաջնագծում մեր կողմից կիրառվող ստատիկ պաշտպանությունը տեսադիտարկման և այլ հետախուզական սարքավորումներով և հեռակառավարվող խոցման միջոցներով հագեցած ***տարաշարժուն-ճկուն*** պաշտպանությամբ փոխարինելու ուղղությամբ: Պաշտպանության այս տեսակի միջոցով զգալիորեն կնվազի անձնակազմի՝ հակառակորդի նշանառու կրակի տակ գտնվելը, կբարձրանա անձնակազմի պաշտպանվածության և դիմակայունության աստիճանը և կավելանա հակառակորդի դիվերսիոն խմբերի դարանակալման և ոչնչացման հավանականությունը: Այս նպատակով, ի թիվս այլ ուժերի և միջոցների, ստեղծվում են հակառակորդի օպերատիվ դասավորության ամբողջ խորությամբ և ռազմավարական մակարդակում նրա մտահղացումների վաղ հայտնաբերմանն ուղղված զորային, տեխնիկական ու գործակալական հետախուզական և վերլուծական կարողություններ:

Առաջնահերթություն 3.

Անձնակազմի հետ տարվող աշխատանքների որակի և արդյունավետության էական բարձրացումը: Այստեղ մեր վերջնանպատակն է Զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակի ու կարգապահության ամրապնդումը, բանակում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը, ոչ կանոնագրային հարաբերությունները նվազագույնի հասցնելը, զինծառայողների արժանապատվության խոցման դեպքերի, ինքնավնասման և ինքնասպանության փորձերի առավելագույնս կասեցումը:

Մեր գերակա խնդիրն է զինված ուժերում մարդու իրավունքների ապահովումը երաշխավորելու նպատակով իրականացնել զինծառայողների իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացման, թափանցիկության ընդլայնման և ծառայողական քննությունների պարզեցման աշխատանքներ:

Առաջնահերթություն 4.

Զինծառայողների կրթության շարունակականության ապահովումը զինվորական ծառայության ողջ ընթացքում: Մենք պետք է հետևողական աշխատանքներ տանենք զինծառայողի կրթական ցենզի բարձրացման և ինտելեկտուալ մակարդակի աճի ուղղությամբ՝ որպես Զինված ուժերի զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն:

Մեր վերջնական նպատակն է բանակում արհեստավարժության և բարոյականության նոր չափանիշների ձևավորումը՝ հմուտ, պատվախնդիր ու առաջնորդ սպայական կազմով և վարժված, կրթված, շարժառիթավորված ու մարտունակ զինվորներով, որի համար ձեռնարկելու ենք քայլեր Զինված ուժերի մասնագիտական ինքնությունը և վարկանիշը ամրապնդելու ուղղությամբ, ընդհուպ՝ մինչև ազգային արժեքները խորհրդանշող նոր համազգեստի ներմուծումը:

Կրթությունը անքակտելիորեն կապված է անձնակազմի կառավարման հետ: Պաշտպանության համակարգում ընթացող կադրային փոփոխությունները իրականացվելու են պետական կառավարման և քաղաքացիական հանրության կարող ուժերը ներգրավելու և առկա պրոֆեսիոնալ ռեսուրսը լավագույնս օգտագործելու փոխլրացնող ուղղություններով: Պաշտպանության նախարարության ղեկավարությունը կյանքի է կոչելու արժանիքների վրա հիմնված ծառայողական առաջխաղացման քաղաքականություն, ավելի ու ավելի պատասխանատու պաշտոններ վստահելով ուժեղ բնավորություն, առաջնորդական որակներ, մասնագիտական խորագիտակություն և առաքելության նկատմամբ հանձնառություն ունեցող պրոֆեսիոնալ զինվորականներին և աշխատակիցներին:

Առաջնահերթություն 5.

Զինծառայողների պատշաճ և ամբողջական նյութական բավարարումը: Մենք պետք է երաշխավորենք բոլոր կարգի զինծառայողների իրավունքների պաշտպանվածության, թիկունքային, նյութատեխնիկական և բժշկական պատշաճ ապահովումը՝ որպես Զինված ուժերի ղեկավարության, պետական ու հասարակական վերահսկողության ու հոգածության առարկա:

Մեր խնդիրն է զինծառայողներին հատկացվող իրային միջոցների՝ համազգեստի, ներքնազգեստի, հիգիենայի ապահովման պարագաների որակական և քանակական ցուցանիշների, ինչպես նաև սննդակարգի բարելավումը: Այս ուղղությամբ առաջիկայում պաշտպանության նախարարությունում կմշակվի համապատասխան չափորոշիչների բարելավման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ և կներկայացվի ՀՀ կառավարություն: Պետք է աշխատենք նաև մի շարք ապահովման ծառայություններ օտարելու ուղղությամբ՝ հիմքում ունենալով դրանց որակի կտրուկ բարձրացումը և կոռուպցիոն երևույթների բացառումը:

Առաջնահերթություն 6.

Զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, բնակարանային, բժշկական ապահովման և այլ ծրագրերի իրականացումը: Բանակի բարոյահոգեբանական պատրաստվածությունը չի լինի բարձր մակարդակի վրա, եթե զինծառայողների համար չլինեն պատշաճ սոցիալական ապահովման պայմաններ՝ սկսած արժանավայել դրամական բավարարումից, հանգստի ու ժամանցի պայմաններից և վերջացրած բուժապահովմամբ: Իհարկե, ինչպես արդեն նշվել է, պետության տնտեսական ներուժի համեմատ մեծաքանակ բանակ ունենալու հանգամանքը ինքնին առաջ է բերում ֆինանսական սահմանափակումներ, սակայն խելամիտ լուծումների, «վատնող արտահոսքը» կասեցնելու և գործառույթներն ավելի օպտիմալ բաշխելու միջոցով պաշտպանության նախարարությունում անելու ենք ամեն ինչ զինծառայողի կենսապայմանները և նրա հոգևոր գոհունակությունը բարելավելու համար:

Պաշտպանության նախարարության գերակա խնդիրն է *ծառայության մեջ գտնվող և նախկին զինծառայողների ու քաղծառայողների, զինվորական հաշմանդամների, զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների համընդգրկուն սոցիալական ապահովման ծրագրերի իրականացումը, զինծառայողների բժշկական ապահովման համակարգի վերափոխումը՝ առաջին բուժօգնության ցուցաբերումից և մարտի դաշտից տարհանումից մինչև հոսպիտալային օղակում որակյալ բուժում ստանալը: Այս համատեքստում արդեն իսկ ավարտական տեսքի է բերվում* արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական աջակցության նպատակային ծրա-

գիրը, որը բեկումնային լուծում կապահովի բոլոր զինծառայողների (առանց տարիքային սահմանափակումների) սոցիալական պաշտպանվածության ոլորտի այս կարևոր հիմնախնդրին: Եվ իհարկե, աչքաթող չի արվում պաշտպանության ոլորտի անձնակազմի դրամական բավարարման մակարդակը բարձրացնելու հարցը, որին լուծում կտրվի Հայաստանում տնտեսական աճի և պետական բյուջեի եկամտային մասի ավելացմանը զուգընթաց:

Առաջնահերթություն 7.

Միջազգային ինտեգրման և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնումը: Այս նպատակի վերջնարդյունքն է ռազմաքաղաքական դաշինքների և գործընկերությունների զարգացումը՝ պահպանելով ՀՀ ազգային շահերից բխող և առկա ռազմաքաղաքական ընդհանրությունների վրա հիմնված հարաբերությունների ձևավորման հավասարակշռությունը:

Մենք մեր հակառակորդի հետ չենք գտնվում քաղաքական վակուումում, այլ շրջապատված ենք տարատեսակ, երբեմն հակադիր օրակարգեր ունեցող պետությունների և միջազգային կազմակերպությունների հանրույթով: Նրանից, թե որքանով ճիշտ կկարողանանք նավարկել միջազգային հարաբերությունների այս հորձանուտով, կախված է արտաքին անվտանգության հարցերում ՀՀ շահերից բխող դիրքորոշումների ձևավորման, մեր բարեփոխումներին աջակցության, մեր բանակի հեղինակության ամրապնդման հաջողությունը:

Մեր գերակա խնդիրն է դաշնակցային և գործընկերային պաշտպանական համագործակցությունը զարգացնելու, բովանդակային և աշխարհագրական պատկերը բազմազանեցնելու ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, միջազգային համագործակցության նպատակաուղղումը բազմակողմ և երկկողմ հարթությունում ռազմաքաղաքական հարաբերությունների, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ու փոխգործունակության ամրապնդման բաղադրիչների զարգացմանը:

Սա պաշտպանության նախարարի տեսլականն էր Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում պաշտպանության համակարգի և զինված ուժերի համար սահմանված նպատակների, առաջնահերթությունների և գերակա խնդիրների իրագործման վերաբերյալ: Վստահ եմ, որ պաշտպանության համակարգի անձնակազմն իր մասնագիտական խորագիտակության և հմտությունների ոլորտներում կգտնի էլ ավելի արդյունավետ գործնական լուծումներ, որոնք ամբողջարկվելով պետության և բանակի ղեկավարության ուղեցույցում, կապահովեն մեր ընդհանուր առաքելության պատվով կատարումը: Իսկ այս առաքելության կատարման գործում բանիմացության, արդարամտության, նվիրվածության և համախմբվածության կատարելատիպ դառնալու ձգտումը չունի այլընտրանք:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԻ
ՈՒՂԵՐՁ-ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

МАТЕРИАЛЫ ТРЕХДНЕВНОЙ КОНФЕРЕНЦИИ
ПО ОБСУЖДЕНИЮ ОБРАЩЕНИЯ-ВИДЕНИЯ
МИНИСТРА ОБОРОНЫ РА
ДАВИДА ТОНОЯНА

MATERIALS OF THE THREE-DAY CONFERENCE
ON THE DISCUSSION OF THE ADDRESS-VISION OF
DAVID TONOYAN,
THE RA DEFENSE MINISTER

Ս. թ. սեպտեմբերի 7–9-ը պաշտպանության նախարարությունում կազմակերպվեց գիտաժողով: Դրա նպատակն էր ռազմագիտական տեսանկյունից քննարկել ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի տեսլականի հիմնական դրույթները՝ դրանք դարձնելով զորքերի հրամանատարության համար ավելի խորքային, ընկալելի ու հիմնավորված: Գիտաժողովն անցկացվել է ՀՀ ՊՆ ռազմագիտական կառույցների և զորային օղակի հրամանատարության ներգրավմամբ, քաղաքացիական գիտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների մասնագետների մասնակցությամբ: Այդ գործում չափազանց կարևոր էին ինչպես ռազմական գիտաուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, այնպես էլ քաղաքացիական գիտնականների ու փորձագետների կարծիքները, արծարծված հարցերն ու պրոբլեմները, նրանց միջև ծագած բանավեճերը:

Սա բանակաշինության ասպարեզում առաջադիմական մշակույթի ներդրման լավ օրինակ է, երբ ամեն առաջարկություն ու դոկտրինային փաստաթուղթ ենթարկվում է համապատասխան գիտական քննարկման և ստանում է անհրաժեշտ հիմնավորում: Կարևոր են նաև գիտական հարթակներում զինվորականության և քաղաքացիական գիտական շրջանների շփումները:

Ելույթները հրապարակվում են առանց խմբագրական միջամտության:

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ա. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՁՈՒ-ի գնդապետ

Ինչպես ասել է չինացի զորավար Սուն Ցզին. *«Ով որ ճակատամարտից առաջ նախնական հաշվարկով հաղթանակում է, հաղթանակի ավելի մեծ հնարավորություններ ունի, ով մինչև ճակատամարտը նախնական հաշվարկով չի հաղթում, նա քիչ հնարավորություն ունի հաղթելու, առավել ևս չի հաղթում նա, ով չունի նախնական հաշվարկներ»*[1]:

Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը, աշխարհում և տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը, մեր պետության անվտանգության դեմ ուղղված մարտահրավերները, ռազմական, տնտեսական և այլ բնույթի սպառնալիքները մեզնից պահանջում են առաջին հերթին ունենալ հուսալի պաշտպանության համակարգ:

Պաշտպանության համակարգի գերագույն նպատակը առկա և հնարավոր սպառնալիքներին հաջողությամբ դիմագրավելու և դրանք չեզոքացնելու ունակ, ապաքաղաքականացված, հասարակության համակողմանի ներգրավմամբ գործող ու նրա վստահությունը վայելող, ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվող մարտունակ զինված ուժերի ձևավորումն է: Գաղտնիք չէ, որ այդպիսի զինուժ ունենալու համար պահանջվում են Հայաստանի Հանրապետության հնարավորությունները զգալի չափով գերազանցող միջոցներ:

Կառավարության ծրագրում որպես Զինված ուժերի մարտունակության և արդյունավետության մեծացման կարևորագույն միջոց հստակ կերպով ամրագրված է բանակաշինության և զինվորական ծառայության շուրջ տիրող մթնոլորտի ու կիրառվող մոտեցումների արմատական փոփոխության հրամայականը:

Այս գերխնդրի իրագործման համար պաշտպանության համակարգում մենք պետք է կատարենք իմացական վերափոխում՝ ***պարտականության զգացողությունը*** փոխարինելով ***առաքելության զգացողությամբ***:

Այս գործընթացները հաջողությամբ իրականացնելու համար առկա ուժերի և միջոցների առավելագույնս արդյունավետ օգտագործման, վատնումների բացառման և բանակի նկատմամբ հասարակության լիակատար վստահության ապահովման խնդիրների կատարման գործում պետք է հաս-

[1] *Սուն Ցզի,* Երկ ռազմարվեստի մասին: Թարգմանությունը Ռուբեն Սահակյանի, գ. 1. «Հիմնական հաշվարկները» (http://grapaharan.org/%D4%B5%D6%80%D5%AF_%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF%D5%AB_%D5% B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6):

նենք պաշտպանության ոլորտում գործող անխտիր բոլոր կարգախմբերի անձնակազմի յուրաքանչյուր անդամի անհատական գործողությունների շնորհիվ:

Նախևառաջ պետք է գիտակցենք, որ Հայաստանի մարդկային ռեսուրսները սահմանափակ են, հետևաբար հայոց զինուժի զինվորն ու սպան պետք է շեշտը դնեն ոչ թե քանակական առավելության, այլ որակական գերազանցության վրա:

Պաշտպանության համակարգի հետ կապված միջոցառումների ծավալը և բովանդակությունը ներկայումս, պայմանավորված իրադրության անընդհատ բարդացմամբ, արագորեն փոփոխվում են: Դա առաջ է բերում ընթացիկ միջոցառումների բովանդակության փոփոխության և նոր միջոցառումների կազմակերպման անհրաժեշտություն: Միջոցառումները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը, առկա սպառնալիքները և զորքերի մարտական խնդիրների առանձնահատկությունները:

Կարևոր է հիշել, որ **հուսալի պաշտպանության համակարգի ստեղծումը, պահպանումը և զարգացումը ներկայի և ապագայի աշխատանք է**: Անհրաժեշտ է նկատի առնել ոչ միայն այն, թե հակառակորդն ինչ ունի այսօր, այլ ինչ սպառազինություն կունենա վաղը և ըստ այդմ ինչպես կարող են փոփոխվել նրա գործողությունների բնույթն ու մարտավարությունը: Ուստի զարգացումը պետք է ունենա հեռամետ նպատակ. անհրաժեշտ է վճռականորեն հրաժարվել այն ամենից, ինչը հնացել է, համարձակորեն որոնել և գործողության մեջ դնել նորը, առաջավորը, զարգացողը:

Յուրաքանչյուր հրամանատար և պաշտոնյա պետք է առաջնորդվի այն բանի գիտակցմամբ, որ հասարակության և պետության հատկացրած մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսները պետության և հասարակության անվտանգության ապահովման խնդրին ծառայեցվեն առավելագույն արդյունավետությամբ: Ռեսուրսների ոչ նպատակային, ոչ արդարացված, ոչ խնայողաբար և անարդյունավետ ծախսը վնասակար ու կործանարար ազդեցություն է գործում մեր երկրի վրա, քանի որ ունենք սահմանափակ ֆինանսական հնարավորություններ և համեմատաբար մեծ Զինված ուժեր: Բոլորս պետք է գիտակցենք, որ Զինված ուժերին հասարակության հատկացրած նյութատեխնիկական և ֆինանսական միջոցները քաղաքացիների սոցիալական, կրթական, առողջապահական և մյուս ոլորտներից վերցված և, անվտանգության ապահովման առաջնահերթությունից ելնելով մեզ տրամադրված ռեսուրսներ են:

Իրականությունը հայ զինծառայողի բարոյահոգեբանական պատրաստությանը, դաստիարակությանը, վարժվածությանը, կարգապահությանը և ֆիզիկական կոփվածությանը ներկայացնում է նոր, շատ ավելի խիստ պահանջներ:

Որքան էլ հզոր ռազմական տեխնիկա և մեծաթիվ անձնակազմ ունենաս, միևնույնն է, դատապարտված ես ձախողման, եթե բանակումդ չի տիրում անհրաժեշտ արդարության, նվիրվածության և համախմբվածության մթնո-

լորտ: Այս հատկանիշները չեն ձևավորվում ինքնին, այլ կախված են առկա բացասական երևույթները կամ դրանց վերապրուկները արմատախիլ անելուն և դրական դրսևորումները ամրապնդելուն ուղղված ամենօրյա աշխատանքի հաջողությունից:

Թվարկված մարտահրավերներին դիմագրավողն ու առկա խնդիրները հաջողությամբ լուծողը պաշտպանության համակարգի անձնակազմն է: Ուստի կարևոր եմ համարում ՀՀ Պաշտպանության նախարարի տեսլականում նշված 5-րդ և 6-րդ առաջնահերթությունների իրագործումը հնարավորինս սեղմ ժամկետներում: Որպես Զինված ուժերի ղեկավարության, պետական ու հասարակական վերահսկողության ու հոգածության առարկա պետք է երաշխավորվի բոլոր կարգերի զինծառայողների իրավունքների պաշտպանության, թիկունքային, նյութատեխնիկական և բժշկական պատշաճ ապահովումը:

Այո՛, բանակի բարոյահոգեբանական պատրաստվածությունը չի լինի բարձր մակարդակի վրա, եթե զինծառայողների համար չլինեն սոցիալական ապահովման պատշաճ պայմաններ՝ սկսած բնակարանային ապահովման խնդրից, արժանավայել դրամական բավարարումից, հանգստի ու ժամանցի պայմաններից և վերջացրած բուժապահովմամբ:

Հրատապ լուծում է պահանջում ծառայության մեջ գտնվող և նախկին զինծառայողների ու քաղծառայողների, զինվորական հաշմանդամների, զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների համընդգրկուն սոցիալական ապահովման ծրագրերի իրականացումը: Շատերի համար ստեղծվել է մի անհասկանալի իրադրություն, և նրանք իրենց պետության կողմից խաբված են զգում, քանի որ բազմաթիվ ընտանիքներ 10, 20 և ավելի տարի հերթագրված են և հույս ունեն, որ մի օր էլ բնակարանային ապահովման իրենց հերթն էլ կհասնի... ու պարզվում է, որ բյուջեում անհրաժեշտ գումար չկա:

Արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական աջակցության ծրագրով կուտակված խնդիրները չեն լուծվում, որովհետև նշված կարգախմբի անձինք ուղղակի ֆինանսապես ի վիճակի չեն ձեռք բերելու բնակարան, քանի որ նրանց համար այն մատչելի ու հասանելի չէ: Կարելի է փաստել, որ այսօր շատ զինվորականներ տրամադրվող վարկերի, ամսական, տարեկան վճարումների մասին ունեն բանկային ու ֆինանսական ոլորտի աշխատողներից ոչ պակաս գիտելիքներ, և հաշվարկները ցույց են տալիս՝ այդ ծրագիրը, մեղմ ասած, իրենց համար չէ:

Իհարկե, ինչպես արդեն նշվել է, պետության տնտեսական ներուժի համեմատությամբ մեծաթիվ բանակ ունենալու հանգամանքը ինքնին առաջ է բերում ֆինանսական սահմանափակումներ, բայց դա չի նշանակում, թե պետք է անտեսվեն, հետին պլան մղվեն ու մոռացվեն պաշտպանության ոլորտի անձնակազմի նվազագույն սոցիալ-կենցաղային խնդիրները: Հայրենիքն սկսվում է ընտանիքից, քանի որ ընտանիքն է երկրի միավոր բջիջը: Եթե զինծառայողի ընտանիքը անապահով է, չունի տուն, բնակարան, և հույս էլ չկա, որ երբևիցե կունենա, ապա հարց է առաջանում, թե ի՞նչն է պաշտ-

պանում զինծառայողը՝ հայրենիք, որտեղ նա արժանի չէ բնակարան-տուն ունենալու: Այստեղ Հայրենիք–զինծառայող կապում առաջանում է ճեղքում, անդունդ: Պետք չէ մոռանալ նաև, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն «Զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» 8-րդ հոդվածի պահանջների, ի թիվս այլ սահմանափակումների, զինծառայողն իրավունք չունի կատարելու այլ վճարովի աշխատանք, հետևաբար նա, դրամական բավարարումից բացի, այլ եկամուտներ չի կարող ունենալ:

Վստահ եմ, որ խելամիտ և արդարացի լուծումների, «վատնող արտահոսքը» կասեցնելու միջոցով հնարավոր է գտնել օպտիմալ լուծումներ:

Առաջարկում եմ ուսումնասիրել նշված խնդիրների լուծման փորձ ունեցող առաջավոր երկրների փորձը: Օրինակ՝ Ճապոնիայում 2016 թվականից մեկնարկել է այնպիսի բնակարանների կառուցումը, որոնք սեյսմակայուն են (ինչը կարևոր է նաև մեր տարածաշրջանի համար) և շատ մատչելի են՝ 1 բնակարանի արժեքը միջինը մոտ 2000 ԱՄՆ-ի դոլար է, կառուցվում են միջինը 2 ժամվա ընթացքում, երկարակյաց են՝ շուրջ 300 տարի ժամկետով: Կարելի է ուսումնասիրել և նպատակահարմարության դեպքում համապատասխան տեխնոլոգիաները ներդրել մեր երկրում. նվազագույն միջոցներ ծախսելով՝ լուծել տարիներ շարունակ կուտակված զգայուն ու ցավոտ խնդիրը:

Այսպիսով՝ պաշտպանության համակարգի գործառույթները պետության մակարդակով հստակ, պատշաճ և համակարգված կերպով իրականացնելու դեպքում մենք կունենանք իրենց մարտունակությունը պահպանող ու մարտական խնդիրների կատարմանը միշտ պատրաստ զորամասեր, ստորաբաժանումներ, ինչի շնորհիվ համոզված եմ՝ հետ կմղվեն հակառակորդի բոլոր տեսակների ոտնձգությունները: Այդ դեպքում մեծ է հավանականությունը, որ հակառակորդը ձեռնպահ կմնա մարտական գործողություններ սանձազերծելուց, այսինքն՝ կհասնեք այն բանին, որ կզսպենք հակառակորդին մեզ համար շահեկան պայմաններով:

Տեղին եմ համարում մեջբերել չինացի զորավար Սուն Ցզիի խոսքը. «Պարտադիր չէ հակառակորդի նկատմամբ ունենալ քանակական գերազանցություն: Բավական է պահպանել յուրային զորքի ամբողջականությունը, իսկ հակառակորդին մասերի բաժանել, որպեսզի հետո ջախջախես նրանց առանձին-առանձին: Դրան կարելի է հասնել տարբեր տեղերում հակառակորդի համար տեսանելի լինելու պատրանք առաջացնելով, ապակողմնորոշելով նրան, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի նրան, որ հակառակորդը կմասնատի իր ուժերը: Այդպես կարելի է ցանկալի ուղղությունում հասնել քանակական գերազանցության»[2]:

[2] Տես *Սուն Ցզի*, Երկ ռազմարվեստի մասին (http://grapaharan.org/%D4%B5%D6%80%D5%AF_%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF%D5%AB_%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6):

Իբրև ելակետային սկզբունք՝ պետք է վերջապես ընդունել մի պարզ ճշմարտություն. պաշտպանության համակարգի միջոցառումների ծավալը և բովանդակությունը, ազգային անվտանգության սպառնալիքների ու պահանջների ճշտումը, դրանց չեզոքացման կամ նվազեցման միջոցների որոշումը չի կարելի վստահել որևէ երրորդ կողմի՝ լինի դա պետություն, ռազմաքաղաքական դաշինք, թե օտարազգի մասնագետների խումբ: Այդ աշխատանքը պետք է կատարվի միմիայն մեր ուժերով:

ՀՀ ԴԱՇԻՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Գ. ՂԵՎՈՆԴՅԱՆ, ԵՊՀ Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու

Այսօր աշխարհում միջազգային անվտանգությունը դարձել է բարդ ու բազմաբաղադրիչ համակարգ, որտեղ պետություններն իրենց անվտանգությունն ապահովում են ինչպես անհատական, այնպես էլ դաշինքային ձևաչափերում: Հայաստանն այս առումով բացառություն չէ: Որպես պետականության կարճաժամկետ փորձ ու անվտանգության լրջագույն մարտահրավերներ ունեցող երկիր, Հայաստանը՝ անկախության ձեռքբերման հենց առաջին տարիներից փորձում է հնարավորինս արդյունավետորեն օգտագործել առկա ներուժը և անհատական ու հավաքական-դաշինքային ձևաչափերում ամենատարբեր քայլեր է ձեռնարկում համակողմանիորեն ապահովելու իր անվտանգությունն ու կայունությունը: Այս համատեքստում իր առանցքային դերն ու նշանակությունն ունի ՀՀ դաշինքային քաղաքականությունը, որը տեսահայեցակարգային առումով բխում է «հավաքական անվտանգության» հայեցակարգից, իսկ գործնականում արտահայտվում է ՀԱՊԿ-ին անդամակցությամբ և ՆԱՏՕ-ի հետ ակտիվ գործակցությամբ:

Դեռևս 20-րդ դարի ինսունականների սկզբից մեկնարկած ու 21-րդ դարում նոր որակ ստացած նախ ԱՊՀ-ի, ապա արդեն նոր կազմակերպության՝ ՀԱՊԿ-ի ֆորմատում՝ ՀՀ-ի դաշինքային քաղաքականությունն այսօր իր առջև կոնկրետ խնդիրներ ու նպատակներ ունի: Իրավաքաղաքական ու հայեցակարգային առումով այդ նպատակներն ու խնդիրները արտացոլումը ստացել են ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգում և ՀՀ ռազմական դոկտրինում, ինչպես նաև ՀԱՊԿ-ի հիմնադիր պայմանագրում ու հայեցակարգում:

Նշենք, որ իրավաքաղաքական առումով ՀԱՊԿ-ն միջազգային ռազմաքաղաքական կազմակերպություն է՝ դաշինք: Հայեցակարգային առումով նրա գործունեությունն ածանցվում է «հավաքական ինքնապաշտպանության/անվտանգության» հայեցակարգից, ըստ որի դաշինքի անդամ-երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում (այդ թվում՝ ռազմական) դիտարկվում է որպես հարձակում ողջ դաշինքի վրա, հետևաբար դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր, այդ թվում՝ ռազմական միջոցների ներգրավմամբ համատեղ քայլեր ձեռնարկել՝ հակադարձելու ընդհանուր սպառնալիքին: Նշյալ սկզբունքը արտացոլված է

դաշինքի հիմնարար փաստաթղթերում՝ պայմանագրում (2-րդ և 4-րդ հոդվածներ) և հայեցակարգում, որոնք նաև նախանշում են դաշինքի ու նրա անդամների քաղաքական վարքը միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում, որոշակիացնում ՀԱՊԿ-ի նպատակներն ու խնդիրները, զարգացման տեսլականը:

Այս պարագայում հարկ է մեկ կարևոր փաստի վրա ուշադրություն հրավիրել. ըստ ՀԱՊԿ-ում ընդունված գործող կարգի՝ կազմակերպության հիմնարար պայմանագրի (2 և 4 հոդվածները) գործարկման ենթակա են միայն եթե կազմակերպության անդամ և ագրեսիայի ենթարկված պետությունը օգնության ու օժանդակության խնդրանքով պաշտոնապես դիմում է դաշինքի մյուս երկրներին:

Նշյալը քաղաքական առումով որոշակի ռիսկեր է պարունակում կազմակերպության՝ որպես հավաքական անվտանգության ապահովման մարմնի ինստիտուցիոնալ արդյունավետության տեսանկյունից: Մյուս կողմից՝ սա յուրահատուկ ճկուն մեխանիզմ է, որն առանձին դեպքերում կազմակերպության որոշ անդամների փաստորեն հնարավորություն է տալիս չգործարկելու կազմակերպության շրջանակներում իրենց դաշնակից համարվող անդամ երկրի նկատմամբ ստանձնած պարտավորությունները:

Հարկ է նշել, որ ՀԱՊԿ-ի անդամ երկրներից միայն ՀՀ-ն է, որ դեմ առ դեմ կանգնած է ռազմական հակամարտության սրման վտանգի առջև: Կենտրոնասիական երկրները հիմնականում ունեն ներքին անկայունության հաղթահարման, սահմանային անվտանգության ու թմրանյութերի ապօրինի տարածման մարտահրավերներին դիմագրավելու խնդիրներ: Բելառուսը ՀԱՊԿ-ն ավելի շուտ դիտարկում է որպես ներկա իշխանությունների ռազմաքաղաքական հենք: ՌԴ-ն ՀԱՊԿ-ն դիտարկում է որպես հետխորհրդային տարածաշրջանում ռազմաքաղաքական ներկայության ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմ: Այս համատեքստում փաստացիորեն ՀՀ-ն ՀԱՊԿ-ի միակ երկիրն է որը այդ կառույցը դիտում է որպես դասական ռազմաքաղաքական դաշինք, հավաքական անվտանգության հայեցակարգի արտացոլում: Դա է նաև այն պատճառը, որ ՀՀ-ի համար կարևոր է, որ ՀԱՊԿ-ն գործի լիարժեք համաձայն իր առջև դրած սկզբունքների ու կանոնադրական նորմերի: Սակայն ամեն բան չէ, որ այս ֆորմատում պարզ է ու հստակ:

Չնայած հայեցակարգային ու ֆորմալ-իրավական առումով ՀԱՊԿ-ն հավաքական անվտանգության համակարգ է, սակայն քաղաքական առումով այն ընդհանուր խորհրդային անցյալ ու անվտանգության տարբեր մարտահրավերներ ունեցող երկրների միություն է, որը ինստիտուցիոնալ կայացման դեռ երկար ճանապարհ պետք է անցնի: Հենց այս համատեքստում նշենք, որ ՀԱՊԿ-ն իր գործառման ներկա փուլում հանդիպում է մի շարք մարտահրավերների, որոնցից մենք կառանձնացնենք մի քանիսը.

- կազմակերպության անդամների ազգային շահերի՝ միմյանցից օբյեկտիվորեն տարբերվող բաղադրիչներ,
- վտանգների ու սպառնալիքների ընդհանուր ընկալումների տարբերություններ,

- հավաքական միջոցներով դրանց արծագանքելու ոչ միշտ առկա պատրաստակամություն,
- երրորդ երկրների հետ հարաբերություններում անդամ երկրների՝ միմյանցից տարբերվող շահեր ու քաղաքականություն,
- արտաքին հարթակներում պատշաճ համագործակցության բացակայություն և այլն:

ՀԱՊԿ-ի քաղաքական դերակատարման արդի կարևորագույն մարտահրավերներից մեկը նրա անդամների ազգային շահերի ու դրանց վերաբերյալ պատկերացումների՝ երբեմն տարբերվող մոտեցումներն են: Լինելով պետական անվտանգության ու զարգացման ելակետային մոտեցումների հավասարակշռված ամբողջություն՝ ազգային շահերն առաջին հերթին պետության անվտանգության, զարգացման ու տնտեսական հեռանկարի ուղենիշներ են, որ ուրվագծում են նրա քաղաքականության հիմքերը, շեշտադրումները, դինամիկան: Նշյալը ուղղակիորեն առնչվում է նաև դաշինքի անդամների՝ այս կամ այն պետության հետ գործակցել-չգործակցելուն: Այս դիրքերից ՀԱՊԿ-ում առկա շահերի համատեղելիության վերաբերյալ մոտեցումներն է՛լ ավելի իրատեսական ու առարկայական կլինեն, եթե դրանք դիտարկվեն ՀՀ-ի ու ՀԱՊԿ-ի նրա դաշնակիցների և Ադրբեջան–ՀԱՊԿ երկրներ շփումների համատեքստում, որի կարևորագույն ցուցանիշներից են տնտեսական կապերը, մասնավորապես՝ ապրանքաշրջանառությունը.

Դիցուք. ՀԱՊԿ-ի անդամ երկրներից ՌԴ-ի հետ ՀՀ-ի և Ադրբեջանի 2014 թ. ապրանքաշրջանառությունը կազմել է 1,4 մլրդ/4,0 մլրդ, որտեղ Ադրբեջանի ցուցանիշը մոտ 3,5 անգամ ավելի մեծ է Հայաստանի ցուցանիշից: Նման վիճակ է նաև 2015 թ. և 2016 թ. ցուցանիշների պարագայում, որտեղ Ադրբեջանի ապրանքաշրջանառությունը, համապատասխանաբար, 2,5 և 1,4 անգամ ավելի է: Մոտավորապես համանման իրավիճակ է նաև Ղազախստանի ու Բելառուսի հետ ապրանքաշրջանառության հարցում: Ղազախստանի հարցում 2014 թ., 2015 թ., 2016 թ. թվականներին ապրանքաշրջանառությունը ոչ հօգուտ ՀՀ-ի, համապատասխանաբար, եղել է 33,4, 27, 20,7 անգամ:

Ներկայացված վիճակագրությունը փաստում է, որ Բելառուսի, Ղազախստանի, այնպես էլ ՌԴ-ի հետ Ադրբեջանի ապրանքաշրջանառությունը ՀՀ-ի համեմատությամբ երբեմն բազմապատիկ անգամ ավելի է: Իսկ սա կարևոր ցուցանիշ է, որ ՀՀ-ն պետք է հաշվի առնի ՀԱՊԿ-ի իր դաշնակիցների հետ շփումներում: Ներկայումս ՀԱՊԿ-ի երկրները գործակցում են ՀՀ-ի հետ, միաժամանակ Ադրբեջանը դիտարկում են որպես ռազմավարական գործընկեր:

Քաղաքական իմաստով սա նշանակում է, որ վերջին տարիներին, ինչպես միջազգային տնտեսական միտումներով, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված տնտեսական անկում արձանագրած ՀԱՊԿ-ի որոշ երկրներ հայ-ադրբեջանական հակադրության պայմաններում դժվար ընտրության վիճակում են հայտնվելու. այստեղ կշեռքի նժարներից մեկին նրանց իրավաքաղաքական պարտավորություններն են ՀԱՊԿ-ի ձևաչա-

փում, մյուսին՝ տնտեսական կարևոր գործընկերոջ հետ շփումները կորցնելու հնարավոր հեռանկարը:

ՀԱՊԿ-ի գործառման ներկա փուլում կարևոր հաջորդ մարտահրավերը անդամ երկրների ռազմատեխնիկական գործակցությունն է հատկապես դաշինքի անդամ չհանդիսացող երրորդ երկրների հետ: Տեսականորեն հավաքական անվտանգության համակարգերն ստեղծվել են, որպեսզի պետական անվտանգության, հատկապես՝ ռազմական անվտանգության խնդիրներին ու սպառնալիքներին միացյալ, առավել արդյունավետ ու պակաս ծախսատար լուծումներ տան, արձագանքեն սպառնալիքներին՝ նվազեցնելով արտակարգ կամ ռազմական իրավիճակներում կորուստների քանակը:

ՀԱՊԿ-ի շրջանակներում ՀՀ-ի ռազմական անվտանգության խնդիրների լուծման առումով պաշտոնական Երևանը հնարավորություն ունի հավաքական, ինչպես նաև ՀԱՊԿ-ի անդամ որևէ երկրի հետ (մեր դեպքում՝ հատկապես ՌԴ-ի) անհատական գործակցության միջոցով իրականացնելու ցամաքային և օդային սահմանների համատեղ պաշտպանություն (միացյալ հակաօդային պաշտպանության կազմակերպում, արտոնյալ պայմաններով ռազմական կրթության կազմակերպում): Այս ամենի մեջ առանձնահատուկ կարևոր դերակատարում ունի ՌԴ ԶՈՒ-ի 102-րդ ռազմաբազան* և հայ-ռուսական միացյալ զորախումբը: Վերջինիս վերաբերյալ համաձայնագիրը վավերացվել է 2017 թ. հունիսին ՌԴ-ի Պետական դումայի և 2017 թ. հոկտեմբերին ՀՀ ԱԺ-ի կողմից:

Մյուս կողմից՝ ՀԱՊԿ-ն իր անդամներին հնարավորություն է ընձեռում ակտիվ գործակցել ռազմական ոլորտում՝ առավել հարմար պայմաններով զենք ու զինտեխնիկա ձեռք բերել, վերանորոգել ու արդիականացնել այն (հիմնականում ՌԴ-ում), տարաբնույթ թիրախայնության ու տարբեր ներգրավվածությամբ զորավարժություններ անցկացնել, գործընկերային ու դաշնակցային պայմաններով ռազմական կրթություն ստանալ ռազմական բուհերում, ճգնաժամային կառավարման հավաքական միջոցառումներ իրականացնել, գործակցել ՀՕՊ-ի, ռադիոհետախուզության ոլորտներում, ռազմական սրացումների ժամանակ դրանք հարթել արագ արձագանքման օպերատիվ ուժերի հնարավոր ներգրավմամբ, ռազմական կարևորության տեղեկություններ փոխանակել և այլն:

---

* 2011 թ. ռազմաբազայի մասին պայմանագիրը վերանայվեց, և ռուսական զորքերի՝ ՀՀ-ում մնալու ժամկետը երկարաձգվեցին մինչև 2044 թ.: 102-րդ ռուսական ռազմաբազայում, ըստ տարբեր տվյալների, իրենց ծառայությունն են անցնում 3300–5000 զինծառայող (առավել հանգամանորեն տես “The Military Balance 2014”. The International Institute for Strategic Studes. London, 2014, P. 171, ինչպես նաև «102-я военная база Группы российских войск в Закавказье». «Кавказский Узел», 03.04.2015 (http://www.kavkaz-uzel.ru/articles/152315/)): Ռազմաբազայում առկա է ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանողական զինտեխնիկայի պատշաճ քանակ (առավել հանգամանորեն տես «Группа Российских Войск в Закавказье (ГРВЗ) (Азербайджан, Армения, Грузия)» (http://www.waronline.org/write/world-military/russian-military-abroad/transcaucasia/)):

ՀԱՊԿ-ի ընձեռած վերոնշյալ հնարավորությունները ՀՀ-ի կողմից ավանդաբար դիտվել են որպես հարևան Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի ռազմաքաղաքական զսպման կարևոր գործիք: Սակայն իրական քաղաքականության մեջ իրողությունները քիչ այլ են. ՀՀ-ի հետ զուգահեռ ՀԱՊԿ-ի որոշ գործընկերներ խորացված գործակցություն են իրականացնում ռազմատեխնիկական ոլորտում Ադրբեջանի հետ: Փաստ, որ որևէ կերպ չի համապատասխանում ՀՀ ազգային շահերի տառին ու ոգուն:

Օրինակ՝ «Զենքի վաճառքի միջազգային կենտրոն»-ի տվյալներով՝ 2009–2016 թթ. ընթացքում Ադրբեջանն ընդհանուր առմամբ ՌԴ-ից 4,07 մլրդ*, իսկ Բելառուսից 611,2 մլն** դոլարի զենք ու զինամթերք է[1] ձեռք բերել: Զինտեխնիկայի նշյալ խմբաքանակի մեջ մտնում են ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանական միջոցներ: Այս առթիվ իր մտահոգությունը հայկական կողմը բազմիցս է հայտնել, սակայն ստացել է հիմնականում զենքի առևտուրը որպես բիզնես դիտարկելու ռուսական կողմի փաստարկները: Ավելին՝ ՀՀ-ում Բելառուսի դեսպանը վերջերս հայտարարեց, թե ՀԱՊԿ-ում չկա որևէ նորմ, որը նրանց կարգելեր «Պոլոնեզ» տիպի հրթիռային համակարգերի վաճառքը Ադրբեջանին:

Եթե ռազմատեխնիկական գործակցության քննարկվող հարցը վերլուծենք միջազգային-քաղաքական համատեքստում, ապա, լինելով ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր և բազմիցս հայտարարելով[2], որ ԼՂ հակամարտությունն ունի միայն խաղաղ լուծում, ՌԴ–Ադրբեջան ռազմատեխնիկական գործակցությունը Բաքվի կողմից կարող է դիտվել սեփական ռևանշիզմի բավարար-

---

* ՌԴ-ից ծանր սպառազինության խոշոր խմբաքանակների առաքումը Ադրբեջան սկսվել է 2006–2007 թթ. «Տ-72» տանկի 62 միավոր խմբաքանակով: Հաջորդ խոշոր պայմանագիրը նախատեսում էր «Ֆավորիտ» Ս-300 ԶՀՀ-ների 2 դիվիզիոնի վաճառքն Ադրբեջանին 300 մլն դոլարով: Ընդհանուր առմամբ 2006 թ., վերոնշյալ տանկերից ու ԶՀՀ-ներից բացի, ՌԴ-ն Ադրբեջանին է վաճառել 94 միավոր «Տ-90» տանկ, 91 «ՀՄՄ-3» զրահափոխադրիչ, 24 «ԲՏՌ-80», 18 2Ս19 Մստա-Ս, 18 միավոր «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, 18 միավոր «Սոլնցեպյոկ» ծանր հրանետային համակարգ, 24 միավոր «Մի-24» գրոհային ուղղաթիռ, ավելի քան 60 միավոր «Մի-17» ուղղաթիռ և այլն (առավել հանգամանորեն տես «ЦАМТО / Центр анализа мировой торговли оружием» կայքը (http://www.armstrade.org)):

** 2005–2006 թթ. Բելառուսը Ադրբեջանին է վաճառել 60 հատ «Տ-72» տանկ, ևս 62-ը՝ 2012-ին: 2008–09 թթ. առաքվել է 12 միավոր 203 մմ-անոց 2Ս7 «Պիոն» հրանոթ, 2010-ին՝ 30 միավոր 122-մմ «Դ-30» հաուբից, 2009–2012 թթ.՝ «Սու-25» 6 կործանիչ: Բելառուսի ձեռնարկությունները նաև արդիականացրել են ադրբեջանական «Բուկ» Մ1, «Օսա» և «Պեչորա» տիպի զենիթահրթիռային համակարգերը (առավել հանգամանորեն տես նույն տեղում):

[1] Տես նույն տեղում:

[2] Տես «Глава Генштаба РФ: Россия выступает за мирное урегулирование Нагорно-карабахского конфликта». «Gnews», 07.04.2014 (https://news.gisher.ru/ru / politics / glava-genshtaba-rf-russia-vystupaet-za-mirnoe-uregulirovanie-nagorno-karabaxskogo-konflikta.html):

ման նպաստավոր գործոն[*]՝ նրա վարքը դարձնելով է՛լ ավելի անկանխատեսելի ու տարածաշրջանային կայունության ապահովման տեսանկյունից առավել վտանգավոր:

Սակայն հարկ է նշել, որ միջազգային իրավունքի տեսանկյունից ինչպես ՌԴ-ն, այնպես էլ ՀԱՊԿ-ի անդամ-երկրներից որևէ մեկը Ադրբեջանի ու ՀՀ-ի հետ ռազմատեխնիկական համագործակցության առումով որևէ սահմանափակող պարտավորություն չունի: Ավելին՝ ՀԱՊԿ-ից դուրս նման սահմանափակումներ չկան, բացառությամբ այն երկրների, որտեղ օրենսդրորեն արգելված է ԼՂ հակամարտության մեջ ներգրավված կողմերին զինտեխնիկա վաճառելը:

Քաղաքական առումով զենք վաճառելը պետությանը, որը ռազմական հակադրության մեջ է քեզ գործընկեր երկրի հետ, փաստում է այն մասին, որ գործարքի կողմ երկրների միջև առկա քաղաքական երկխոսությունն ունի «ռազմավարական» մակարդակ[3]: «Ռազմավարական» եզրույթը միջպետական փոխհարաբերությունների այնպիսի որակ և վիճակ է, երբ դրա կողմ պետությունների փոխադարձ կարևորությունն անփոխարինելի է, իսկ տնտեսական, ռազմական, մշակութային, սոցիալ-ժողովրդագրական և այլ ոլորտներում գործակցությունը՝ անփոխարինելի: Ռազմատեխնիկական ակտիվ շփումներ ունենալով Ադրբեջանի հետ՝ ՌԴ-ն երկկողմ և տարածաշրջանային ձևաչափերում նաև հնարավորություն է ստանում քաղաքական և ռազմատեխնիկական գործիքներ ստանալ՝ ազդելու Բաքվի արտաքին քաղաքական վարքի որոշ դրսևորումների վրա: Նշենք, սակայն, որ տարածաշրջանի երկրների հետ ռազմատեխնիկական գործակցության ակտիվացումը մյուս կողմից նաև անուղղակիորեն նպաստում է սպառազինությունների մրցավազքին, որը, հաշվի առնելով ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների հնարավորությունները, տարածաշրջանային ուժային հարաբերակցությունը խախտելու ռիսկեր է պարունակում[4]:

ՀԱՊԿ-ի անդամ-երկրների ազգային շահերի ձևավորման ու մեկտեղման կարևոր բնութագրիչներ են անդամ երկրների քաղաքակրթական ընկալում-

---

[*] ՌԴ-ն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ միակ երկիրն է, որ զենք է վաճառում ԼՂ հակամարտության կողմերին:

[3] Տես «МИД РФ: Азербайджан - наш важный стратегический партнер на Южном Кавказе и в Каспийском регионе». «PanARMENIAN.Net», 09.07.2016 (http://www.panarmenian.net/rus/news/216611/):

[4] ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների հարաբերակցությունը դոլարային համարժեքով ունի հետևյալ տեսքը. 2011 թ.՝ համապատասխանաբար՝ 391 մլն և 1,7 մլրդ, 2012 թ.՝ 381 մլն և 1,7 մլրդ, 2013 թ.՝ 445 մլն և 1,9 մլրդ, 2014 թ.՝ 458 մլն և 1,7 մլրդ, 2015 թ.՝ 447 մլն և 1,7 մլրդ, 2016 թ.՝ 431 մլն և 1,4 մլրդ, 2017 թ.՝ 440 մլն և 1,5 մլրդ, 2018 թ.՝ 518 մլն և 1,6 մլրդ (առավել հանգամանորեն տես *Nan Tian, Aude Fleurant, Pieter D. Wezeman and Siemon T. Wezeman.* Trends in World Military Expenditure, 2016. “SIPRI Fact Sheet”, April 2017 (https://www.sipri.org/sites/default/files/Trends-world-military-expenditure-2016.pdf), նաև՝ «SIPRI-ն՝ ադրբեջանական քարոզչության /ա/կամա գործիք»: «panorama.am», 24.10.2017 (https://www.panorama.am/am/news/2017/10/24/SIPRI-ադրբեջանական-քարոզ/1854947)):

ներն ու արժեքաբանության ընդհանրությունը, «վտանգի» ու «անվտանգության» պատկերացումները, զարգացման տեսլականների ուրվագծումը: Քաղաքական իրականության մեջ դրանք արտացոլվում են պետությունների, այդ թվում՝ ՀԱՊԿ-ի անդամ երկրների՝ միջազգային տարբեր կազմակերպություններին անդամակցելու նախապատվություններում, այդ կառույցներում նրանց որդեգրած մոտեցումներում, քվեարկություններում: Օրինակ՝ ՀԱՊԿ-ի ձևաչափում ՀՀ-ի դաշնակից համարվող երկրներ Ղազախստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը միաժամանակ «Իսլամական համագործակցության կազմակերպության» անդամներ են: Մյուս կողմից՝ նման կազմակերպությունների ձևաչափում և նրանց միջոցով պաշտոնական Բաքուն քարոզչական ակտիվ աշխատանք է տանում այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանության»[*], «ՀՀ-ի կողմից Ադրբեջանի հողերի բռանազավթման»[**] կեղծ թեզերի վերաբերյալ ընդհանուր մոտեցումներ մշակելու, միջազգային քաղաքական ու մշակութային տարբեր հարթակներում ու կազմակերպություններում քվեարկությունների ժամանակ միացյալ դիրքորոշմամբ հանդես գալու համար: Այս հարցում Բաքվին բավական գործուն աջակցություն են ցուցաբերում Թուրքիան, Պակիստանը, Սաուդյան Արաբիան:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ հայեցակարգային ու հռչակագրային առումով ՀԱՊԿ-ն հավաքական անվտանգության համակարգ է, որի գործունեությունը հիմնված է «հավաքական ինքնապաշտպանության» ու «անվտանգության» սկզբունքների վրա: Իրավական առումով լինելով ռազմաքաղաքական դաշինք՝ ՀԱՊԿ-ն, սակայն, ունի արարողակարգային ու ներքին կանոնադրային այնպիսի նորմեր, որոնցով էապես տարբերվում է ժամանակակից աշխարհում հավաքական անվտանգության ամենից գործուն համակարգից՝ ՆԱՏՕ-ից:

Չնայած ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական բաղադրիչների առանցքային դերակատարմանը, այնուամենայնիվ իրական քաղաքականության մեջ դաշինքների գործունեության անվտանգային բաղադրիչը անմիջական ու սոսնձող կապ է պետությունների՝ տնտեսական ու ֆինանսական ընդհանուր շահեր ունենալու առաջնահերթության միջև: Առանց ընդհանուր տնտեսական շահի գիտակցման՝ քաղաքական ու անվտանգային գործակցությունը սովորաբար թերի, խնդրահարույց է: Զարգացած ապրանքաշրջանառութ-

[*] Խոջալուի «ցեղասպանությանը» նվիրված հանդիպման ժամանակ կազմակերպության ղեկավարը նշեց, որ դա «ՀՀ-ի կողմից Ադրբեջանի հողերի անօրեն գրավման արդյունք է» (առավել հանգամանորեն տես “OIC Secretary General commemorates Khojaly Massacre”, 16.02.2017 (https://www.oic-oci.org/topic/?t_id=13169&ref=5769&lan=en)):

[**] Վերահաստատում է իր ընդունած նախորդ բանաձևերը, որոնք վերաբերում են ՀՀ-ի կողմից Ադրբեջանի հողերի գրավմանը և իր աշխատանքային խմբի շրջանակներում քննարկումներ է անցկացնում առկա իրավիճակի վերաբերյալ (այս մասին առավել հանգամանորեն տես “OIC Contact Groups on Palestine, Jammu And Kashmir, Sierra Leone and the Aggression of Armenia against Azerbaijan meet on the Sideline of the ACM in New York”, 21.09.2016 (https://www.oic-oci.org/topic/?t_id=11570&ref=4538 &lan=en)):

յունը, ակտիվ տնտեսական շփումներն առանցքային այն գործոններն են, որոնք, մի կողմից, ամրապնդում են կայացող, տարբեր աշխարհընկալում ունեցող և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների դաշինքները, մյուս կողմից՝ պայմաններ ստեղծում, որ դրանք առավել կենսունակ լինեն՝ ունենալով հստակ ուրվագծելի ու փոխշահավետ զարգացման հեռանկարներ, առաջնորդվելով դաշինքների համար ելակետային հավաքական անվտանգության դրույթով և փոխադարձ ռազմական օգնություն ցուցաբերելու պարտավորությամբ՝ դաշինքների (ՀԱՊԿ) անդամները, չնայած սահմանափակող ներքին նորմերի բացակայությանը, այնուամենայնիվ, ելնելով քաղաքական և դաշնակցային ոգու իրողություններից, երրորդ երկրների հետ ռազմատեխնիկական գործակցություն ծավալելու իրենց հնարավորություններն առաջին հերթին պետք է համաձայնեցնեն դաշինքի անդամ երկրների հետ և միայն այդ համատեքստում կայացնեն առավել հավասարակշռված որոշումներ, հավաքական անվտանգության դրույթների արդյունավետության ու կենսունակության առաջնային ցուցանիշը անդամ երկրների ազգային շահերի համադրելի մոտեցումներն են և դրանց հիմքով քաղաքական համակարգված վարքի դրսևորումը միջազգային կազմակերպությունների հարթակներում:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ,
ավագ գիտաշխատող

Արդի միջազգային ռազմաքաղաքական գործընթացների բնույթը, տարածաշրջանում անկանխատեսելիության բարձր մակարդակը, Հայաստանի անվտանգային միջավայրում առկա անորոշությունները ևս մեկ անգամ անհրաժեշտ են դարձնում վերհանել Հայաստանի ռազմական անվտանգության համար առկա մարտահրավերներն ու սպառնալիքները՝ դրանց կանխարգելման, դիմագրավման նպատակով կատարվելիք քայլերը վերագնահատելու տեսանկյունից: Ակնհայտ է, որ Հայաստանի շուրջ արդի զարգացումները, միջազգային գործընթացները նոր մարտահրավերներ են առաջացնում, որոնք որոշակի իրավիճակային զարգացումներում կարող են վերածվել ռազմական անվտանգության սպառնալիքի: Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցները և մեկուսացման քաղաքականությունը, Մերձավոր Արևելքում տեղի ունեցող զարգացումները, իսլամական ծայրահեղ արմատական կառույցների գործունեությունը, ռուս-ամերիկյան լարված հարաբերությունները, Ադրբեջանի ռազմականացումն ու ռազմական ագրեսիայի հավանականությունը, Հայաստանի սահմանին ռազմական գործողությունների հնարավոր ծավալումը, Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական դաշտում առկա գործընթացներն ու միտումները կարելի է դիտարկել այդ համատեքստում:

Մասնավորապես, Հայաստանի անվտանգային միջավայրի վրա ազդող այս գործոններից հարկ ենք համարում առանձնացնել Թուրքիայի գործոնը, ինչը թույլ կտա վերագնահատել այդ երկրում ընթացող ներքին գործընթացների ու արտաքին անվտանգային քաղաքականության միտումները, և դրանց հնարավոր ազդեցությունն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ Հայաստանի անվտանգության տեսանկյունից: Տվյալ պարագայում Հայաստանի ռազմական անվտանգության տեսանկյունից Թուրքիան դիտարկվում է ինչպես այդ երկրի ներքին ու արտաքին քաղաքական գործընթացների, այնպես էլ՝ թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության միտումների և մասնավորապես՝ այդ համատեքստում Նախիջևանի գործոնի տեսանկյունից:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Վերջին տարիներին Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքականությունն էական վերափոխումների է ենթարկվել, որոնք ինչպես արտաքին միջավարի, այնպես էլ ներքին համակարգային փոխակերպումների հետևանք են: Ակնհայտ է, որ Թուրքիայի ներքաղաքական և ներպետական դաշտում վերջին տարիներին տեղի ունեցած գործընթացներն էականորեն ազդում են ինչպես այդ երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունների սահմանման, այնպես էլ անվտանգային քաղաքականության վերաձևման վրա: Չափազանցություն չէ պնդել, որ արդի անվտանգային քաղաքականությունն ու արտաքին քաղաքականությունը ձևավորվում են առավելապես այդ երկրի ներքին իրողություններով, այսինքն՝ շատ դեպքերում ներքաղաքական գործոնների համախումբն է պայմանավորում դրանք: Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ազդող ներքին գործոնների դիտարկումն իրականացվել է երեք հիմնական բաղադրիչներով՝ *համակարգային-ինստիտուցիոնալ, արժեհամակարգային-գաղափարախոսական, ռազմական:*

Համակարգային-ինստիտուցիոնալ տեսանկյունից Թուրքիայում գրանցվել են այնպիսի վերափոխումներ, որոնք աննախադեպ էին հանրապետական Թուրքիայում: Առաջինը և ամենագլխավորը՝ բանակ–քաղաքացիական իշխանություն փոխհարաբերությունների հիմնավոր վերափոխումն ու բանակի քաղաքական դերակատարության թուլացումն էր: Քաղաքական իշխանությունների երկարատև ջանքերի արդյունքում բանակի դերակատարության թուլացումն էական ազդեցություն ունեցավ անվտանգային ու արտաքին քաղաքական նոր առաջնահերթությունների սահմանման ու դրանց անկաշկանդ իրականացման համար: Բանակը, որն ավանդաբար հանդիսանում էր քաղաքացիական իշխանություններին զսպող առանցքային ներպետական գործոններից մեկը, այլևս գտնվում է քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ներքո:

Մասնավորապես, զինվորականության դերի թուլացումը բերեց երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ քաղաքացիականների ինքնավստահության, քանի որ որպես զսպող, հակակշռող գործոն բանակի դերն այլևս չեզոքացված էր: Զինվորականության աշխարհաքաղաքական ու արտաքին քաղաքական մոտեցումներն ու ընկալումները նախկինում տեղավորվում էին քեմալիստական պաշտպանողական արտաքին քաղաքականության *(defensive foreign policy)* մեջ, որը հետոսմանյան հանրապետական Թուրքիայի ռազմաբյուրոկրատական էլիտայի ռազմավարական մտածողության անքակտելի մասն էր երկար ժամանակ[1]: Դրա իմաստը, որքան հնարավոր է, Թուրքիան տարբեր ռիսկերից ու արկածախնդրություններից հեռու պահելն էր: Պաշտպանողական արտաքին քաղաքականության մեջ առաջնայինը Թուրքիայի տարբեր ռիսկերով ու վտանգներով լեցուն աշխար-

[1] Տես *Murat Yeşiltaş*. The Transformation of the Geopolitical Vision in Turkish Foreign Policy. “Turkish Studies”, 2013, Vol. 14, N 4:

հագրական միջավայրում գտնվելու հանգամանքը և դրանով պայմանավորված երկրի միջազգային քաղաքականությունը ձևավորելու հարցում բանակի ակտիվ դերակատարության ստանձնումն էր՝ որպես առաջնային դերակատարի[2]: Այս ընկալումը պայմանավորված էր Սառը պատերազմի ժամանակաշրջանում Թուրքիայի ունեցած ռազմաքաղաքական, կարևոր պաշտպանական դերակատարությամբ և ագրեսիայի ենթարկվելու շարունակական վտանգով, ինչը թելադրում էր քեմալական պաշտպանական հայեցակարգի գերակայող լինելը:

Ինչպես իրավացիորեն նշում է թուրք հետազոտողներից մեկը՝ զինված ուժերը (այսուհետ՝ ԶՈՒ) հաճախ էին միջամտում արտաքին քաղաքականության ոլորտի քաղաքացիական իշխանությունների որոշումներին՝ երբեմն կանխելով դրանց իրականացումը[3]: Որպես օրինակներ կարելի է նշել 1990-ական թթ. սկզբին Ծոցի պատերազմին Նախագահ Թ. Օզալի նախաձեռնողական մոտեցումը և բանակի բարձրագույն հրամանատարության ընդդիմացումը: 1990-ականների կեսերին բարձրագույն հրամանատարությունը Գլխավոր շտաբի (այսուհետ՝ ԳՇ) պետի տեղակալ Չ. Բիրի նախաձեռնությամբ (ով ընկալվում էր որպես ԶՈՒ-ի արտգործնախարար) վարչապետ Ն. Էրբաքանի իսլամամետ արտաքին քաղաքականությանը հակադրեց Իսրայելի հետ ռազմաքաղաքական դաշինքի ձևավորումը[4]:

Զինվորականության դերակատարության թուլացմամբ հանդերձ «Արդարություն և զարգացում կուսակցությունը» (այսուհետ՝ ԱԶԿ) փոխեց նաև արտաքին քաղաքականության վրա նրանց ազդեցությունը՝ ձևավորելով սեփական արտաքին քաղաքական դիսկուրսն ու առաջնահերթությունները: Նոր աշխարհաքաղաքական, արտաքին քաղաքական տեսլականը (նաև անվտանգության) վերափոխեց ազգային պետության հայեցակարգը, փոխարինեց պետական ինքնության նկատմամբ քեմալական դիսկուրսը՝ վերափոխելով նաև Թուրքիայի միջազգային և տարածաշրջանային դերակատարությունները: ԱԶԿ իշխանության գալուց հետո քեմալական արտաքին քաղաքական հայեցակարգի «Խաղաղություն երկրում, խաղաղություն աշխարհում» *(Yurt'ta Sulh, Cihan'da Sulh)* և քեմալական աշխարհայացքի հիման վրա ձևավորվող պաշտպանողական արտաքին քաղաքական խոսույթի *(defensive foreign policy discourse)* գերակայությունն աստիճանաբար թուլացավ: Փոխարենը, երկրի ներսում ներքին համակարգային փոխակերպումներով հանդերձ՝ ԱԶԿ-ն նախկին քեմալական աշխարհաքաղաքական տեսլականը փոխարինեց Թուրքիայի՝ քաղաքակրթական ու իսլամական ինքնությամբ կառուցվող տեսլականի, որում ստանձնելիք դերակատարությունն

[2] Տես նույն տեղում:

[3] Տես *Selcuk Aydin.* The Changing Role and Position of Turkish Armed Forces in Turkish Foreign Policy, "Defence-in-Depht. Research from the Defence Studies Department, King's College London" (https://defenceindepth.co/2018/02/26/the-changing-role-and-position-of-turkish-armed-forces-in-turkish-foreign-policy/):

[4] Տես *Çevik Bir and Martin Sherman.* Formula for Stability: Turkey Plus Israel. "Middle East Quarterly", Fall 2002, Vol. 9, N 4:

ու բազմատարածաշրջանային ինքնությունն առաջնային էին[5]: Երկրի ներսում ԱԶԿ առաջարկած թուրքական ազգայնականության մեջ առաջնային դեր վերապահվեց իսլամին կամ ավելի շուտ՝ իսլամականությանը[6]:

Պետության արտաքին քաղաքական նախապատվությունների ձևավորման լիբերալ տեսության համաձայն՝ պետությունը ոչ թե դերակատար է, այլ ներկայացուցչական ինստիտուտ, որի միջոցով անհատների ու սոցիալական խմբերի նախապատվությունները և սոցիալական իշխանությունը վեր է ածվում պետական քաղաքականության: Անհատները, սոցիալական խմբերն իրենց նպատակներն իրագործելու համար դիմում են պետությանը, քանի որ անհատական վարքագծով հնարավոր չէ հասնել դրա արդյունավետ իրագործմանը[7]: Այսինքն՝ նաև արտաքին քաղաքականության մեջ պետության քաղաքականությունը պայմանավորված է անհատական կամ խմբային նախապատվությունների առաջնահերթությունից: Այս առումով, ըստ կոնստրուկտիվիզմի տեսության՝ պետության արտաքին քաղաքական նախապատվությունների ձևավորման վրա էական ազդեցություն ունեն էլիտայի կամ առաջնորդի անձնային հատկանիշները, ինքնությունը, արժեքները, համոզմունքներն ու աշխարհընկալումը, որոնց հիման վրա էլ ձևակերպվում ու մատուցվում է ազգային-պետական շահը: Պետության ու էլիտայի ինքնությունը կարևոր է դառնում միջազգային հարաբերություններում: Այս ամենը հանգեցնում է ինչպես քաղաքական մշակույթի վերափոխմանը, այնպես էլ, որոշ դեպքերում նաև, դրանից բխող ռազմական մշակույթի կերպափոխման: Ինչպես գտնում են քննադատական կոնստրուկտիվիզմի հետևորդները՝ պետությունների ինքնությունները կայուն և անփոփոխ չեն, զարգանում և վերամշակման են ենթարկվում մշտապես, ինչը տեղի է ունենում արտաքին ու անվտանգային քաղաքականության միջոցով: Պետության ինքնությունը մշտապես կազմավորվում և պահպանվում է արտաքին և անվտանգային քաղաքականության իրականացմամբ[8]:

ԱԶԿ-ն աստիճանաբար փոխեց ոչ միայն Թուրքիայի աշխարհաքաղաքական տեսլականն ու արտաքին քաղաքականության ընկալումները, այլև ձևավորեց նոր անվտանգային ինքնություն *(security identity),* որն իր մեջ ամբողջացնում էր, մի կողմից, ավանդական ընկալումները, մյուս կողմից՝ այնպիսի նոր իրողություններ, ինչպիսիք են՝ Թուրքիայի տարածաշրջանային հավակնություններն ու վերապահվող պատասխանատվությունը, տարածաշրջանային առաջնորդությունը: Երկրում տեղի ունեցած ինստիտուցիոնալ, օրենսդրական, արժեքային վերափոխումները կերտեցին անվտանգության

[5] Տես *Սուրատ Յեշիլտաշ,* Նշ. աշխ.:

[6] Տես *Cenk Saraçoğlu, Özhan Demirkol.* Nationalism and Foreign Policy Discourse in Turkey Under the AKP Rule: Geography, History and National Identity. “British Journal of Middle Eastern Studies”, 2015, Vol. 42, Issue 3:

[7] Տես *Andrew Moravcsik.* Taking Preferences Seriously: A Liberal Theory of International Politics. “International Organization”, 1997, Vol. 51, Issue 4:

[8] Տես *David Campbell.* Writing Security: United States Foreign Policy and the Politics of Identity. Minneapolis, 1998, PP. 1–13:

նոր ինքնություն, որը էականորեն տարբերվում էր անվտանգության քեմալական ընկալումներից: ԱԶԿ-ն Թուրքիայի անվտանգության ավանդական պատկերացումները (քրդական հիմնախնդիր, տարածքային մասնատման վտանգ, ռազմական մեծ ներուժի ապահովում) կարողացավ սինթեզել այնպիսի նոր ընկալումների հետ, ինչպիսիք են տարածաշրջանային առաջնորդությունը, ակտիվ ներգրավվածությունն ու պատասխանատվությունն իր հարակից տարածաշրջանների անվտանգության համակարգերում, տարածքային հավակնությունները և այլն:

Այս համատեքստում ուշագրավ է թուրքական բանակի դերի վերաիմաստավորման խոսույթը: Անխուսափելիորեն Թուրքիայի իշխանությունների՝ արտաքին քաղաքականության ու աշխարհաքաղաքական տեսլականի վերասահմանման մեջ վերափոխվում է նաև թուրքական բանակի նոր առաքելության շրջանակը: ԱԶԿ գլխավոր քարտուղար Մ. Շահինի՝ 2018 թ. փետրվարի 21-ին Աֆրինի ռազմագործողության[*] (Չիթենու ճյուղ) կապակցությամբ հնչեցրած միտքը, որ «*ոչ միայն Անատոլիայի և Թրակիայի, այլև ողջ ճնշված և տուժված ժողովուրդների, իսլամական համայնքի վերջին հայրենիքն այս հողն է (Թուրքիան–Լ.Հ), վերջին բանակը թուրքական բանակն է*»[9], բնութագրական է այս առումով: Մի քանի անգամ Ռ. Թ. Էրդողանը, իր ելույթներում ընդգծելով այդ շեշտադրումը, թուրքական բանակը ներկայացրել է որպես նաև տարածաշրջանում ճնշվածների ու տառապյալ ժողովուրդների պաշտպանության երաշխավոր[10]: Այսպիսով՝ բանակին վերագրվում է նաև քաղաքակրթական ու արժեքային նոր առաքելություն, ինչը դուրս է քեմալական «թուրքական հայրենիքի» պաշտպանության պատասխանատվության սահմաններից ու ընկալումներից: Ինչպես իրավացիորեն նշում են թուրք հետազոտողներ Ջ. Սարաչօղլուն և Օ. Դեմիրքոլը՝ մինչ քեմալիստական ազգայնականությունը Թուրքիայի տարածքը մեկնաբանում էր պաշտպանողական տեսանկյունից որպես հայրենիք, որն ազատագրվել էր և դեռ պետք է պաշտպանվեր արտաքին ու ներքին թշնամական անվերջանալի դավադրություններից, ԱԶԿ-ական ազգայնականությունն այդ նույն աշխարհագրությունը դիտարկում է առավելապես հավակնոտ դիրքերից՝ որպես մշակութային ու քաղաքական կենտրոն, որից պետք է տարածվի Թուրքիայի քաղաքական ազդեցությունը հարևան տարածաշրջաններում[11]:

---

[*] 2018 թ. հունվարի 20-ին Թուրքիայի ԶՈՒ-ն Սիրիական ազատ բանակի զինյալ խմբավորումների հետ միասին ռազմական գործողություն սկսեցին Սիրիայի տարածքում՝ Հալեպի նահանգի Աֆրինի շրջանի ուղղությամբ: Դրա նպատակը Սիրիայի հյուսիսում քրդական ժողովրդական ինքնապաշտպանության ուժերի դեմ պայքարն ու չեզոքացումն էր: Մարտ ամսին Աֆրինի շրջանը վերահսկողության տակ վերցվեց թուրքական ԶՈՒ-ի կողմից:

[9] Տես “AK Parti Genel Sekreteri Şahin: Bütün İslam ümmetinin son ordusu Türk ordusudur”, 17.02.2018 (https://aa.com.tr/tr/politika/ak-parti-genel-sekreteri-sahin-butun-islam-ummetinin-son-ordusu-turk-ordusudur/1066170):

[10] Տես “Erdoğan: Afrin’e girdik, giriyoruz”. “Sputnik”, 13.03.2018 (https://tr.sputniknews.com/turkiye/201803131032619657-erdogan-afrin-girdik-giriyoruz/):

[11] Տես *Քենկ Սարաչօղլու, Օզհան Դեմիրկոլ,* Նշ. աշխ., էջ 312:

Բանակի հնարավոր սերտաճումը քաղաքական իշխանությունների հետ հնարավորություն է տալիս անվտանգային ու արտաքին քաղաքական ոլորտում հանդես գալու ավելի համարձակ ու ագրեսիվ դիրքերից, ինչն էլ ավելի կմեծացնի իշխանությունների կողմից անկանխատեսելի քայլերի հավանականությունը: Արտաքին քաղաքականության իրականացման մեջ բանակի՝ որպես հակակշռող ինստիտուտի չեզոքացումն առավել անկանխատեսելի ու վտանգավոր կարող է դարձնել տարածաշրջանային հակամարտություններին Թուրքիայի ներգրավման տեսանկյունից: Թուրքիայում ընթացող գործընթացները, իշխանությունների ավտորիտար բնույթը մեծացնում են բանակը՝ արտաքին քաղաքականության ոլորտում որպես կարևորագույն միջոց օգտագործելու հնարավորությունը:

Ավտորիտար ռեժիմների համար, որպես կանոն, բանակը վեր է ածվում ռեժիմի հենարանի ու երաշխավորի, իսկ արտաքին քաղաքականության ոլորտում մեծացնում անկանխատեսելի և ագրեսիվ վարքագիծը: Ներքին և արտաքին գործոններով պայմանավորված ընթանում է արտաքին և տարածաշրջանային քաղաքականության միլիտարիզացիա, երբ քաղաքականության իրականացման հարցում առաջնային տեղ է հատկացվում ռազմական ներուժին: Այս առումով բնութագրական է Թուրքիայի նախագահի խորհրդական Յ. Բուլութի կողմից Թուրքիայի նոր պաշտպանական հայեցակարգի սկզբունքների վերաբերյալ հրապարակված հոդվածը, ըստ որի՝ «*անխուսափելի է նոր Թուրքիայի ռազմական ներուժի օգտագործումը դիվանագիտության մեջ..., և ուժեղ դիվանագիտությունը կարող է իրականացվել ուժեղ զինված ուժերով*»[12]: Ռազմական ուժի գերարժևորման ևս մեկ օրինակ են 2017 թ. նոյեմբերին Ազգային պաշտպանական համալսարանի ավարտական միջոցառման ժամանակ Թուրքիայի նախագահի հետևյալ խոսքը. «*Օրվա մեջ 24 ժամ, տարվա մեջ 365 օր անխափան ռազմական գործողություններ իրականացնելու ներուժով օժտված հզոր բանակ չունենայիք, մեկ օր անգամ այս աշխարհագրությունում չէին թողնի գոյատևենք...Այլ երկրներն իրենց անվտանգությունը կարող են կապել տարբեր կառույցների ու պետությունների հետ: Որպես Թուրքիա՝ մենք նման հնարավորություն չունենք...Պարտավոր ենք բոլոր առումներով մեծացնել և հզորացնել թուրքական զինված ուժերը*»[13]:

Վերջին տարիների գործընթացները ցույց են տալիս, որ աստիճանաբար կարող է տեղի ունենալ բանակի հրամանատարության և քաղաքական վարչակարգի սերտաճում, երբ բանակը ոչ միայն գտնվի ներկայիս իշխանությունների գաղափարական դաշտում, այլև ստանձնի այդ արժեհամակարգի սատարողի ու պաշտպանի գործառույթներ: Նման սերտաճ-

[12] Տես “Yiğit Bulut: Yeni TSK konsepti oluşuyor, direnenler var”. “BİR Gün”, 06.01.2016 (http://www.birgun.net/haber-detay/yigit-bulut-yeni-tsk-konsepti-olusuyor-direnenler-var-99893.html):

[13] Տես “Erdoğan: “Bu ordu sadece Türkiye'nin ordusudur!””. “Takvim”, 23.11.2017 (https://www.takvim.com.tr/guncel/2017/11/23/erdogan-bu-ordu-sadece-turkiyenin-ordusudur):

ման պարագայում, երբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները չեն գործում, բանակը դառնում է իշխանությունների համար գործիք թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Որպես կանոն՝ նման համակարգերը դառնում են ավելի անկանխատեսելի և ագրեսիվ, քանի որ բանակն ամբողջությամբ հայտնվում է քաղաքական ուժի հսկողության ու ազդեցության տակ, և զսպման ներքին մեխանիզմները բացակայում են կամ չեն գործում: Թուրքիայի ավտորիտարացմամբ՝ երկրի արտաքին քաղաքականության վրա գնալով հասարակական-քաղաքական, ինստիտուցիոնալ ավելի քիչ սեգմենտներ են կարողանում ներազդել: Արտաքին քաղաքականությունը, կարելի է ասել, մենաշնորհվում է, իսկ դա կատարվում է կոնֆլիկտոգեն և հավակնոտ էլիտայի կողմից, և քանի որ նախկինում յուր ինքնությունն ու ինստիտուցիոնալ ինքնավարությունն ունեցող բանակը այլևս զրկվում է իր ինքնուրույնությունից ու ինքնությունից, կարող է կիսել քաղաքական վարչակարգի ինքնությունն ու տեսլականը, ինչը պետության արտաքին քաղաքական վարքագիծը կարող է դարձնել վտանգավոր ու ագրեսիվ:

Էական փոփոխությունների ու վերանայման է ենթարկվել Թուրքիայում արտաքին քաղաքական ու անվտանգային որոշումների կայացման մեխանիզմն ու ընթացակարգը: Ներքին հակակշիռների ու զսպման մեխանիզմների չեզոքացումն ու որոշումների կայացման կենտրոնացումը նախագահի և նրա նեղ շրջապատի ձեռքում էականորեն մեծացնում են անկանխատեսելի ու իրավիճակային կտրուկ լուծումների գնալու հավանականությունը: Կարելի է ասել, քաղաքական էլիտան նախագահի գլխավորությամբ կաշկանդված չէ արտաքին ու անվտանգային որոշումների կայացման հարցում, իսկ հակակշիռների ու զսպման ներպետական ու ներքաղաքական ինստիտուտները չեզոքացված կամ էլ էականորեն թուլացված են: Սա առավել ակնհայտ դարձավ սահմանադրական փոփոխությունների արդյունքում նախագահի լիազորությունների աննախադեպ մեծացմամբ ու սահմանադրական գերլիազորությունների ամրագրմամբ: Ավտորիտար համակարգերին բնորոշ որոշումների կայացման մեխանիզմը անվտանգության ու արտաքին քաղաքականության ոլորտում հատկապես մեծացնում են անկանխատեսելիությունն ու շատ հաճախ հանգեցնում ռիսկային որոշումների: Թուրքիայում ավանդաբար գործել է արտաքին-անվտանգային ոլորտում որոշումների ընդունման բավական կայացած համակարգ, որն ընթացել է պետության շահերի, կարողությունների ու ներուժի գնահատման միջգերատեսչական խորհրդակցական շղթայի մեջ: Դժվար է չհամաձայնել Ս. Ձիդդիի այն մոտեցման հետ, որ ներկայում, սակայն, արտաքին քաղաքական առաջնահերթությունների սահմանումն ավելի շուտ նախագահի անձնական նախապատվությունների արդյունք է, քան խորհրդակցական մեխանիզմի[14]: Գերինքնավստահությունը որոշում կայացնողների մոտ ստեղծում է անսխալականության ընկալում և

[14] Տես *Sinan Ciddi.* Under Erdogan, Turkey's Foreign Policy is a One-Man Show. "Stratfor", 22.04.2018 (https://worldview.stratfor.com/article/erdogan-turkey-foreign-policy-europe-us-one-man-show):

որքան մեծանում է ինքնավստահությունը, այնքան քչանում է ռիսկերի ըմբռնումը: Գերինքնավստահությամբ առաջնորդվող որոշում կայացնողները սահմանում են ամբիցիոզ ու նվազ իրատեսական ակնկալիքներ[15]: Ի. Դեմիրն իրավամբ նշում է, որ Սիրիայի նկատմամբ Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը որոշում կայացնողների գերինքնավստահության հետեվանքն էր, երբ Թուրքիան վտանգներով լի գործընթացի մեջ մտավ, ինչը բնորոշ չէր այդ երկրի արտաքին քաղաքականությանը[16]:

Գաղափարախոսական-արժեհամակարգային դաշտում առկա իրողությունները նույնպես էական ազդեցություն ունեն արտաքին-անվտանգային քաղաքականության վրա: Քաղաքական էլիտայի արժեհամակարգն ու աշխարհաքաղաքական տեսլականը էականորեն պայմանավորում են այդ երկրի արտաքին քաղաքականությունը: Սա չի նշանակում, որ այդ երկրի արտաքին քաղաքականությունը զուրկ է պրագմատիզմից կամ քաղաքական ռեալիզմից, սակայն դրան զուգահեռ անվտանգային ու արտաքին քաղաքական առաջնահերթությունների ու շահերի ձևակերպման վրա առանցքային նշանակություն ունեն էլիտայի աշխարհընկալումները, աշխարհաքաղաքական պատկերացումներն ու տեսլականը: Թուրքիայի ներհասարակական, ներքաղաքական հարթությունում ընթացող խոսույթը, որն առավելապես տեղավորվում է թուրք-իսլամական ազգայնական սինթեզի մեջ, քաղաքական էլիտայի գործուն ներազդմամբ վեր է ածվել դոմինանտ արժեքային գործոնի, ինչը ենթադրում է թուրքական ազգայնականության ու իսլամական ազգայնականության միաձուլում: Համակարգային առումով այս ազգայնական խոսույթը որպես նաև պետության գերակա գաղափարախոսական հոլովույթ ամրապնդվեց և, այսպես ասած, *քաղաքական լեգիտիմություն* ստացավ երկրում աջ ուղղվածության երկու առանցքային քաղաքական ուժերի՝ ԱԶԿ և ԱՇԿ քաղաքական դաշինքով: Նման ազգայնական դիսկուրսի ներթուրքական ամրագրումն իր ուղղակի ազդեցությունն է ունենում արտաքին քաղաքականության վրա և կարելի է պնդել, որ առաջիկայում այն ավելի մեծ ազդեցություն կունենա[17]:

Թուրքիայի արտաքին, ինչպես նաև անվտանգային քաղաքականության վրա լրջագույն ազդեցություն ունեցող մյուս գործոնը ռազմականն է կամ ավելի հստակ՝ Թուրքիայի ռազմական ներուժի շարունակական մեծացումը: Այս առումով ռազմական ներուժի մեծացումը Թուրքիայի արտաքին քաղաքականությանը տալիս է այսպես ասած ռազմակենտրոն մոտեցում, այսինքն՝ ռազմական ներուժին արտաքին քաղաքականության շահերի իրականացման մեջ առաջնային տեղ է հատկացվում: Գնալով ակնհայտ է

[15] Տես *Imran Demir.* Overconfidence and Risk Taking in Foreign Policy Decision Making: The Caso of Turkey's Syrian Policy. Istanbul, 2017:

[16] Տես նույն տեղում, էջ 116:

[17] Տես *Sinan Ulgen.* Get Ready for a More Aggressive Turkey. "FP", 02.07.2018 (https://foreignpolicy.com/ 2018/07/02/turkeys-foreign-policy-is-about-to-take-a-turn-to-the-right/):

դառնում տարածաշրջանային ու արտաքին քաղաքականության մեջ ուժային (ռազմական) գործոնի վրա հաշվարկված քաղաքականության շեշտադրումը: Որպես օրինակներ կարող ենք նշել Սիրիայի տարածքում իրականացված և դեռևս իրականացվող ռազմագործողությունները, Իրաքի տարածքում ձեռնարկվող քայլերը, արտերկրներում ռազմաբազաների տեղակայումը (Կատար, Սոմալի): Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացման ներկայիս միտումները ևս այդ երկրի արտաքին քաղաքականությունն ուժի դիրքերից իրականացնելու վերաբերյալ մեր նշած թեզի կռվանն է: Միանշանակ է, որ ռազմական արդյունաբերության զարգացումը նպաստում է ռազմական ինքնաբավության մակարդակի բարձրացմանը և իշխանություններին լրացուցիչ գերինքնավստահություն տալիս: Սիրիայի տարածքում Թուրքիայի ռազմական գործողություններում ակնհայտ դարձավ ինչպես ներքին ռազմական արտադրանքի մեծ տեսականու կիրառման փաստը, այնպես էլ այդ գործոնի գերարժևորումը Թուրքիայի իշխանությունների կողմից: Թուրքիայի նախագահի, վարչապետի և պաշտպանության նախարարի կողմից հաճախակի էին բարձրաձայնվում Աֆրինում թուրքական ազգային սպառազինության կիրառման և ռազմական ինքնաբավության մակարդակի մասին շեշտադրումները: Պաշտոնական տվյալներով Աֆրինի դեմ ռազմագործողությանը կիրառված ռազմական տեխնիկայի մոտ 90 %-ը թուրքական ազգային ռազմաարդյունաբերական արտադրանք է եղել[18]: Թուրքիայի պաշտպանության նախարարն էլ հայտարարեց, որ ողջ կիրառված սպառազինությունը տեղական ազգային ռազմաարդյունաբերության արտադրանքն է[19]: Թուրքական մամուլը, փառաբանելով այդ հանգամանքը, հիշեցրեց տարբեր առիթներով Թուրքիայի նկատմամբ զենքի արգելանքի կիրառման և այսուհետ նման վտանգից զերծ լինելու մասին[20]: Սա սեփական արտադրության սպառազինության լայն տեսականու մասսայական կիրառման Թուրքիայի առաջին ռազմագործողությունն էր:

Ռազմական ներուժի վրա հիմնված արտաքին ու տարածաշրջանային քաղաքականությունը, կարելի է պնդել, է՛լ ավելի ընդգծված բնույթ կստանա: Հավակնոտ արտաքին քաղաքականության իրականացման հարցում ռազմական ուժն ու կարողությունները նոր կարևորություն են ձեռք բերում: Թուրքիայի արտաքին, տարածաշրջանային քաղաքականության մեջ ուժային գործոնի կարևորությունն անժխտելի ու տեսանելի է: 2016 թ. Թուրքիայի տարածքից դուրս՝ Կատարում և Սոմալիում, ռազմաբազաների տեղակայումը ցույց է տալիս Անկարայի՝ ռազմական բաղադրիչի կարևորությունն իր

[18] Տես “İşte Afrin'de kullanılan milli silahlar!”, 23 Şubat 2018 (https://www.yeniakit.com.tr/haber/iste-afrinde-kullanilan-milli-silahlar-427754.html):

[19] Տես “Milli Savunma Bakanı Canikli: Zeytin Dalı Harekâtı'nda kullanılan mühimmatın tamamını yerli ve milli”. “T24”, 28 Ocak 2018 (https://t24.com.tr/haber/milli-savunma-bakani-canikli-zeytin-dali-harekatinda-kullanilan-muhimmatin-tamamini-yerli-ve-milli,546947):

[20] Տես “Yerli ve milli silahlar gücümüze güç katti”. “Yenisöz”, 3 Nisan 2018 (http://www.yenisoz.com.tr/yerli-ve-milli-silahlar-gucumuze-guc-katti-haber-29200):

արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության մեջ[21]: Ռազմական վերլուծաբան Ձ. Քասափօղլուի դիտարկմամբ՝ Անկարան տարածաշրջանային նոր տեսլական է սահմանել և գնալով մեծանում է ռազմական ներուժի միջոցով դրան աջակցելու միտումը[22]:

Թուրքիայի սպառազինման և բանակի ռազմատեխնիկական ներուժի զարգացման ոլորտում իրականացվում են խոշորամասշտաբ ծրագրեր, երբ առաջնահերթությունը տրված է երկրի տեղական ռազմաարդյունաբերական համալիրին՝ որպես ռազմատեխնիկական ինքնաբավության ու անկախության կարևորագույն երաշխիքի: ԱԶԿ իշխանության ողջ ժամանակաշրջանում բանակի սպառազինումն ու արդիականացումն անանխադեպ ծավալներ են ընդունել և մշտապես գտնվել կառավարությունների առաջնահերթությունների շարքում: Պաշտոնական տվյալներով՝ ԱԶԿ կառավարությունը վերջին 15 տարիների ընթացքում ռազմական արդյունաբերության ոլորտում շուրջ 35 մլրդ դոլարի ներդրում է կատարել[23]: Անհրաժեշտ է փաստել, որ ԱԶԿ կառավարման շրջանում թուրքական բանակը սպառազինության տեսանկյունից որակական նոր քայլ է կատարում՝ կարևոր տեղ հատկացնելով նորագույն ժամանակակից սպառազինություններով դրա համալրմանը:

Այս ամենի համախումբը Թուրքիայի ներկայիս իշխանություններին տալիս է գերինքնավստահության բարձր մակարդակ, արտաքին անվտանգային քաղաքականությունը դարձնում ավելի ագրեսիվ, անկանխատեսելի՝ մեծացնելով տարածաշրջանային ու արտաքին հավակնություններն ու նկրտումները:

Վերջին տարիներին Թուրքիայում հետևողականորեն ընթանում է հասարակական-քաղաքական կյանքի ու արտաքին քաղաքականության անվտանգայնացման *(securitization)* գործընթաց՝ զուգակցվելով ռազմականացման բարձր տեմպերով ու որակական փոփոխություններով:

ԹՈՒՐՔԻԱ–ԱԴՐԲԵՋԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է նորովի դիտարկել հատկապես թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության միտումները, տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների ներքո նորովի վերագնահատել Հայաստանի անվտանգային ռիսկերը: Հստակ է, որ թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքը անվտանգության սպառնալիք է Հայաստանի Հանրապետության և Արցախի համար: Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը ինտենսիվորեն զար-

[21] Տես “Türkiye Katar'dan sonra Somali'de askeri üs kuruyor!”, 18 Ocak 2016 (https://www.yeniakit.com.tr/haber/turkiye-katardan-sonra-somalide-askeri-us-kuruyor-123014.html):

[22] Տես *Can Kasapoğlu.* Türkiye'nin yeni bölgesel savunma vizyonu, 05.01.2018 (https://aa.com.tr/tr/analiz-haber/turkiyenin-yeni-bolgesel-savunma-vizyonu/1023221):

[23] Տես “Turkey has invested $35 bln in defense industry in 15 years: PM Yıldırım”. “Hürriyet Daily News”, 02.03.2018 (http://www.hurriyetdailynews.com/turkey-has-invested-35-bln-in-defense-industry-in-15-years-pm-yildirim-128167):

գանում է 1990-ական թթ. սկզբներից՝ ռազմական բոլոր ոլորտներում՝ հետախուզությունից մինչև ռազմական կրթություն, օպերատիվ համատեղ պլանավորումից մինչև համատեղ զորավարժություններ[24]: Թեև երկու երկրների միջև առկա էր ռազմական ոլորտում համագործակցության լուրջ իրավապայմանագրային բազա, այդուհանդերձ 2010 թ. օգոստոսին ստորագրված «Ռազմավարական համագործակցության և փոխօգնության մասին» համաձայնագրով ընդլայնվեց երկու երկրների ռազմաքաղաքական համագործակցության նորմատիվային բազան՝ ամրագրելով արդեն երկկողմ ռազմական դաշինքի իրավական հիմքերը: Այդ համաձայնագրով կողմերն ստանձնեցին նաև ագրեսիայի դեպքում ռազմական միջոցներով միմյանց փոխօգնության պարտավորություններ[25]: Թուրքիան միակ երկիրն է, որի հետ Ադրբեջանն ունի ռազմական փոխօգնության պայմանագիր: Երկու երկրների միջև ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցությունը ակնհայտորեն զարգացման նոր միտումներ է ցույց տալիս, որոնք արտահայտվում են բավական հաճախ և մասշտաբային զորավարժությունների ու օպերատիվ պլանավորումների մակարդակում: Անհերքելի իրողություն է, որ Ադրբեջանի պաշտպանական համակարգում Թուրքիան զգալի դերակատարություն ունի և օպերատիվ-մարտավարական, ռազմավարական պլանավորումն իրականացվում է Անկարայի ԳՇ-ի հետ համատեղ:

Թուրքիայի ԶՈՒ-երը բավական կարևոր և առանցքային դեր ունեն Նախիջևանի առանձին համազորային բանակի* կայացման գործում, ինչի մասին քանիցս նշել է ՆԻՀ ղեկավարությունը: Թուրքիայի ԶՈՒ-ի ԳՇ-ն դեռ 1990-ական թթ. սկզբներից ռազմատեխնիկական և նյութական զգալի աջակցություն է ցուցաբերել Նախիջևանին: 1992 թ. մայիսին, անսալով ռազմական օգնություն ցուցաբերելու ՆԻՀ ղեկավարության խնդրանքին Թուրքիայի ԶՈՒ-ի 3-րդ բանակի 9-րդ կորպուսի հրամանատարությունը, բավարարեց այն: Սա այն ժամանակահատվածն էր, երբ պաշտոնական Անկարան ռազմական միջամտության տարբեր հնարավորություններ էր փնտրում: Հետագա տարիներին ինտենսիվորեն շարունակվել է Թուրքիայի ԶՈՒ-ի աջակցությունն ու օգնությունը Նախիջևանում տեղակայված 5-րդ կորպուսին՝ ռազմատեխնիկական միջոցների մատակարարումից մինչև ռազմական կրթություն[26]: Հատկապես բավական հաճախակի են Թուրքիայի ԶՈՒ-ի ցամաքային

[24] Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության մասին տես *Л. Овсепян, В. Иванов.* Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа и Центральной Азии. Е., 2010:

[25] Տես "Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşması", 12.08.2010. T.C. Başbakanlık, Kanunlar ve Kararlar Genel Müdürlügü, Sayı: B.02.0.KKG.0.10/101-246/5147:

* 2013 թ. դեկտեմբերին Նախիջևանում տեղակայված 5-րդ կորպուսի հիման վրա ստեղծվեց Նախիջևանի առանձին համազորային բանակը:

[26] Տես *Л. Овсепян, В. Иванов.* Турецкие интересы в Нахиджеване на современном этапе. «Нахиджеван в XX-начале XXI веков: некоторые факты». М., 2011, сс. 97–103:

ուժերի 3-րդ բանակի հրամկազմի այցելությունները և համատեղ զորավարժությունների անցկացումը: ՆԻՀ առանձին համազորային բանակի, այսպես ասած, խնամակալությունը դրված է Թուրքիայի ցամաքային ուժերի 3-րդ բանակի հրամանատարության վրա: Ակտիվացել են հատկապես թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունները Նախիջևանում և դրանում տեղակայված ուժերի մասնակցությամբ: Վերջին 5 տարիների ընթացքում Թուրքիայի ԶՈՒ-ի և ՆԻՀ առանձին համազորային բանակի մասնակցությամբ անց է կացվել առնվազն 5 համատեղ զորավարժություն:

Ի թիվս այլ ռազմական տեխնիկայի, Նախիջևանում են տեղակայվել Թուրքիայի կողմից Ադրբեջանին մատակարարված *T-300 Kasırga* և *T-122 Sakarya* համազարկային կրակի ռեակտիվ համալիրների մի մասը[*]: ՆԻՀ ռազմականացման գործում առանցքային նշանակություն ունի Թուրքիան, որի ազդեցությունն ու վերահսկողությունը դրանում տեղակայված ուժերի նկատմամբ էականորեն մեծ է:

2011 թ. փետրվարին թուրքական պարբերականներից մեկը արծարծում էր Նախիջևանում Թուրքիայի ռազմաբազա տեղակայելու, «ղարաբաղյան հնարավոր երկրորդ պատերազմում ռազմական գործողությունները համակարգելու համար թուրք և ադրբեջանցի գեներալների համատեղ սպայակույտ» ստեղծելու հավանականության հարցերը[27]:

Նախիջևանում թուրքական գործոնի ազդեցությունն ու ռազմական ներկայացվածությունը լրջագույն ռիսկեր է պարունակում Հայաստանի ռազմական անվտանգության համար: Պատահական չէ, որ պաշտոնական Անկարան իրեն է վերագրում Նախիջևանի անվտանգության երաշխավորի կարգավիճակն ու դրանից բխող պարտավորությունները՝ վկայակոչելով 1921թ. Կարսի պայմանագիրը, որին հղում է արված նաև 2010 թ. թուրք-ադրբեջանական համաձայնագրում: Դեռ 1992 թ. մայիսին Թուրքիայի խորհրդարանում քննարկումների ժամանակ քաղաքական ուժերը, հիմնականում ընդդիմադիր, կոչ էին անում և կառավարությունից պահանջում ռազմական միջամտություն իրականացնել Հայաստանի դեմ՝ հղում կատարելով Կարսի պայմանագրով իբրև թե Նախիջևանում Թուրքիային վերապահված իրավունքներին: Նախկին վարչապետ, պատգամավոր Բ. Էջևիթը նույնիսկ առաջարկում էր Թուրքիայի ռազմական ուժերի միջամտությամբ Նախիջևանի և Ադրբեջանի միջև միջանցք ստեղծել[28]: Ի դեպ, Նախիջևանի և Ադրբեջանի միջև ցամաքային կապի ստեղծման և միջանցքի բացման հարցը գտնվել է Անկարայի օրակարգում, երբ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը

[*] 2010 թ. ստորագրված համաձայնագրի շրջանակում թուրքական Roketsan ընկերությունը 2016 թ. ավարտեց մոտ երկու տասնյակ *T-300 Kasırga* ՀԿՈՀ-ների մատակարարումները Ադրբեջանին: 2013 թ. սկսվել էին *T-122 Sakarya* ՀԿՈՀ-ների մատակարարումները:

[27] Տես “Azerbaycan-Türkiye askeri iş birliği”. “Dünya Bülteni”, 10 Şubat 2011 (http://www.dunyabulteni.net/?aType haber&ArticleID=146860):

[28] Տես “TBMM tutanak dergisi”. Dönem:19, Cilt:11, Yasama yılı:1, 78'nci birleşim, 20.05.1992:

նման առաջարկ է արել ԱՄՆ-ին[29]: Որոշ տեղեկություններով՝ նույնիսկ այդ նպատակով ռազմական ուժեր են կենտրոնացվել սահմանին[30]: Հարկ է նշել, որ պաշտոնական Անկարան յուրովի մեկնաբանության արդյունքում է իրեն երաշխավորի և անվտանգության ապահովման դերակատարություն վերագրում, ինչը խոստովանում են նաև որոշ թուրք հետազոտողներ[31]: Մի շարք առիթներով Թուրքիայի իշխանությունները հայտարարել են Նախիջևանի անվտանգության հարցում իրենց մտահոգությունների և, այսպես ասած, պատասխանատվության մասին: 2010 թ. ապրիլին ՆԻՀ նախագահ Վ. Թալիբովի՝ Անկարա կատարած այցի առնչությամբ, Թուրքիայի ԱԳՆ տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ Նախիջևանի ինքնավար միավորը գտնվում է հայկական պետությունից եկող սպառնալիքներին դեմ հանդիման, ուստի Թուրքիայի և Ադրբեջանի ու Նախիջևանի միջև ռազմական համագործակցությունը երկկողմ հարաբերությունների գլխավոր բաղադրիչներից է: Թուրքիայի ԱԳ նախարար Ա. Դավութօղլուն էլ հայտարարել էր, որ Նախիջևանի անվտանգությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է: Ըստ նրա՝ Կարսի պայմանագիրը պարտավորեցնում է Թուրքիային ռազմական վտանգի դեպքում պաշտպանել Նախիջևանը: «Նախիջևանի նկատմամբ երաշխավորի իրավունքը միջազգային իրավունքի շրջանակում Թուրքիայի ստանձնած պարտավորությունն է: Նախիջևանի անվտանգությունը մեր անվտանգությունն է, բարօրությունը՝ մեր բարօրությունը»[32]:

2017 թ. հոկտեմբերին Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանի՝ Բաքվում գտնվելու օրերին, թուրքական պետական լրատվական գործակալությունը վերլուծական հոդված հրապարակեց թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի, հավանական պատերազմի դեպքում Նախիջևանից երկրորդ ճակատի բացման և Նախիջևանի առանձին համազորային բանակի ու Թուրքիայի ցամաքային ուժերի 3-րդ բանակի միջև համագործակցության մասին[33]: Նման բովանդակությամբ հրապարակումը պատահական չէր կարող լինել թուրքական պետական լրատվամիջոցի կողմից: Վերջին տարիներին հատկապես Նախիջևանում թուրքական ռազմական ներկայության շարունակական մեծացումն ու դերակատարությունը մեծացնում են Հայաստանի

[29] Տես «Օզալը Բուշին համոզում է Արցախը փոխանակել Մեղրիով ապրիլ 28, 1992 թ.»: «Ani» ARC, 19.09.2018 (http://www.aniarc.am/2018/09/19/ozal-bush-nk-megri-28-april-1992/):

[30] Տես *Aziz Üstel.* “Başkan” Turgut Özal Kafkaslar’da savaşı göze almıştı! “Star”, 23 Ocak 2017 (https://www.star.com.tr/yazar/baskan-turgut-ozal-kafkaslarda-savasi-goze-almisti-yazi-1178966/):

[31] Տես *Umut Uzer.* Identity and Turkish Foreign Policy: The Kemalist Influence in Cyprus and the Caucasus. London, 2011, P. 180:

[32] Տես “Turkey Publicly Stresses Its Obligations To Defend Naxcivan”. “Radio Free Europe / Radio Liberty”, 30.04.2010 (https://www.rferl.org/a/Turkey_Publicly_Stresses_Its_Obligations_To_Defend_Nakhichevan/ 2028875.html):

[33] Տես *Քան Կասապօղլու,* Նշ. աշխ.:

ռազմական անվտանգության սպառնալիքի մակարդակը: Թուրքիան լրջագույն հավակնություններ ունի Նախիջևանի հետ կապված և կարելի է ասել, որ այն ընկալվում է որպես ավելի շատ Թուրքիայի մի մասը: Պատահական չէ, որ դեռ 1990-ական թթ. սկզբներին Թուրքիայի նախագահ Թ. Օզալի տեսլականում կար Նախիջևանը Թուրքիային կցելու մտադրություններ[34]: Այս համատեքստում ուշագրավ էր նաև Էրդողանի շուրթերով 2016 թ. «Ազգային ուխտի» *(Misak-ı milli)* քաղաքական օրակարգ բերելը, որում Նախիջևանը ներառված է որպես Թուրքիայի անբաժանելի մաս և տարբեր տարիներին հրապարակվող «Նոր Թուրքիայի» քարտեզներում այն ընդգրկված է Թուրքիայի կազմում: «Ազգային ուխտի» քաղաքական օրակարգ բերելուն զուգահեռ բարձրացվեց նաև Լոզանի պայմանագրի՝ թուրքական շահերի հետ անհամատեղելիության հարցը, ինչը կարելի է դիտարկել տարածաշրջանում Թուրքիայի ներկայիս էլիտայի ռևիզիոնիստական ձգտումների շրջանակում:

Չպետք է բացառել Նախիջևանում թուրքական կողմի պլանավորված սադրանքների հավանականությունը, ինչը կարող է Անկարային տարածաշրջանային վերադասավորումներ կատարելու հնարավորություններ տալ:

Թուրքիայի նախկին վարչապետ և արտգործնախարար Ա. Դավութօղլուն իր հայտնի «Ռազմավարական խորք» գրքում արցախյան պատերազմում Ադրբեջանի կրած պարտությունը և տարածքների կորուստը համարում է որպես «հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի ամենամեծ ռազմավարական կորուստը»[35]: Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը, ավելի հեռուն գնալով, հայտարարում էր, որ «եթե Թուրքիան 1990-ական թթ. սկզբներին ներկայիս պես հզոր լիներ, ապա Լեռնային Ղարաբաղում պատերազմ չէր լինի»[36], այսինքն՝ ադրբեջանական կողմը պարտություն չէր կրի: Սրանք մերօրյա քաղաքական էլիտայի՝ Թուրքիայի ռազմաքաղաքական դերակատարության վերագնահատման և արցախյան հիմնախնդրում հնարավորությունների վերասահմանման հստակ ցուցիչներ են:

Շվեդ հետազոտող Ս. Կորնեյլը 1990-ական թվականներին արցախյան պատերազմում Թուրքիայի ուղղակի չներքաշման պատճառների թվում ընդգծում է քեմալական ավանդական արտաքին քաղաքական դոկտրինի (տեսլականի) գերակայության գործոնը, որն արտերկրում ռազմական միջամտությունն ու ներգրավումը դիտարկում էր որպես արկածախնդրություն: Վերջինիս դիտարկմամբ՝ պատերազմին միջամտության հարցում պետական, քաղաքական ու ռազմական տարբեր հատվածների մոտեցումների ու դիրքորոշումների հակասություններով պայմանավորված ներքին հավասարակշռությունը *(domestic balance)* զերծ պահեց կոշտ միջոցների դիմելու

[34] Տես “Nahçıvan, Erbil, KKTC ve Türkiye”, “Takvim”, 29 Eylül 2012 (https://www.takvim.com.tr/yazarlar/erandac/2012/09/29/nahcivan-erbil-kktc-ve-turkiye):

[35] *Ahmet Davutoğlu.* Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu. Kure yayınları, 2001, s. 127:

[36] Տես “Ərdoğan: Türkiyə 90-cı illərin əvvəllərində güclü olsaydı, Dağlıq Qarabağ münaqişəsi də olmazdı”. “Metbuat.az”, 16 Mart 2015 (https://metbuat.az/news/63544/erdogan-turkiye-90-ci-illerin-evvellerinde-guclu-olsaydi-dag.html):

քայլերից. և դեռ կասկածելի է, թե արդյոք զինվորականությունը կհետևեր ուղղակի միջամտության հրամանին[37]: Վերոնշյալի համատեքստում, ինչպես նախորդիվ անդրադարձել ենք, էական կերպափոխման է ենթարկվել արտաքին քաղաքականության տեսլականն ու վերաձևվել անվտանգային ինքնությունը, իսկ ներքին հակակշիռների ու զսպման մեխանիզմները երկրում զգալիորեն թուլացվել են:

Սույն հոդվածի ծավալից ելնելով՝ Թուրքիայի կողմից Հայաստանի անվտանգությանը սպառնալու հավանականության միջազգային համակարգային գործոնները մանրամասն քննության չեն ենթարկվում, այդուհանդերձ, կատարվում է համառոտ անդրադարձ:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի ռազմական անվտանգության տեսանկյունից մշտապես հաշվի է առնվել Թուրքիայի գործոնի վտանգը: 1990-ական թթ. սկզբների իրողությունները և թուրքական ագրեսիայի վտանգը դրա վառ վկայությունն են[38]: Սակայն Թուրքիայում ընթացող ներքին զարգացումները, ժողովրդավարական միտումները, ԵՄ-ին անդամակցության ակտիվ քայլերը, նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ որոշակի ապաանվտանգայնացման *(de-securitization)* միտումներ ստեղծեցին: Սրանք Թուրքիան դարձնում էին ավելի կանխատեսելի և վերահսկելի, եթե սրան ավելացնենք ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի ու ԱՄՆ-ի՝ Թուրքիայի նկատմամբ ունեցած զսպման մեխանիզմները: Հաստատված փաստ է, որ տարածաշրջանային հավակնությունների հարցում էական զսպիչ դերակատարություն են ունեցել վերոնշյալ ուժային կենտրոնները, ինչպես օրինակ՝ արցախյան պատերազմի ժամանակ Հայաստանի դեմ ռազմական ինտերվենցիայից զերծ մնալու և զսպվածություն ցուցաբերելու ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշի հորդորը Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելին 1992 թ. մայիսին[39]:

Ներկայում, սակայն, պետք է հաշվի առնել մակրո հարթություններում ընթացող զարգացումները, որոնք մեծացնում են Թուրքիայի անկանխատեսելիությունը հավանական կոնֆլիկտային իրավիճակներում: Թուրքիան բավական լարված հարաբերությունների մեջ է ԱՄՆ-ի հետ, ՆԱՏՕ-ի շրջանակում առկա է փոխանվստահության մթնոլորտ, ԵՄ-ի անդամակցության գործընթացը սառեցված է և փոխարենը Թուրքիան ցանկանում է որքան հնարավոր է տարածաշրջանային ու անվտանգային հարցերում հանդես գալ առավել անկախ ու ինքնուրույն դիրքերից՝ թուլացնելով Արևմուտքից իր կախվածությունը: Այլ կերպ ասած՝ Թուրքիան փորձում է դուրս գալ Արևմուտքի պարտադրված կապանքներից ու կաղապարներից, որը սահմա-

[37] Տես *Svante E. Cornell.* Azerbaijan Since Independence. New York-London, 2011, P. 370:

[38] Առավել հանգամանորեն տես *Leonidas T. Chrysanthopoulos.* Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993–1994. Princeton and London, 2002:

[39] Տես ««Հայաստանի դեմ ռազմական ինտերվենցիայից զերծ մնացեք»: Բուշը՝ Դեմիրելին, մայիս 11, 1992»: «Ani» ARC, 22.09.2018 (http://www.aniarc.am/2018/09/22/bush-to-demirel-1992-may-11-armenia/):

նափակում է նոր աշխարհաքաղաքական տեսլականի վրա հիմնված անվտանգային քաղաքականությունը:

Թերևս առաջնային մտահոգությունը հավանական պատերազմական իրավիճակում Թուրքիայի հնարավոր վարքագծի հարցն է: Երկրում համակարգային-ինստիտուցիոնալ վերածնումները, ավտորիտար կառավարման համակարգն ու արտաքին քաղաքական որոշումների կայացման մեխանիզմը, երկրում ազգայնական միտումների աճը, ուժային գործոնով պայմանավորված տարածաշրջանային քաղաքականությունն ու հավակնությունները, հարևան երկրներում ռազմական միջամտություններն ու ռազմական ուժի կիրառման սպառնալիքների աճը հիմք են տալիս ենթադրելու կոնֆլիկտային իրավիճակում Թուրքիայի անկանխատեսելի ու ագրեսիվ քայլերի հավանականության մասին, որն ուղղակի ռազմական անվտանգության սպառնալիք կարող է լինել Հայաստանի համար:

ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԻ ՈՒՂԵՐՁ-ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՑ

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի ելույթը

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ն. Յ. ՄԿՐՏՉՅԱՆ, ԶՈՒ-ի գնդապետ

Բանակը, լինելով մեր ժողովրդի անվտանգության գլխավոր երաշխավորը, մի հսկա պետական կառույց է, որը պետք է մարմնավորի՝ **Ազգասիրությունը՝** համեմված հայկական ժողովրդական մարտական ավանդույթներով, **Քրիստոնեությունը՝** Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր առաջնորդությամբ, **Հայրենապաշտությունը՝** տոգորված Պատմական Հայրենիքի վերամիավորման գաղափարով, **Պետականությունը՝** որպես յուրաքանչյուր հայի ազգային արժանապատվության գերագույն խորհրդանիշ:

Այս սկզբունքային դրույթների հաշվառմամբ անչափ կարևորվում է հասարակության լայն շրջանում զինվորականի, հատկապես՝ սպայի հեղինակության բարձրացումն ու ամրապնդումը, զինվորականի մասնագիտության գրավչության ապահովումը:

Մեր Զինված ուժերի կատարելագործումն ու զարգացումը ոչինչ չեն արժենա, եթե մենք այսօր խորապես չմտահոգվենք գլխավորի՝ բանակի հոգին և ողնաշարային հենասյունը հանդիսացող ուժեղ սպայական կադրեր ստեղծելու և ունենալու մասին:

Այս հարցում հարկ է առանձնացնել երկու ուղղություն:

1. ***Բարոյական.*** սպայական խավը պետք է լինի հասարակության սերուցքը և ծաղիկը միայն ու միայն այն բանի համար, որ **նա իր ընտանիքի հետ ընտրել է Հայրենիքի պաշտպանի մասնագիտությունը:**

Կարծում եմ, որ դրանով է պայմանավորված սպայական խավի գործունեության բացառիկությունը, և այն պիտի արժանանա հասարակության բոլոր շերտերի բարձր գնահատականի:

2. ***Նյութական.*** ցանկացած գաղափար առանց նյութական ամրապնդման, վերջ ի վերջո կորցնում է իր շարժիչ ուժն ու փայլը: Անհրաժեշտ է արդյունքի հասնելու համար հատկացնել միջոցներ: Սպայակազմի դրամական բավարարումը պետք է լինի ամենաբարձրներից մեկը, իսկ կենցաղային պայմանները՝ լիարժեք ապահովված: Պետք է բացառել կամ նվազագույնի հասցնել սպայի հեղինակությունը խաթարող ցանկացած դեպք ու երևույթ: Առաջին հերթին, ուշադրության պիտի արժանանա այն հարցը, թե ինչն է երիտասարդին դրդել ընտրելու սպայի մասնագիտություն, և եթե դա միայն նյութական ապահովվածությանը հասնելու ձգտումն է կամ «ուրիշ ճար չկար» համոզմունքը, ապա սպայի գործունեության ՕԳԳ-ն երբեք բարձր չի լինի, այդ սպան չի ունենա գիտելիքները հարստացնելու, կատարելության

հասնելու, ծառայողական աստիճաններով բարձրանալու, ծառայության կազմակերպման համար պատասխանատվություն ստանձնելու, վերադաս հրամանատարության ցուցումները բարեխղճորեն ու ստեղծագործաբար կատարելու ձգտում: **Նա միայն ներքին զգացողությամբ ճշտորեն ընկալելու է բանակի շարքերը սպայական կադրերով շուտափույթ համալրելու պետական մոտեցման անհրաժեշտությունը, որը բխում է այժմ ստեղծված բավական բարդ իրավիճակից, զգալու է այդ հարցում իր ներկայության բացառիկությունը և վերջ:** Նման սպաների առկայությունը ավելի շատ վտանգ է ներկայացնում և անօգտակար է: Մյուս կողմից՝ պետք է լրջորեն ուսումնասիրել բանակի շարքերից վաղաժամկետ զորացրման ցանկություն հայտնած սպաների՝ նման քայլի դիմելու հիմքերն ու դրդապատճառները, ընդսմին հաշվի առնել այն հանգամանքը, որ ժամկետից շուտ զորացրվելու միտումը նպաստում է հասարակության լայն շերտերում բանակի և սպայական կադրերի նկատմամբ ձևավորված դրական կարծիքների և հայացքների արժեզրկմանը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սպաները ԶՈՒ-ի շարքերից զորացրվելու ցանկություն են հայտնում, հիմնականում, հետևյալ պատճառներով.

1) նոր միջավայրին չհարմարվելու, սպայական կոլեկտիվում իր տեղը չգտնելու, իրեն օտարոտի, մերժված ու չգնահատված զգալու, հեռանկարում իրեն սպայական աստիճանակարգությունում այլևս չպատկերացնելու հետ կապված խնդիրներ,

2) սոցիալական խնդիրներ՝ տարրական կենցաղային պայմանների, ընտանյոք հանդերձ հանգստանալու հնարավորությունից զուրկ լինելը, հոգեհարազատ սոցիալական միջավայրից կտրվածությունը (հասարակությունից մեկուսացածություն զգացումը, միայնակ, առանց տարեց հարազատների առօրյա հոգսերը քաշելու անկարողությունը, ինչը ցայտուն կերպով է դիտվում երիտասարդ սպայական ընտանիքներում),

3) բանակային կյանքի ծանրաբեռնվածության պատճառով բավարար ժամանակ ընտանիքի հետ անցկացնելու անհնարինությունը, ինչը դառնում է ընկճախտի առաջացման պատճառ. ընտանիքից երկար ժամանակով մեկուսացման մեջ գտնվելով՝ սպան հայտնվում է անելանելի դրության մեջ, և երբ առաջ են գալիս տարաբնույթ, հանկարծակի ծագող խնդիրներ, նա ֆիզիկապես ի վիճակի չի լինում տվյալ պահին զբաղվելու այդ խնդիրների լուծմամբ,

4) սպաների ընտանեկան, սոցիալ-կենցաղային, անձնական կամ այլ տիպի խնդիրների լուծման նկատմամբ մի շարք դեպքերում հրամանատարության անտարբեր, անհոգի վերաբերմունք, ինչը վերջին հաշվով անդրադառնում է ծառայության որակի վրա, քանի որ իր պրոբլեմների լուծման նկատմամբ անտարբեր վերաբերմունքի արժանացած սպան անշուշտ նույնպիսի անտարբեր վերաբերմունք է դրսևորելու ծառայողական պարտականությունների կատարման և ենթակաների նկատմամբ,

5) ոչ ճկուն կադրային քաղաքականություն, որը սպաների մեջ առաջաց-

նում է հուսահատության, վերադաս հրամանատարությանը չվստահելու, չհավատալու, «դատապարտված լինելու» զգացում և կողմնակալ մոտեցումներ:

Հարգելի՛ ներկաներ:

Գտնում եմ, որ զինվորական ծառայության գրավչությունը բարձրացնելու ուղիներից մեկը՝ սպաների նյութական և բարոյական շահագրգռումն է բանակի շարքերում ծառայելու մինչև օրենքով սահմանված ժամկետները, որը և միաժամանակ կստեղծի իրենց զբաղեցրած պաշտոնները կորցնելու նրանց ներքին մտավախություն, ապա՝ մրցակցության մթնոլորտ: Նշվածի համար խթան կարող է ծառայել խրախուսանքների աստիճանակարգի համապատասխանեցումը սպայի ծառայողական ստաժի աճին: Յուրաքանչյուր սպա պետք է իմանա, որ առանց կարգապահական տույժի ծառայելու և իր պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար պարտադիր կերպով կստանա իր ծառայողական անբասիր ստաժին համապատասխան և համարժեք նյութական խրախուսանք: Սպայի զինվորական կոչման բարձրացման չափանիշ պիտի լինեն զորամասի կազմհաստիքային կառուցվածքը, անձնակազմի, ՍՈՏ թվաքանակը, կատարվող մարտական խնդիրները, աշխարհագրական տեղադրությունը և այլն: Ծանր աշխարհագրական պայմաններում գտնվող զորամասերում ծառայող սպայակազմի զինվորական կոչումները կարելի է շնորհել նախատեսվածից 6 ամիս շուտ:

ՍՊԱՅԻ ԿԵՐՊԱՐԻ ԿԵՐՏՈՒՄԸ

Սպայակազմը ներկայացնող անձինք իրենց կերտվածքով պետք է լինեն իշխանության և անձնական պատվի վառ տիպարներ՝ հասունացած պատմական հիշողություններով ապրող հասարակությունում, դաստիարակված **ժառանգական սպայական ընտանիքներում:** Սա անհրաժեշտ է այն պարզ պատճառով, որ անգամ ամենակարգապահ և ամենափորձված զինվորները երբեք և ոչ մի տեղ ինքնուրույնաբար իրենց կյանքը չեն ենթարկում փորձության, քանի որ դրա համար չունեն բավականաչափ ներքին մղումներ**: Նրանք հետևում են միայն իրենց սպաներին:** Յուրաքանչյուր ոք, ակամայից տրվում է ինքնապահպանության բնազդին, եթե համակված չէ ավելի ուժեղ զգացումով՝ դեպի Հայրենիք սիրով, միջավայրի ազդեցությամբ և հավերժ հնչող հարցով՝ «ի՞նչ պատասխան պիտի տամ»: Հասարակ ամբոխում նման տրամադրություն անհնար է ստեղծել: Այն ծագում է միայն հասարակության ընտիր, հայրենապաշտ, արժանապատիվ հատվածում: Ֆրիդրիխ Մեծը մի առիթով ասել է, որ հաղթական է համարվում այն բանակը, որտեղ զինվորը ավելի շատ վախենում է կապրալի մահակից, քան հակառակորդի գնդակից: Հիմա «մահակը» փոխարինվել է ուրիշ միջոցներով, սակայն պահպանել է ասվածի այլաբանական նշանակությունը. զինվորին առաջնորդում է սպան, որը ծառայությունը կրում է անպարտադիր, և հենց այդ պատճառով էլ վախենում է միայն ինքն իրենից ու իր միջավայրի գնահատականից: Սպայի կերպարում է անթեղված զորքի բարոյական ուժի միակ անսպառ աղբյուրը:

Այո՛, ենթականերին ղեկավարել կարող են միայն նրանք, ովքեր ի վերուստ օժտված են առաջնորդին հատուկ հատկանիշներով, մարդիկ, որոնց մեջ զինվորը տեսնում է ոչ թե իրեն հավասարին, այլև նրան, ում նկատմամբ սովոր է եղել տածել պատկառանք ու հարգանք դեռ իր քաղաքում, գյուղում, թաղամասում կամ բակում:

Սպայի նշանակությունը այն է, որ նա ազատ ու անկախ կերպով է գնում դեպի վտանգը, ինչը և նրան բարոյական իրավունք է տալիս իր հետևից տանելու մյուսներին:

Շարունակելով խոսքս առաջնորդի որակներով օժտված սպայական կադրերի մասին՝ կոչ եմ անում մտածելու, թե ինչ միջոցներով պիտի նրանց մեջ զարգացնենք առաջնորդ զգալու իրական հնարավորություն և պայմաններ: Կարո՞ղ ենք, արդյոք, սպային ապահովել առաջնորդության երեք փոխկապված խորհրդանշական ատրիբուտներով՝ **խելքով, ուժով և կարողություններով**:

Առաջնորդի կայացման կարևոր նախապայմաններից մեկը՝ մասնագիտական գիտելիքներով, կազմակերպչական, գործնական ունակություններով, ֆիզիկական և հոգեբանական պատրաստության որակներով ենթակային գերազանցելն է:

ՍՊԱՅԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

1. Գտնվելով զորամասի տարածքից դուրս՝ սպան չպետք է փոխի իր խրոխտ կեցվածքն ու ասպետական պահվածքը, և դրանց հիմնական բնորոշիչը, բնավ, զինվորական համազգեստը չէ: Համազգեստով պետական և մասնավոր կառույցներում, հասարակական վայրերում ներկայանալիս ազգանունից առաջ սպան պետք է նշի իր զինվորական կոչումը, նրան պետք է դիմել զինվորական կոչումով և սպասարկել առաջնահերթ՝ այսպիսով ընդգծելով զինվորականի անձի կարևորությունը:

2. Ծառայողական ավտոտրանսպորտով երթևեկող զինվորականները կարող են իրենց հետ տեղափոխել փոխադրամիջոցի սպասող զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին, եթե շարժման երթուղիները համընկնում են: Դա բխում է զինվորական ընկերականության և փոխօգնության, հասարակության շրջանում սպայի դրական, ասպետական կերպարի ձևավորման և արմատավորման տրամաբանությունից:

3. Սպաների երեխաները պետք է և՛ Արցախի, և՛ ՀՀ տարածքում գտնվող բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցանվեն անվճար:

4. Անհրաժեշտ է սպայակազմի բնակարանային ապահովման գործընթացին զուգահեռաբար սահմանամերձ բնակավայրերում ազատ բնակտարածք ունեցող քաղաքացիներին հատուկ ընդունված օրենքով **պարտադրել** վարձակալական հիմունքներով իրենց հարկի տակ ապաստան տալ սպայական ընտանիքներին: **Վերջ ի վերջո, կարիքն առաջանալու դեպքում հայրենասիրությունը կարելի է նաև պարտադրել, եթե դրա անհրաժեշտությունը բխում է Հայրենիքի անվտանգության շահերից:**

5. Պաշտոնաթող սպայի համար պետք է հնարավորություն ստեղծել, որ

նա իր ուժերն ու ունակությունները ներդրի հիմնականում պետական ծառայության բնագավառներում, մասնավորապես՝ ուժային կառույցներում, կրթության ոլորտում, ընդսմին նվազագույնի հասցնել նրա՝ որպես պահակ, տաքսու վարորդ, բանվոր աշխատելու, առևտրով և ծանր ֆիզիկական աշխատանքով զբաղվելու դեպքերը: Պետք է հիշենք, որ պահեստազորի սպան ամեն ինչում երիտասարդ կադրային սպայի համար անձնական օրինակ է:

Խոսելով բանակի նկատմամբ հասարակության վերահսկողության մասին՝ կցանկանայի շեշտել հետևյալը.

1. Եթե Խորհրդային Միության Զինված ուժերի գաղափարական սնուցիչի և հասարակական վերահսկողի գերագույն գործառույթն ու դերակատարությունը դրված էր համայնավարական կուսակցության ուսերին, ապա մեր պայմաններում այն պիտի իրականացվի գործունեության ուրույն ազգային դիմագծով և գործելաոճով աչքի ընկնող 2-3 ապաքաղաքականացված հասարակական կազմակերպությունների և կառույցների միջոցով, որոնց շարքերում ներգրավված լինեն սրտացավ ու ազնիվ հայրենասեր քաղաքացիներ, հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, անառարկելի հեղինակություն վայելող անձինք: Մեր բանակի դռները մեկընդմիշտ պետք է փակել այն անհասկանալի ու անդիմագիծ հասարակական կազմակերպությունների ու կառույցների առաջ, որոնք ի սկզբանե Զինված ուժերի հանդեպ ունեցել են բացասական նախատրամադրվածություն, այցելում են զորամասեր միայն ու միայն վատը տեսնելու և արձանագրելու ներքին անզսպելի մղումով կամ այցելում են հենց այնպես՝ աննպատակ: **Բանակը պետք է լինի հասարակության համար հասու, բայց միևնույն ժամանակ՝ ոչ հանրամատչելի կառույց:**

2. Թեոդոր Ռուզվելտի հայտնի խոսքը՝ «Ամեն մարդ իր երկրի համար և ամեն երկիր իր մարդու համար», պետք է դնել տարածքային սկզբունքով կատարվող զորահավաքի հիմքում:

ՃԿՈՒՆ ԵՎ ՍՏԱՏԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ. ԴԻՏԱՐԿՈՒՄ ՀՀ ՊՆ ՏԵՍԼԱԿԱՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու

ՆԱԽԱԲԱՆ

1967 թ. առաջին իսրայելական կայծակնային պատերազմից հետո ԽՍՀՄ-ը և արաբական աշխարհը երազում էին ռևանշի մասին: Իսկ «Հյուծման պատերազմում» ԽՍՀՄ-ի նկատմամբ փաստացի տարած հաղթանակից հետո Իսրայելի ոչնչացումը կարծես դարձել էր ԽՍՀՄ ԶՈՒ-ի ԳՇ գործը: Պլանավորվում էր նոր պատերազմ, և լավ էր պլանավորվում: Առաջին անգամ Իսրայելին հնարավոր եղավ անակնկալի բերել: Պատերազմը կոչվեց. «Դատաստանի օրվա» պատերազմ, քանի որ այն սկսվեց հենց այդ օրը, և անակնկալը պայմանավորվեց նաև այդ հանգամանքով:

Հարձակումն սկսվեց 1973 թ. հոկտեմբերի 6-ի կեսօրին: Առաջին հարվածն Իսրայելի համար անսպասելի էր: Արաբներն սկզբում օդային մարտերում նույնիսկ հասան որոշակի հաջողությունների, որոնցով շատ էին ոգևորված: Կան փաստացի բազում ապացույցներ, որ առաջին օրերին իսրայելական օդուժը կրել էր լուրջ կորուստներ՝ մինչև երկու-երեք տասնյակ ինքնաթիռ: Բար-Լևի բնագիծը հաղթահարվել էր հրետանու, օդուժի և հատուկ նախանշանակման զորքերի խելամիտ համագործակցության շնորհիվ: Հրետանին միայն կրակային նախապատրաստության առաջին րոպեին իսրայելական նշանակետերի ուղղությամբ արձակել էր ավելի քան 10500 արկ[1]: Հոկտեմբերի 6-ի 15:30-ին գրավված էր առաջին հենակետը: Զորքերը շատ գրագետ էին գործում և փայլուն վարժեցում էին ստացել: Իսրայելական զորքը համառորեն դիմադրում էր՝ հաճախ ցուցադրելով իսկական հերոսություն, սակայն դա անօգուտ էր[2]: Եգիպտական զորքերի մարտունակությունն իր գործն անում էր: Բար-Լևի բնագծում չհանձնվեց միայն մեկ հենակետ՝ «Բուդապեշտը», և մինչև պատերազմի ավարտն էլ մնաց առանց նվաճման: Փաստացի սա ԵՀՊ-ից հետո այն եզակի դեպքերից էր, որ ՑԶ-ը հաջողությամբ ճեղքեց ամրացված բնագիծը: Արդեն հաջորդ օրը Եգիպտոսը, անցնելով Սուեզը, Սինայի թերակղզում՝ 10-20 կմ մարտավարական խորության վրա, ուներ մոտավորապես 90000 զորք, 1000 տանկ, իսկ «կոմանդոս» գու-

[1] Տես *Gamal Hammad.* Military Battles on the Egyptian Front (in Arabic). Ed. 1. Dār al-Shurūq, 2002, PP. 90–92:

[2] Տես *Saad el Shazly.* The Crossing of the Suez. Revised Edition. San Francisco, 2003, PP. 231–232:

մարտակները հակառակորդի թիկունքում գրավել էին հաղորդակցության կարևոր ուղիները[3]: Գեներալ Ահմեդ Իսմաիլ Ալին էյֆորիայի մեջ էր, ուղղակի ցնծում էր:

ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՔԱՅԼԵՐԸ

Իսրայելական հրամանատարությունը, բաց թողնելով առաջին հարվածը, փորձում էր արագ ուշքի գալ: Հապճեպ ձեռնարկվում էին հակաքայլեր: Հարավային ռազմաճակատի հրամանատար գեներալ Շմուել Գոնենը փորձեց արագ հակահարված հասցնել: Իսրայելական առաջին հակահարվածը, որը հասցրեց Ա. Մենդլերի հրամանատարությամբ գործող 252-րդ զրահատանկային կանոնավոր դիվիզիան, ոչինչ չտվեց: Եգիպտացիները լավ դիրքեր էին գրավել ու հոծ կրակով դիմավորեցին երեք իսրայելական տանկային բրիգադներին: Եգիպտական զորքերում կային չափազանց մեծ քանակությամբ հակատանկային միջոցներ: Փաստացի, յուրաքանչյուր երրորդ զինվորն սպառազինված էր հակատանկային նռնականետով կամ հակատանկային հրթիռային համալիրով, ինչի շնորհիվ էլ առաջին իսրայելական տանկային գրոհը հետ մղվեց[4]: Դիվիզիայի ավելի քան 260 տանկից 140-150-ը շարքից դուրս էին եկել կամ ոչնչացվել:

Նույն օրը՝ հոկտեմբերի 7-ին, մարտական գործողությունների շրջան հասան արդեն իսրայելական 143-րդ և 162-րդ պահեստային դիվիզիաները: Առաջինի հրամանատարն էր գեներալ Արիել Շարոնը, իսկ երկրորդինը՝ Աբրահամ Ադանը: Այդպիսով Իսրայելը մարտական գործողությունների շրջանում արդեն ուներ երեք դիվիզիա, մոտավորապես 400-500 տանկ: Այդ ընթացքում իսրայելական օդուժը համառորեն փորձում էր հասնել օդային գերազանցության, սակայն դա չէր հաջողվում: Ադանի դիվիզիան տեղակայվեց թերակղզու հյուսիսային մասում, Շարոնի դիվիզիան զբաղեցրեց կենտրոնը, իսկ հարավում Մենդլերի լրահամալրվող դիվիզիան էր[5]: Ռազմաճակատը դանդաղ համալրվում էր նաև իսրայելական հետևակայիններով ու դեսանտային ուժերով:

Ցահալի ԳՇ պետ, գեներալ Դավիդ Էլազարը հոկտեմբերի 7-ի երեկոյան հենց ռազմաճակատում անցկացրեց խորհրդակցություն և նշեց, որ առավոտյան պահեստազորից կստացվեն մոտ 640 տանկ և առնվազն 530-ը կվերաբաշխվեն երեք դիվիզիաների միջև. 200-ը կտրվի Ադանին, 180-ը՝ Շարոնին, իսկ 150-ը՝ Մենդլերին, որի դիվիզիան դեռ կպաշտպանվի: Մնացածը կմնան ռեզերվում: Զրանցքից այս կողմ եգիպտական տանկերի թիվը գնահատվում էր մոտ 400, սակայն Իսրայելի ԳՇ պետի պատկերացմամբ դրանց թիվը առնվազն երկու անգամ քիչ էր: Լսելով ենթակաների կարծիք-

[3] Տես *George W. Gawrych.* The 1973 Arab-Israeli War: The Albatross of Decisive Victory. Combat Studies Institute. Fort Leavenworth, 1996, P. 39:

[4] Տես *Саад эль-Шазли.* Форсирование Суэцкого канала. М., 2008, сс. 228–257:

[5] Տես *George W. Gawrych.* The 1973 Arab-Israeli War:..., P. 41:

ները՝ նա նաև նշեց, որ անհրաժեշտ է հակահարձակում կազմակերպել և այն չուշացնել, թեև ոմանք պնդում էին, թե հետևակն ու հրետանին դեռ բավարար չեն[6]:

Եգիպտական զորքերը շարունակեցին առաջխաղացումը և զբաղեցրին նոր բնագծեր: Ավելին, նոր բնագծերում նրանք կազմակերպեցին գրագետ պաշտպանություն: Ամեն դեպքում հոկտեմբերի 8-ի վաղ առավոտյան իսրայելական բանակն անցավ հակահարձակման, որը, սակայն, վատ համադասման, ներդաշնակման և թերի համալրվածության պատճառով մատնվեց անհաջողության: Կորցնելով մոտ 100 տանկ՝ Ադանի դիվիզիան գրեթե կորցրեց մարտունակությունը, իսկ օդուժը չկարողացավ ցուցաբերել անհրաժեշտ օգնություն[7]:

Եգիպտական զորքերը նույն օրը փորձեցին կրկին անցնել հարձակման: Սակայն Արիել Շարոնի 143-րդ տանկային դիվիզիան կարողացավ մի կերպ կանգնեցնել արաբներին: Հաջորդ օրը ռազմաճակատում համեմատաբար անդորր էր: Իսրայելական հրամանատարությունը կատարեց փոփոխություններ և ուժերի վերախմբավորում:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Եգիպտոսի զորքերը չէին կողմնորոշվում՝ առաջանալ, թե՞ մնալ դիրքերում. հաջողությունները շփոթեցրել էին նրանց: Պաշտպանության նախարար Ահմեդ Իսմաիլ Ալին պնդում էր, թե հարկավոր է շարունակել հարձակումը, իսկ շտաբի պետ գեներալ Սաադալ Շազլին հակառակ կարծիքի էր՝ պնդելով, որ զորքերը չեն կարող դուրս գալ հզոր ՀՕՊ-ի գոտուց: Միանշանակ կողմնորոշում չունեին նաև խորհրդային գեներալները, որոնք իրականում կառավարում էին եգիպտական բանակը: Նախագահ Սադատի ճնշման տակ եգիպտական զորքերը 2-րդ և 3-րդ բանակներով (4-րդ և 21-րդ, 23-րդ զրահատանկային, 18-րդ, 19-րդ հետևակային, 6-րդ մոտոհետևակային դիվիզիաները և բազմաքանակ այլ զորքեր) հոկտեմբերի 14-ին շարունակեցին հարձակումը: Նրանք ռեզերվում թողել էին ևս վեց դիվիզիա, որոնք պետք է ջրանցքը պաշտպանեին դեսանտային հարձակումներից: Դրանով Եգիպտոսի նախագահը փորձում էր նաև օգնել դաշնակից Սիրիային, որի զորքերը չէին կարողանում առաջ շարժվել:

Եգիպտական կործանիչների վրա դրվեց օդային պաշտպանության խնդիրը: Եգիպտական հարձակումը շարունակվեց ամբողջ Սինայի թերակղզում՝ վեց հիմնական ուղղություններով: 18-րդ հրաձգային դիվիզիան, ուժեղացված նորագույն «S-62» տանկերի բրիգադով, Կանտարի ուղղությու-

[6] Տես *Trevor N. Dupuy.* Elusive Victory: The Arab-Israeli Wars, 1947-1974. Military Book Club, New York-Hagerstown-San Francisco-London, 2002, P. 425; *George W. Gawrych.* The 1973 Arab-Israeli War:..., PP. 41–42:

[7] Տես *Գամալ Համադ,* Նշ. աշխ., էջ 167–177; *Edgar O'Balance.* No Victor, No Vanquished: The Arab-Israeli War, 1973. Presidio, 1997, P. 104:

նից հարձակվեց դեպի Ռոմանի: Կենտրոնական հատվածում հարձակվում էր 21-րդ տանկային դիվիզիան, իսկ հարավում հատուկ նախանշանակման ջոկատները (ներառյալ՝ 19-րդ հետևակային դիվիզիայի հետևակային բրիգադը, տանկային բրիգադը և 6-րդ մեքենայացված դիվիզիայի 113-րդ մեքենայացված բրիգադը) շարժվեցին դեպի հարավ՝ Ռաս-Սուդարի ուղղությամբ: Հարձակման երեք հյուսիսային ուղղությունները գեներալ Սաադ Մամունի 2-րդ բանակի վերահսկողության տակ էին, և նրա շտաբը գտնվում էր Իսմայիլիայում: Երեք հարավայինները՝ գեներալ Աբդ ալ Մունեմ Վասելի 3-րդ բանակի վերահսկողության տակ, որի առաջխաղացման հյուսիսային ուղղությունը ձգվում էր դեպի արևելք՝ Ձիդդիի լեռնանցքը, և Ում-Կուշեյբեում տեղաբաշխվող իսրայելական հարավային ճակատի շտաբը: Հարավային ուղղությունը դեպի Ռաս-Սուդար էր[8]: Եգիպտական բանակն ուներ մոտ 1000 տանկ՝ իսրայելական մոտ 700-ի դիմաց[9]:

Հյուսիսում գեներալ Ա. Ադանը հետ մղեց եգիպտական զորքերի առաջին գրոհները, և վերջիններս կորցրին մոտ 50 տանկ: Կենտրոնում գրագետ պաշտպանություն կառուցած Շարոնի դիվիզիան անցավ հակագրոհի, որի արդյունքը եղավ եգիպտական 1-ին մեքենայացված բրիգադի ոչնչացումը, իսկ օրվա վերջում եգիպտական 21-րդ դիվիզիան կորցրեց նաև 110 տանկ: Հարավում եգիպտական զորքերը նախատեսել էին թևանցում կատարել, սակայն գեներալ Կալման Մագենը պատրաստ էր նման տարաշարժի և պաշտպանությունը կառուցել էր համապատասխան ճկունությամբ: Կատաղի մարտերում ոչնչացվեց եգիպտական 4-րդ զրահատանկային դիվիզիայի 3-րդ տանկային բրիգադի մեծ մասը, իսկ երբ եգիպտական տանկերը, կենտրոնացնելով մնացած ուժերը, փորձեցին շարժվել դեպի հարավ և դուրս եկան եգիպտական «հրթիռային անձրևանոցի» տակից, ջախջախվեցին իսրայելական օդուժի հարվածներով[10]:

Սա դեռ վեց ուղղությամբ հարվածելու պահից արդեն ռազմավարական սխալ էր: Սակայն այդ բաց թողնված ժամանակը իսրայելական բանակը կարողացել էր ճիշտ օգտագործել: Եգիպտական զորքերի հարձակումը ձախողվեց, նրանք կորցրին մոտավորապես 250 տանկ: Հոկտեմբերի 15-ին իսրայելական ուժերը, արագ վերախմբավորվելով, անցան հակահարձակման նաև եգիպտական ռազմաճակատում: Հարվածն ուղղվեց եգիպտական երկու բանակների կցակետին: Իսրայելական բանակը առաջին հարվածի ժամանակ լայնորեն կիրառեց գրոհող շարժունակ խմբերը, որոնք անակնկալի բերեցին եգիպտացիներին: Վերջիններս սպասում էին դասական հարված նախ օդուժով, հետո տանկերի զանգվածով: Սակայն իսրայելական տանկե-

[8] Տես *Mohamed Abdel Ghani El-Gamasy*. The October War: Memoirs of Field Marshal El-Gamasy of Egypt. Cairo, 1993, PP. 264–290:

[9] Տես *Zeev Schiff.* A History of the Israeli Army, 1874 to the present. Macmillan, 1984, P. 310:

[10] Տես *George W. Gawrych.* The 1973 Arab-Israeli War:..., PP. 56–57:

որը լայնածավալ գրոհն սկսեցին միայն այն ժամանակ, երբ գրոհող շարժունակ խմբերը, որոնք լավ սպառազինված ու փորձառու ուժեղացված դասակներ ու վաշտեր էին, գրավեցին առաջին բնագծերը, առաջին խրամատները:

Զրահատանկային բրիգադները, փայլուն կերպով համագործակցելով այդ գրոհող խմբերի հետ, կարողացան ճեղքել ռազմաճակատը և անցնել Սուեզի ջրանցքի արևմտյան ափը: Անցումը բավական բարդ էր, քանի որ արևմտյան պետությունները Իսրայելին չէին վաճառում մեծ կամուրջներ: Իսրայելը երեսնամյա կամուրջներ՝ որպես մետաղաջարդոն գնել էր Ֆրանսիայում ու նորոգելով դարձրել օգտագործման համար պիտանի: Ինչպես նաև տանկերի համար կիրառվեցին մոտորանավակներ:

Հոկտեմբերի 17-ին դեռ հնարավոր էր հետ մղել Սուեզի ջրանցքի արևմտյան ափն անցած իսրայելական զրահատանկային դիվիզիայի սակավաթիվ ուժերին, եթե եգիպտական և նրանց օգնող ալժիրյան զորքերը ժամանակին անցնեին հակահարձակման: Թեև իսրայելական զինվորները ևս զինված էին ժամանակակից ամերիկյան հակատանկային նռնականետներով ու հրթիռային համալիրներով, միևնույն է, այդ ուժերը չափազանց փոքր էին հզոր ու կազմակերպված գրոհը հետ մղելու համար: Բայց դա տեղի չունեցավ անկազմակերպվածության պատճառով, ինչպես նաև իսրայելական օդուժը Սիրիական ճակատի վերացումից հետո ազատություն էր ստացել և օդում հաստատել գերազանցություն: Զրանցքն անցած առաջին դիվիզիան զարգացրեց սրընթաց հարձակում[11]: Ճիշտ է, իսրայելական 87-րդ հետախուզական դիվերսիոն գումարտակը Իսմայիլիա քաղաքի մոտ գլխովին ջախջախվեց, սակայն դա հետևանք էր այն բանի, որ իսրայելական հետախուզադիվերսիոն խմբերը չափազանց շատ էին խորացել եգիպտական զորքերի թիկունք և լուծում էին մեծ խնդիրներ՝ հակառակորդի զորքերի մատակարարման խափանում, պահուստային ուժերի ոչնչացում, անգամ ՀՕՊ-ի դիվիզիոնների ոչնչացում և այլն[12]: Եգիպտական ՀՕՊ-ի դիվիզիոնները դեռ երեք օր առաջ էին դարձել առաջին հետախուզադիվերսիոն խմբերի զոհը: Արդեն հոկտեմբերի 19-ին ջրանցքի վրա կար չորս կամուրջ, որոնցով մինչև հոկտեմբերի 22-ը Իսրայելը արևմտյան ափ տեղափոխեց ևս 7 զրահատանկային դիվիզիա և գրավեց զգալի տարածքներ[13]: Ստեղծվել էր վտանգ Եգիպտոսի մայրաքաղաքի վրա լայնածավալ հարձակման ձեռնարկման:

Հիմնական դերը կրկին կատարեց ավիացիան, որն իր գերազանցության շնորհիվ անմիջականորեն ապահովեց տանկային դիվիզիաների գրագետ ու սրընթաց հարձակումները:

[11] Տես *George W. Gawrych.* The Albatross of Decisive Victory: War and Policy Between Egypt and Israel in the 1967 and 1973 Arab-Israeli Wars. Greenwood Publishing Group, 2000, PP. 220–230:

[12] Տես *Abraham Rabinovich.* The Yom Kippur War: The Epic Encounter that Transformed the Middle East. New York, 2004, PP. 400–477:

[13] Տես նույն տեղում:

Եգիպտական բանակը թույլ տվեց մի քանի ռազմավարական և օպերատիվ մակարդակի սխալներ.

1. ձեռնարկելով իսրայելական պաշտպանության փայլուն ու անակնկալ մարտավարական ճեղքում՝ չփորձեց նախաձեռնությունը պահել իր ձեռքում և ի սկզբանե երկյուղ ուներ իսրայելական հակահարձակումից: Զորքերն ավելի շատ պաշտպանվում էին, քան փորձում զարգացնել հարձակումը: Այսինքն՝ առաջնային խնդրի կատարումից հետո նրանք անցան պաշտպանության, և հետագա հարձակումները մարտավարական բնույթի էին,

2. ժամանակ կորցրեց, ինչով Իսրայելին հնարավորություն տվեց մոբիլիզացնելու ուժերը և շտկելու իրավիճակը,

3. նախնական հաջողությունները չզարգացրեց, հատկապես՝ ավիացիայի առումով: Ունենալով ՀՕՊ-ի հզոր աջակցություն՝ չփորձեց ինտենսիվ կերպով աշխատել վերջնական օդային գերազանցության հասնելու համար,

4. հարձակման երկրորդ փուլն սկսեց միանգամից վեց ուղղություններով՝ կորցնելով հիմնական հարվածի ուղղությամբ ձեռք բերված իր հիմնական առավելությունը՝ քանակական գործոնը,

5. չսպասելով Իսրայելի նոր մարտավարական լուծումների՝ պաշտպանությունը կառուցեց միայն անցյալի փորձի հիման վրա, իսկ յուրային զորքերի մարտավարական ճկունության վրա ուշադրություն չդարձրեց: Փաստացի, եգիպտական բանակը պատրաստ չէր հաղթահարելու իսրայելական ճկուն պաշտպանությունը: Նույնը տեղի ունեցավ նաև Սիրիական ճակատում, որը Իսրայելի համար նույնիսկ ավելի կարևոր էր:

Հատկանշական է, որ գլխավոր ճակատամարտի օրը իսրայելական բանակի շտաբի պետ գեներալ Դավիդ Էլազարը հեռագրեց վարչապետ Գոլդա Մեիրին: «Գոլդա՛, ամեն ինչ կարգին կլինի, մենք կրկին մենք ենք, իսկ նրանք՝ կրկին նրանք»:

Սիրիական ռազմաճակատում պատերազմական գործողություններն առաջին իսկ օրից մինչև պատերազմի ավարտն ավելի սաստիկ բնույթ կրեցին: Դա հասկանալի է, քանի որ սիրիական ճակատից Իսրայելը ավելի շատ էր վտանգված: Սիրիական բանակի 6-7-անգամյա քանակական առավելությունը և խորհրդային հրամկազմի ներկայացուցիչների առկայությունը ոչինչ չտվեցին: Այստեղ տեղի է ունեցել ԵՀՊ-ից հետո ամենամեծ տանկային ճակատամարտը, որտեղ արաբական կողմից մասնակցում էին մոտավորապես 1300 խորհրդային նոր «Т-55» և «Т-62» տանկեր: Դրանց դիմակայում էին ընդամենը 180 իսրայելական տանկեր[14]: Այսինքն՝ սիրիական բանակն իր առջև դրել էր ռազմավարական խնդիր. գրավելով Հոլանի բարձունքները՝ դուրս գալ Իսրայելի համար կենսական նշանակություն ունեցող տարածքներ և սպառնալ պետության վերացմամբ: Սինայի թերակղզում ծավալված մարտական գործողությունները Իսրայելից բավական հեռու էին, այդ

[14] Տես *Edgar O'Ballance.* No Victor, No Vanquished: The Yom Kippur War. Barrie & Jenkins Publishing, 1979, chap. 7: "The Syrians attack", PP. 119–146:

իսկ պատճառով այնքան վտանգավոր չէին, որքան մարտերը Հոլանի բարձունքներում: Եթե իսրայելական պաշտպանությունը Հոլաններում ճեղքվեր, ապա սիրիական զորքերը առանց որևէ խոչընդոտի մի քանի ժամում կհայտնվեին Իսրայելի կենտրոնում:

Սիրիական հրամանատարությունը մարտական գործողությունների սկզբում Հերմոն լեռան վրա ուղղաթիռներով իջեցրել էր «Կոմանդոս» խումբ, որն արագորեն գրավել էր այնտեղ տեղակայված հզոր ՌՏԿ-ն և պաշտպանական համակարգը:

Պահեստազորի զինվորները զորակոչվելուց հետո իսկույն ևեթ նետվում էին Սիրիական ճակատ: Իրավիճակի բարդության և ժամանակի սղության պատճառով պահեստազորայիններին զորակոչելուց անմիջապես հետո, առանց «ներդաշնակված անձնակազմերի» (պահեստազորային մշտական անձնակազմեր) ստեղծման, տանկերի վրա գնդացիրների տեղադրման և նշանոցի ճշգրտման, կցում էին այդ տանկերին և ուղարկում ճակատ:

Սակայն սիրիական բանակը, ինչպես և եգիպտականը Սինայի թերակղզում, ձգտում էր դուրս չգալու յուրային ՀՕՊ-ի հրթիռային մարտկոցների ծածկապաշտպանության գոտուց: Նա ևս իր ստորաբաժանումները համալրել էր մեծ քանակությամբ հակատանկային կայանքներով, ինչը, սակայն, այնքան էլ արդյունավետ չէր, քանի որ ռազմական գործողությունների թատերաբեմը անհարթ, բլրոտ տեղանք էր:

Սիրիական զորքերը ակնկալում էին, որ իսրայելական պահեստազորի կենտրոնացումը կտևի նվազագույնը մեկ օր, մինչդեռ առաջին պահեստազորայինները ժամանել էին Հոլանի բարձունք պատերազմի սկզբից 15 ժամ անց:

Պատերազմի առաջին օրվա ավարտին Հոլանի բարձունքների ակտիվ հատվածում 9-ը 1-ի հարաբերակցությամբ թվային գերակշռություն ունեցող սիրիական զորքերը հասել էին որոշակի հաջողությունների: Իսրայելական հակատանկային խրամուղին անցնելուց հետո սիրիական ուժերի մի մասը (տանկային բրիգադը) թեքվեց դեպի հյուսիս-արևմուտք և հարձակում ձեռնարկեց նախկինում չշահագործվող անդրարաբական նավթամուղի «նավթային ճանապարհով», որն անկյունագծով հատում էր Հոլանի բարձունքը: «Նավթային ճանապարհը» մարտավարական տեսանկյունից հույժ կարևոր էր. Իսրայելական պաշտպանության ճեղքման վայրից այն ձգվում էր դեպի Նաֆախ, որը ոչ միայն իսրայելական դիվիզիայի հրամանատարության տեղակայման վայրն էր, այլև կարևոր մարտավարական ճանապարհների խաչմերուկ:

Ըստ սիրիական պաշտոնական պատմագրության՝ պատերազմն սկսվեց շաբաթ օրը՝ ժամը 1:50-ին, թե՛ Սուեզի, թե՛ Հոլանի ճակատներում միաժամանակ: Երեկոյան ժամը 5-ին սիրիական տանկերն արդեն հասել էին 1967 թ. սահմանագիծը՝ Ձիսր Բանաթ Յակուբ (Հակոբի դստրեր կամուրջ): Սիրիացի հրամանատարը, չհավատալով իր հաջողությանը, կասկածում էր, որ հեշտ առաջընթացը իսրայելական ծուղակ է, և որոշեց սպասել մինչև

հաջորդ առավոտ: Այդ 12 ժամը իսրայելական բանակի համար եղան վճռորոշ, քանի որ նա դրանք ճիշտ օգտագործեց գրագետ և արագ զորահավաքի համար: Սակայն իրականում մեծ կանգառ չի եղել. պարզապես սիրիական բանակը, հաջողության արագորեն չհասնելով, հաճախ վերախմբավորումներ էր կատարում նոր հարձակումներ ձեռնարկելու համար:

4-օրյա մարտերի ընթացքում Յանուշ Բեն-Գալի հրամանատարությամբ գործող իսրայելական 7-րդ տանկային բրիգադը պահում էր Հոլանի հյուսիսում գտնվող բլուրների շղթան, որը հյուսիսից ապահովում էր Նաֆախում տեղակայված դիվիզիայի շտաբը[15]:

Իսրայելական ստորաբաժանումների վիճակը անհամեմատ ավելի ծանր էր Հոլանների հարավում: 188-րդ տանկային «Բարաք» բրիգադը մեծ կորուստներ էր կրում, քանի որ տեղակայված էր պատսպարման բնական պայմաններից զուրկ տեղանքում: Բրիգադի հրամանատար գնդապետ Իցհակ Բեն-Շոխամը իր տեղակալի և օպերատիվ բաժնի պետի հետ (յուրաքանչյուրն իր տանկով) զոհվեցին ճակատամարտի երկրորդ օրը, երբ սիրիական զորքերը հուսահատ փորձեր էին անում բացելու ճանապարհ դեպի Կիներետ լիճ և Նաֆախ: Այդ պահի դրությամբ բրիգադը դադարել էր որպես միասնական զորամիավորում հանդես գալուց, սակայն, մյուս անձնակազմերը շարունակում էին միմյանցից մեկուսի վարել մարտ[16]:

Պահեստազորայինների գալուն պես Հոլանի բարձրավանդակում իրավիճակն արմատապես փոխվեց: Համալրող զորքերին հաջողվեց սկզբում դանդաղեցնել, ապա՝ հոկտեմբերի 8-ից սկսած, կանգնեցնել սիրիական բանակի առաջխաղացումը: Լայն տարածվածությամբ աչքի չընկնող Հոլանի բարձունքն իհարկե չէր կարող ծառայել որպես բախարգել, ինչպես Սինայի թերակղզին էր հարավում, սակայն բավական լուրջ մարտավարական ամրություն էր, որը սիրիական ստորաբաժանումներին հնարավորություն չէր տալիս հրթիռակոծելու ներքևում գտնվող իսրայելական բնակավայրերը: Իսրայելական զորքերի վճռական հակագրոհները իրենց նպատակին հասան. Չորեքշաբթի օրը՝ հոկտեմբերի 10-ին, վերջին սիրիական միավորումը դուրս մղվեց «Կարմիր գծից»՝ մինչպատերազմյան սահմանագծից[17]:

Հոկտեմբերի 9-ին իսրայելական ավիացիան սկսեց հարվածել Սիրիայի գլխավոր մարտավարական օբյեկտներին: Նույն օրը «ջախջախվում է» սիրիական գլխավոր շտաբը[18]:

---

[15] Տես *Աբրահամ Ռաբինովիչ,* Նշ. աշխ., էջ 300–498:

[16] Տես *Edgar O'Ballance.* No Victor, No Vanquished: The Yom Kippur War, chap. 7: "The Syrians attack", PP. 119–146:

[17] Տես *Աբրահամ Ռաբինովիչ,* Նշ. աշխ., էջ 300–380, *Edgar O'Ballance.* No Victor, No Vanquished: The Yom Kippur War, chap. 7: "The Syrians attack", PP. 119–146:

[18] Տես *David Nicolle, Tom Cooper*. Arab MiG-19 and MiG-21 Units in Combat. Osprey Publishing, 2004, PP. 66–67:

Իսրայելի ռազմական ղեկավարությունը կանգնած էր երկընտրանքի առջև. շարժվել առաջ, այսինքն՝ հարձակում ձեռնարկել սիրիական տարածքում, թե՞ բավարարվել 1967 թ. սահմանով: Հոկտեմբերի 10-ի ամբողջ օրն իսրայելական հրամանատարությունը քննարկում էր այդ հարցը: Զինվորականներից շատերը հարձակումը դադարեցնելու կողմնակից էին, քանի որ դա հնարավորություն կտար ավելի շատ զորամիավորումներ տեղափոխելու Սինայի թերակղզի, որտեղ դրանից երկու օր առաջ Խիզայոնի շրջանում Շմուել Հոնենը պարտություն էր կրել: Ոմանք էլ կողմ էին Դամասկոսի ուղղությամբ հարձակմանը: Նրանց կարծիքով՝ այդ քայլը Սիրիային դուրս կմղեր պատերազմից և կամրապնդեր Իսրայելի՝ որպես տարածաշրջանային գերտերության կարգավիճակը: Հարձակման հակառակորդները պնդում էին, որ սիրիական տարածքում կան բազմաթիվ հզոր պաշտպանական ամրություններ՝ հակատանկային խրամատներ, ականապատ դաշտեր, երկարաժամկետ կրակակետեր, ինչի պատճառով սիրիական բանակի հարձակումը վերսկսելու դեպքում ավելի հարմար կլինի պաշտպանվել՝ օգտագործելով Հոլանի բարձունքների առավելությունները, քան սիրիական հարթավայրային տեղանքը: Բանավեճին վերջակետ դրեց վարչապետ Գոլդա Մեիրը: Նրա կամային որոշումը քաղաքական էր և վերջնական՝ անցնել «Կարմիր գիծը»… Նախատեսվում էր հարձակումն սկսել հաջորդ օրը՝ հինգշաբթի՝ հոկտեմբերի 11-ին:

Հոկտեմբերի 11–14-ը իսրայելական բանակը շարժվեց դեպի Սիրիայի տարածքի խորքը՝ գրավելով 32 կմ^2: Սակայն արաբական զորքերը կարողացան կազմակերպված ձևով նահանջել դեպի երկրորդ գիծը: Ծանր հրետանին հնարավորություն էր ստանում այս նոր դիրքերից ռմբակոծելու ճակատից 40 կմ հեռավորության վրա գտնվող Դամասկոսը: Փաստորեն, սիրիական ճակատում իսրայելական բանակն ավելի ծանր մարտեր է մղել, սակայն ավելի շուտ է հաջողության հասել: Դա հնարավորություն տվեց եգիպտական վեց ուղղություններով կազմակերպված հարձակման ժամանակ ուժերը վերախմբավորել և ուղղել դեպի Սինայ, ինչը շատ կարևոր էր, հատկապես ավիացիայի առումով:

Երկու ռազմաճակատում էլ, տեղի ունեցած խոշոր տանկային մարտերին զուգահեռաբար վարվում էր ինտենսիվ հրատենային կրակ, մղվում էին տասնյակ ինքնաթիռների մասնակցությամբ օդային և հակաօդային մարտեր: Լայնորեն կիրառվեցին ՀՏԿՀ-ներ և ՀՕՊ-ի հրթիռներ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արաբական ուժերը ջախջախիչ պարտություն կրեցին, Դամասկոսն ու Կահիրեն գրավելու վտանգը նրանց ստիպեց դադարեցնել մարտական գործողությունները: Իսրայելական տանկային դիվիզիաների հարձակումները շատ գրագետ էին և համագործակցված:

Թեև եգիպտական և սիրիական բանակները խորհրդային ռազմագիտական դպրոցի լավագույն ներկայացուցիչների ջանքերով երկար ժամանակ

պատրաստվել ու պլանավորել էին պատերազմը, ժամանակի և միջոցների խնդիր չունեին և կարողացել էին լավ քողարկել իրենց պլանները, սակայն կրեցին պարտություն: Այն ուներ մի քանի հստակ պատճառ.

• զորքերի և, հատկապես, զորատեսակների դերակատարության սխալ ընկալում-մոտեցում,

• գործողությունների վատ կառավարում, հատկապես՝ զորատեսակների միջև համադասվածության տեսակետից,

• կաղապարված ընկալումներ, ոչ ճկուն մոտեցումներ,

• նախաձեռնողության զիջում, անհամարձակ կառավարում,

• հրամանատարության ինքնուրույնության պակաս,

• տեխնիկական հագեցվածության պակաս, հատկապես՝ կառավարման տեխնոլոգիաների առումով:

Արաբական երկրները օպերատիվ արվեստի առումով որևէ նոր նվաճում չունեցան, բոլոր լուծումներն ու մոտեցումները խորհրդային էին և բավական վատ կատարված: Զորքերն ու զորամիավորումները կիրառվում էին մեծ խտությամբ, երկար նախապատրաստությունից հետո, մեծ շարակարգությամբ, դանդաղ, հզոր կրակային աջակցության պարագայում և հրամանատարների նվազ ինքնուրույնությամբ: Բանակներն ու բանակախմբերը կիրառվում էին երկու և ավելի շարակազմով: Ճեղքման համար նախատեսված զորամիավորումները գործում էին առաջին մարտակարգում, լավ հագեցած էին, սակայն ունեին ինքնագնաց հրետանու և, հատկապես, դրա կառավարման առնչությամբ խնդիրներ: Հարձակման արագությունը բավական ցածր էր, օդային դեսանտի կիրառությունը՝ սահմանափակ: Այս ամենն սկզբում հնարավորություն տվեց հաղթահարելու ստատիկ, խոր ամրացված պաշտպանական բնագիծը, սակայն երբ իսրայելական պաշտպանությունը փոխեց մարտավարությունը և կիրառեց ավելի ճկուն պաշտպանության մարտավարություն, եգիպտական բանակը վերը բերված թերությունների պատճառով ի վիճակի չեղավ հաղթահարելու այն: Նույնը տեղի ունեցավ սիրիական ճակատում, որտեղ իսրայելական զորքերը, ի սկզբանե ունենալով նվազ հարաբերակցություն, անցան ճկուն պաշտպանության, որի ժամանակ նահանջում էին գրագետ վերախմբավորումներով ու հակագրոհներով, ինչի շնորհիվ պահպանում էին մարտունակությունն ու ընթացքում նաև համալրվում: Այստեղից մի կարևոր հետևություն. պաշտպանության ճկունությունը որոշիչ է:

Իսրայելի այս հաղթանակը ճակատագրական եղավ ամբողջ արևմտյան ռազմական մտքի համար: Վիետնամական պատերազմում կրած ծանր պարտությունից հետո ամերիկյան ռազմական միտքը գտնվում էր որոշակի հոգեբանական ընկճվածության վիճակում, և այս հաղթանակն ուղղակի փրկության պես մի բան էր նրանց համար, ովքեր շարունակում էին պնդել, թե Վիետնամում իրենք համակարգային պարտություն չեն կրել խորհրդային ռազմական համակարգից, և հնարավոր է կանգնեցնել խորհրդային տանկային լավաները: Այս պատերազմի փորձի ուսումնասիրությունից էր նաև, որ Դ. Ստարիի, Դ. Մորելիի, Ձ. Բոյդի և մյուսների հեղինակությամբ ծնվեցին

ամերիկյան նոր օդացամաքային օպերացիաների տեսությունը և, որպես արդյունք, բոլորովին այլ մակարդակի պատերազմներն ու հաղթանակները[19]: 1973 թ. հաղթանակը, իհարկե, անկանոն մի բան չէր. Այդ նույն արևմտյան ռազմական մտքի հաղթանակն էր, որը նոր թափ ու խորություն հաղորդեց ռազմական տեսական մտքին:

ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԻՆԱԿԸ

ԵՀՊ-ից հետո խոշորագույն զինված բախումը 1991 թ. հունվարի 17-ից մինչև մարտի 6-ը Պարսից ծոցի գոտում տեղի ունեցած պատերազմն էր: Այս պատերազմում դաշնակիցներն ստիպված եղան ճեղքել իրաքյան բանակի խոր շարակարգված պաշտպանությունը:

Առաջին փուլում ձեռնարկված օդային օպերացիայի հետ միաժամանակ ԲԱՈՒ-ի ղեկավարությունն սկսեց ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հիմնական ուժերի վերախմբավորումն ու տեղաշարժը դեպի Իրաքի հարավային սահմաններ: Ամերիկյան բանակի ցամաքային ուժերը հիմնականում բաղկացած էին VII բանակային կորպուսից, XVIII օդադեսանտային կորպուսից: Վերջինս տեղակայված էր ռազմաճակատի հյուսիսային հատվածում՝ որպես ձախ թև ունենալով դեպի Բաղդադ ուղղությունը: Այն համարվում էր նաև արևմտյան խմբավորում: Դրանից աջ տեղակայված էր VII բանակային կորպուսը, որը գործում էր հարձակման հիմնական ուղղության վրա: Այս կորպուսից դեպի աջ գործում էր համատեղ արաբական ուժերի հյուսիսային հրամանատարությունը: Դրանից ավելի աջ տեղակայված էին ամերիկյան ծովային հետևակի ուժերը, իսկ անմիջապես ծովի ափին տեղաբաշխվում էր արաբական ուժերի արևելյան հրամանատարությունը: Ամերիկյան հիմնական ցամաքային զորքը 3-րդ բանակն էր, որը ենթակա էր ամերիկյան բանակի կենտրոնական հրամանատարությանը: Կենտրոնական հրամանատարությունը ամերիկյան հինգ հրամանատարություններից մեկն էր, որը տեղակայված էր Սաուդյան Արաբիայում:

18-րդ ամերիկյան օդադեսանտային կորպուսի կազմում էին ամերիկյան հետևյալ զորամիավորումները՝

- 82-րդ օդադեսանտային դիվիզիան,
- 101-րդ օդադեսանտային դիվիզիան,
- 24-րդ հետևակային դիվիզիան,
- ինչպես նաև ֆրանսիական 6-րդ թեթև զրահատանկային դիվիզիան*:

7-րդ ամերիկյան կորպուսի կազմում էին ամերիկյան հետևյալ զորամիավորումները՝

- 1-ին տանկային դիվիզիան,
- 3-րդ տանկային դիվիզիան,

[19] Տես *Э. Тоффлер.* Война и антивойна. М., 2005, сс. 84–96:

* Այս դիվիզիան տարբեր աղբյուրներում նշվում է որպես թեթև դիվիզիա, տանկային դիվիզիա, զրահատանկային թեթև դիվիզիա և այլն: Դիվիզիայի կազմը հուշում է, որ այն ավելի շատ զրահամիջոցներով հագեցած դեսանտային դիվիզիա էր:

- 1-ին հեծելազորային դիվիզիան,
- 1-ին հետևակային դիվիզիան,
- ինչպես նաև 2-րդ հեծելազորային-տանկային գունդը և բրիտանական 1-ին տանկային դիվիզիան:

Համատեղ արաբական ուժերի հյուսիսային հրամանատարության կազմում էին՝

- սիրիական 9-րդ տանկային դիվիզիան,
- եգիպատական 3-րդ մեքենայացված դիվիզիան,
- 4-րդ տանկային դիվիզիան,
- քուվեյթյան ու արաբական ուժեր մինչև գնդի կազմերով:

Ծովային հետևակի ուժերի կազմում էին՝

- 1-ին դիվիզիան,
- 2-րդ դիվիզիան,
- 2-րդ տանկային դիվիզիան,
- 1-ին բրիգադը:

Համատեղ արաբական ուժերի հյուսիսային հրամանատարության կազմում էին Սաուդյան Արաբիայի, Օմանի և արաբական այլ պետությունների ուժերը՝ մինչև բրիգադ կազմերով: Ավելի փոքր ուժեր էին տրամադրել մեծ թվով այլ պետություններ[20]:

Ամերիկյան կորպուսներն ուժեղացված էին նաև ամերիկյան այլ կորպուսներից հատկացված օգնական ուժերով ու միջոցներով:

ԻՐԱՔՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս ուժերին դիմակայում էին մոտ 50 դիվիզիայի հավասար իրաքյան ուժեր: Դրանք միասին կազմում էին իրաքյան բանակի II, III, VII և IX բանակային կորպուսները, որոնցից յուրաքանչյուրի կազմում, կախված առաջադրված խնդրից, կար վեց և ավելի դիվիզիա: Եվս չորս նման կորպուսներ տեղակայված էին մայրաքաղաքի շրջակայքում և երկրի այլ հատվածներում: Թեև իրաքյան բանակը հիմնականում պատերազմում էր խորհրդային ռազմական գիտության կանոններով, այն կառուցված չէր լիարժեք խորհրդային մոդելով: Կորպուսներն ու դիվիզիաները մեծաքանակ էին, ունեին հզոր մեքենայացվածություն և անգամ բանակային ուղղաթիռներ: Դիվիզիաներում կային մինչև 100 միավոր 100 մմ-ից մեծ տրամաչափով հրետանային միջոցներ, մինչև ՀՕՊ-ի երկու գումարտակ: Քուվեյթում կար վեց տանկային և չորս մեքենայացված դիվիզիա, իսկ հետևակային դիվիզիաներում կար մեկական տանկային գումարտակ[21]:

[20] Տես «Война в Персидском заливе 1990–1991 гг. («Буря в пустыне»)», ч. 1. «Современная армия», 12.03.2011 (http://www.modernarmy.ru/article/122); *Jonathon Rilev.* Decisive Battles: From Yorktown to Operation Desert Storm. London-New York, 2010, P. 207:

[21] Տես «Война в Персидском заливе 1990–1991 гг. («Буря в пустыне»)», ч. 1 (http://www.modernarmy.ru/article/122):

Իրաքյան կորպուսները դասավորվել էին երկու շարակարգով, առաջինում տեղակայված էին II, III և VII ԲԿ-ները, իսկ մեկ կորպուս և պահեստային մի քանի դիվիզիաներ գտնվում էին երկրորդ շարակարգում: Դիվիզիաները իրենց հերթին զբաղեցնում էին երեք-չորս բնագծային կոշտ ու ամուր պաշտպանություն: Իրաքյան բանակը, յուրացնելով խորհրդային պաշտպանական ռազմավարությունը, Քուվեյթում նախապատրաստել էր հզոր պաշտպանական գոտի՝ իր բնագծերով, հիմնական հարվածի ուղղությամբ այն ուներ մինչև 65 կմ խորություն և կազմում էր 3 շարակարգ: Ինժեներական տեսանկյունից այն բավական հագեցած էր ականադաշտերով, արգելափակոցներով և անգամ փոսերով, որոնք լցված էին նավթով:

Առաջին բնագիծը կառուցված էր 5 կմ խորությամբ, որից հետո մոտ 25 կմ ձգվում էր միջանկյալ տարածք՝ համապատասխան արգելափակոցներով ու ականապատումներով: Երկրորդ բնագիծը, որի խորությունը կազմում էր 2 կմ, նույնպես գերհագեցած էր հակատանկային միջոցներով և այլն: Երրորդ բնագիծը անընդհատ չէր, այն ավելի շատ նախատեսված էր օջախային պաշտպանության համար: Բնագծերը գերհագեցած էին, լավ կահավորված, տարաշարժուն խմբերի համար պատրաստվել էին ճանապարհներ և կեղծ ու իրական կրակային դիրքեր: Պաշտպանությունը շարակարգվել ու կահավորվել էր այդ ասպարեզում չափանմուշ համարվող Կուրսկի աղեղի նման, այսպես ասած՝ գումարտակային հակատանկային հենակետերի հիման վրա:

Հարկ է նշել իրաքցիների հնարամտությունը զորքերի և տեխնիկայի քողարկման գործում: Այդպիսի օրինակներից է անվնաս մնացած տեխնիկայի՝ անվադողերի այրման միջոցով որպես վնասված կամ ոչնչացված ներկայացնելը: Բացի այդ, օգտագործվում էին տեխնիկայի մանրակերտներ: Այդ ամենը ապակողմնորոշում էր հակառակորդի օդաչուներին և ստիպում ապարդյուն կերպով ծախսել ռումբերն ու հրթիռները: Ինժեներական առումով նույնպես լուրջ աշխատանքներ էին տարվել: Փորվել էին 220 կմ խրամատներ և 30 կմ հակատանկային հորեր, հրամանատարական կետերն լիովին հագեցված էին ու լավ էին պահպանվում, բազմաթիվ դաշտեր ականապատվել էին: Մարտական գործողությունների սկզբի դրությամբ Իրաքի ԶՈՒ-ի Հարավային խմբավորումը հաշվվում էր 458 հազար զինվոր, 4160 տանկ, 2600 հրետանային կայանք և ՀԿՈՀ[22]:

Որպես կանոն, իրաքյան դիվիզիաների պաշտպանությունը բաղկացած էր անվտանգության շերտից և չորս պաշտպանական դիրքերից: 2,5–17,5 կմ խորությամբ ապահովման շերտը ներառում էր ինժեներական արգելափակոցների արհեստական խոչընդոտների զարգացած համակարգ և առանձին հետևակային ու տանկային ստորաբաժանումների առաջ քաշված կրակակետեր: Դիվիզիայի պաշտպանական դիրքերը կազմված էին երեք բնագծից. Առաջինը ներառում էր երկու հետևակային բրիգադ 3,5–4,5 կմ խորությամբ

[22] Տես *Л. Галин, А. Соколов, Н. Новичков.* ВВС США в войне в Персидском заливе. «Зарубежное военное обозрение», 1992, № 9:

առաջին պաշտպանական դիրքում՝ սարքավորված 3–4 խրամատներում: Երկրորդ բնագիծը՝ կազմում էին հետևակային և մեքենայացված բրիգադները 1–2 խրամատներից բաղկացած երկրորդ և երրորդ դիրքերում, ռեզերվը՝ զրահատանկային բրիգադը, տեղաբաշխվում էր չորրորդ դիրքում: Պաշտպանությունը կառուցվում էր վաշտային հենակետերով՝ միացված գումարտակային պաշտպանական շրջաններում, որոնք իրար հետ էին կցված կապի խրամուղիներով: Զրահատեխնիկան հաճախ խրամատավորվում էր:

Դիվիզիաներին կցվում էին հրետանային ստորաբաժանումներ, որոնք տեղակայված էին առջևի գծից 3,5–20 կմ հեռավորության վրա: Եթե հակառակորդը փորձեր ճեղքել ապահովման շերտը և դիվիզիայի պաշտպանական դիրքերը, հրետանին պետք է հասցներ հիմնական կրակային հարվածները:

Գումարտակներում կային խառը զրահախմբեր, որոնք կրակը վարելու էին հատուկ կահավորված դիրքերից և ունեին տարաշարժման լավ հնարավորություններ: Հիմնական զրահատանկային զորամիավորումները գտնվում էին պահուստում՝ որպես գլխավոր հրամանատարության հակագրոհների ձեռնարկած հիմնական միջոցներ: Այս ամենի համար Հուսեյնի բնագիծը կահավորելու անհրաժեշտ ժամանակ և միջոցներ կային: Դաշնակիցների 18-րդ օդադեսանտային (ՕԴ) կորպուսի դիմաց առաջին շարակարգում տեղաբաշխված էին երեք հետևակային դիվիզիաներ, իսկ 7-րդ կորպուսի դիմաց՝ յոթ իրաքյան դիվիզիա:

Այսինքն՝ ամեն ինչ արված էր խորհրդային ստատիկ պաշտպանության դասական կանոններով և շատ գրագետ:

ՈՉ ԴԱՍԱԿԱՆ ՃԵՂՔՈՒՄ

Հաշվի առնելով այս ամենը և վերլուծելով իրավիճակը՝ ԲԱՈՒ-ի հրամանատարությունը որոշեց հիմնական հարվածը հասցնել ոչ թե ուղիղ, այլ դաշունաձև, իսկ հիմնական հարվածի ուղղությունը քողարկելու համար միաժամանակ կիրառել մեծ ցուցադրական գործողություններ և դրանով մոլորեցնել իրաքյան հրամանատարությանը: Հիմնական մոլորեցնող գործողությունները իրականացվեցին հարավում՝ ծովեզրում: Այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ ԲԱՈՒ-ն փորձելու է ծովային դեսանտ ափհանել Բասրայի հատվածում: Նույնպիսի կեղծ տպավորություն էր ստեղծվում, թե հարձակումը կարող է նաև զարգանալ ձախ թևով: Մոլորեցման և քողարկման գործողությունները ձեռնարկվեցին մեծ թափով: Միևնույն ժամանակ ԲԱՈՒ-ն շեշտը դնում էր որակի, գրագետ տարաշարժման և կառավարման վրա՝ դրա հետ մեկտեղ կիրառելով բազում նորամուծական միջոցներ:

Համակարգված օդային հարվածների ընթացքում (ամեն օր կատարվում էր մինչև 2500 ինքնաթիռաթռիչք) ԲԱՈՒ-ի հրամանատարությունը լուծեց Իրաքի ավիացիոն օդանավակայաններում կործանելու, ՀՕՊ-ի օբյեկտները խոցելու և օդում իր գերիշխանությունը վերջնականապես հաստատելու խնդիրը: Միաժամանակյա հարվածներ էին հասցվում ռազմաարդյունաբերական օբյեկտները շարքից դուրս բերելու, կառավարման համակարգերը

խաթարելու և, գլխավորը, ՑՁ խմբավորումը ջախջախելու, նրա մատակարարումը խափանելու նպատակով:

ԲԱՈՒ-ի օդացամաքային օպերացիան սկսվեց փետրվարի 24-ին ժամը 4-ին:

ԲԱՈՒ-ի գլխավոր հրամանատարի մտահղացմամբ՝ գլխավոր հարվածները հասցվելու էին Բասրայի և էն-Նասիրիայի ուղղություններով, այսինքն՝ արևմուտքից դեպի հյուսիս, ապա նոր դեպի արևելք: Աջ թևում հարձակումը Քուվեյթի ծովափի ուղղությամբ էր: Այն հիմնականում վարում էին ծովային հետևակի երկու ամերիկյան դիվիզիաները և այլ օժանդակ ուժեր, ձախ թևում՝ հարձակումը զարգանում էր էլ-Սալմանի ու էս-Սանավայի ուղղությամբ, և այն վարում էին ամերիկյան օդադեսանտային և ֆրանսիական դիվիզիաները:

Այսպիսով՝ դաշնակիցները պաշտպանության ճեղքմամբ, որի ընթացքում նաև խոր շրջանցումների հավանականության մեծացման միջոցով կամենում էին հակառակորդին պարտադրել նահանջ և այդ ժամանակ թևային հարվածներ հասցնելով՝ ջախջախել: Ըստ էության, իրաքյան բանակը նահանջի տեղ էլ չուներ. եթե Եփրատը ինչ-որ հրաշքով էլ անցներ, ապա կարող էր հարվածների տակ հայտնվել Իրանի տարածքում: Մյուս կողմից էլ դաշնակիցների ձախ թևը լրիվ բաց էր, և եթե այդ հատվածը պահող ուժերը չգործեին արագ ու արդյունավետ, իսկ օդուժը չկարողանար չեզոքացնել իրաքյան պահուստային ուժերին՝ մոտ երկու կորպուս կազմով, որոնք կարող էին արշավել մայրաքաղաքի կողմից, ապա օպերացիան կարող էր լիովին տապալվել: Այդ պատճառով էր, որ ամերիկյան օդադեսանտային ուժերը տեղակայվեցին հենց այդ հատվածում: Սա, ըստ էության, կայծակնային ռազմավարական օպերացիա էր՝ հիմնված օդային գերազանցության և դրա հովանու տակ զրահախմբերի ու դեսանտի արագ, ճկուն հարձակումների վրա:

18-րդ ՕԴ կորպուսը պետք է հարձակվեր էշ-Շուբա, էն-Նա-Սարիա բնակավայրերի ուղղությամբ՝ խնդիր ունենալով ԱՄՆ-ի VII ԲԿ-ի հետ համատեղ ջախջախել իրաքյան զորքերը և 5–8-րդ օրերին հասնել վերջնական նպատակին՝ Եփրատ գետի մոտակայք: Մյուս հարվածը՝ ուղղված Վաֆրային, էլ-Ջահային, էլ-Քուվեյթին, պիտի հասցնեին ռազմարշավային ուժերը, որոնց առաջադրանք էր տրված ջախջախել իրաքյան III ԲԿ առաջին շարակարգի դիվիզիաները և, համագործակցելով ԱՄՆ-ի 82-րդ ՕԴ դիվիզիայի, ինչպես նաև եգիպտական ու սաուդյան զորքերի հետ, գրոհի երրորդ օրվա վերջում գրավել Քուվեյթի մայրաքաղաքը:

Փետրվարի 25-ին 18-րդ ՕԴ կորպուսի ձախաթևյան ուժերը դեսանտային օպերացիայի շնորհիվ արդեն հասել էին Եփրատի հարավային ափը՝ մոտենալով էն-Նա-Սարիա քաղաքին: Նույն օրը 24-րդ հետևակային դիվիզիան, որի կազմում կար 241 միավոր Մ1 «Աբրամս» տանկ, ջախջախեց իրաքյան 26-րդ և 35-րդ հետևակային դիվիզիաները և օրվա ավարտին շարունակեց իր առաջխաղացումը՝ կրկին գերազանցելով իրեն տրված առաջադրանքը:

Սակայն VII ԲԿ-ն ունեցավ որոշակի խնդիրներ՝ կապված ամերիկյան 1-ին հետևակային և 1-ին բրիտանական տանկային դիվիզիաների համագործակցության հետ: Պատճառն այն էր, որ ձախ թևում արագորեն առաջացող ամերիկյան 1-ին և 3-րդ զրահատանկային դիվիզիաները չէին կարող օգնել ամերիկյան 1-ին հետևակային և 1-ին հեծելազորային-զրահատանկային դիվիզիաներին, որոնք ենթարկվում էին իրաքյան զրահատանկային ուժերի հակագրոհներին: Իրավիճակը ավելի բարդացրեցին եգիպտական և սիրիական ուժերը, որոնք այդպես էլ չներխուժեցին Իրաքի տարածք և կորպուսի ձախ թևում առաջացավ մեծ բացվածք, որը ամերիկյան հրամանատարությունը փակեց նշված 1-ին հեծելազորային-զրահատանկային դիվիզիայի և այլ ուժերով: Օրվա կեսին, սակայն, ականապատված դաշտերը հաղթահարվեցին, և բրիտանական դիվիզիան ևս միացավ հարձակմանը, իսկ ամերիկյան 1-ին զրահատանկային դիվիզիան հետ մղեց իրաքյան դիվիզիաների հակագրոհը՝ ընդամենը տասը րոպեում ոչնչացնելով հարձակվող դիվիզիայի զրահատեխնիկայի մոտ կեսը: Օրվա ավարտին ամերիկյան և բրիտանական տանկերն արդեն պատրաստվում էին գրոհելու իրաքյան 52-րդ տանկային դիվիզիայի բնագծերի վրա:

Փետրվարի 26-ը խոր տարաշարժի օր էր: Բանն այն է, որ ամերիկյան հիմնական ուժերը հասել էին իրենց հյուսիսային վերջնակետին և պետք է թեքվեին դեպի արևելք: Թեքումը ամերիկյան հրամանատարությունը անվանեց «Ուրախացի՛ր, Մարի՛ա»: 18-րդ ՕԴ կորպուսի ձախաթևյան դեսանտային ուժերն զբաղված էին ապահովմամբ, իսկ 24-րդ հետևակային դիվիզիան կատարում էր հիմնական գործը: Իրաքյան Թալիլ և Զաբահ ավիաբազաների վրա գրոհելիս 24-րդ հետևակային դիվիզիան հանդիպեց իրաքյան 47-րդ (այլ տվյալներով՝ 37-րդ), 49-րդ հետևակային դիվիզիաների դիմադրությանը[23]: Այստեղ էին նաև հայտնի 6-րդ «Նաբուգոդոնոսոր» մեքենայացված դիվիզիայի և 26-րդ «կոմանդոս» բրիգադի զբաղեցրած բնագծերը: Իրաքյան ուժերը հնարամտորեն օգտագործում էին քարքարոտ տեղանքը: Իրաքյան ուժեղ դիմադրությունը հաղթահարվեց հզոր հրետանային կրակի և ամերիկյան տանկերի կրակային գերազանցության շնորհիվ: Վերջիններիս որակյալ նշանոցները հնարավորություն էին տալիս դիպուկ կրակ վարելու չորս և ավելի կմ հեռավորության վրա: Այս ծանր մարտերում հասնելով հաղթանակի՝ հզոր ամերիկյան դիվիզիան կատարեց իր խնդիրը և անցավ թիկունք նախանշված խորությամբ:

Ամերիկյան VII բանակային կորպուսի ամերիկյան և անգլիական տանկային դիվիզիաները ճեղքում կատարելիս հանդիպեցին իրաքյան բանակի լավագույն զորամիավորումներից մեկի՝ 3-րդ մեքենայացված «Տավալական» դիվիզիայի համառ դիմադրությանը, և փետրվարի 26–27-ին ռազմաճակատի կենտրոնում տեղի ունեցան 20-րդ դարի ամենավերջին խոշոր տան-

[23] Տես *Richard W. Stewart.* American Military History, Vol. II: “The United States Army in a Global Era, 1917–2003”. Washington, 2005, PP. 420–422:

կային մարտերը: Հիշեցնենք, որ սա հիմնական հարվածի ուղղությունն էր:

Իրաքի Հանրապետական գվարդիայի (ՀԳ) մեքենայացված դիվիզիայի հրամանատարությունը տեղակայված էր Քուվեյթի սահմանից մոտ 40 կմ դեպի հյուսիս՝ ԱՄՆ-ի 7-րդ կորպուսի կենտրոնի ուղղությամբ: «Տավալկան» դիվիզիան արդարացիորեն համարվում էր լավագույններից մեկը Իրաքում: Դիվիզիան խիզախորեն էր կռվում Իրանի դեմ պատերազմում, իսկ Քուվեյթ Սադդամ Հուսեյնի ձեռնարկած ներխուժման ընթացքում լավագույնն էր: Դիվիզիայի 2 մեքենայացված և 1 տանկային բրիգադները զինված էին Իրաքում առկա առավել ժամանակակից սպառազինությամբ: Փետրվարի 25-ին դիվիզիան դիրքավորվեց այնպես, որ արգելափակի ԱՄՆ-ի զորքերի հնարավոր առաջխաղացումը դեպի Քուվեյթ-Սիթիից 70 կմ հեռավորության վրա գտնվող իրաք-սաուդյան խողովակաշարը: Չնայած հակառակորդի ավիացիայի զանգվածային հարվածներին՝ դիվիզիան պահպանեց մարտունակությունը և գրավեց նշանակված դիրքերը: 1991 թ. փետրվարի 26-ին դիվիզիայի հիմնական մասը շարունակում էր գտնվել իր դիրքերում և պատրաստ էր ԱՄՆ-ի 7-րդ կորպուսի հարձակմանը:

Ընդհանուր առմամբ, ամերիկյան ուժերի գրոհը հանկարծակիի բերեց իրաքյան զորքերին: Իրաքյան տանկերի և ՀՄՄ-ների անձնակազմերը, զգուշանալով հակառակորդի մշտական ռմբակոծումներից, պատսպարվել էին տեխնիկայի տակ: Թեև հանրապետական գվարդիայի հրամանատարությունը տեղյակ էր մեծաթիվ ամերիկյան ուժերի հարձակման մասին, ի զորու չեղավ այդ տեղեկությունը հասցնել առանձին գումարտակներին կամ առավել ևս առանձին անձնակազմերին: Դրանով է բացատրվում իրաքյան ուժերի՝ իսկույն մարտն սկսելու անպատրաստությունը: Անձնակազմերի մեծ մասը անգամ չհասցրեց հասնել իրեն կցված տեխնիկային: Բացի այդ, դիրքերը պատրաստված չէին հավուր պատշաճի: Հակատանկային արգելափակոցները հասցված էին ավարտին, ականայինները մասամբ էին սարքավորված, լարայիններն ընդհանրապես տեղադրված չէին: Հնարավոր է, որ նրանք չունեին բավական չափով ականներ: Չի բացառվում նաև, որ հակառակորդի ավիացիայի անընդհատ գործողությունները խանգարում էին դրանց տեղադրմանը:

Գեներալ Թ. Ֆրանքսը 2-րդ հեծելազորային գնդի հրամանատար գնդապետ Դոն Հոլդերին տրվեց հետևյալ հրամանը. «Թույլ չտալ իրաքյան մեծաքանակ զորքերի հետ բախումներ»: Հոլդերի զինվորները ոչնչացրին ընդամենը մեկ գումարտակային ամրակետ, մինչդեռ 6 այդպիսի ամրակետեր սպասում էին առջևում: Հոլդերը զինվորներին հրամայեց կանգ առնել գրաված դիրքերում և սպասել 1-ին հետևակային դիվիզիային, որը շարժվում էր նրանց հետևից:

Ավելի ինտենսիվ մարտեր սկսվեցին գիշերը, երբ մարտակարգերը լիովին խառնվեցին իրար: Գնդապետ Դավիդ Վայսմանը հակադրվեց կենտրոնական հրամանատարության (գեներալ Նորման Շվարցկոպֆ) պահանջներին և հրաժարվեց շարունակել գրոհը: 1-ին զրահատանկային դիվիզիայի գու-

մարտակներին հրամայված էր վերադասավորվելու նպատակով նահանջել: Իրաքյան դիրքերի ուղղությամբ լայնածավալ հրետանային հարված հասցվեց:

Փետրվարի 27-ին ժամը 12:30-ին սկսված 1-ին հետևակային դիվիզիայի 2-րդ բրիգադի գրոհը երեկոյան ավարտվեց «Տավալկան» դիվիզիայի ձախ թևի երկու բրիգադների ջախջախմամբ: Դրա հետ մեկտեղ դիվիզիան հարձակման էր ենթարկվել նաև կենտրոնական ուղղությամբ:

Ամերիկյան 1-ին զրահատանկային դիվիզիան առանց կանգառի միանգամից գրոհեց իրաքյան մեկ այլ հեղինակավոր «Մեդինա» դիվիզիայի դիրքերի վրա: 1-ին հետևակային դիվիզիան ոչնչացրեց իրաքյան 12-րդ և 10-րդ դիվիզիաներին: Բրիտանական զրահատանկային դիվիզիան հաղթահարեց իրաքյան 52-րդ տանկային և երեք հետևակային դիվիզիաների դիմադրությունը: Իրաքյան բանակի չոչնչացված դիվիզիաները մտածում էին ոչ թե հաղթելու, այլ փախուստի մասին:

Ամերիկյան բանակի VII կորպուսի ուժերը շուրջ 80-ժամյա անդադար մարտերից հետո անցան մոտ 350 կմ՝ ջախջախելով հակառակորդի 12 դիվիզիա, վերցնելով ավելի քան 22 հազար գերի: Փաստորեն, ամերիկյան զորքերը չդիմեցին իրաքյան լավ համալրված դիրքերի վրա ճակատային գրոհի, այլ խելամիտ տարաշարժերով հասցրին թևային հարված և համառ դիմադրությունը, թեկուզ և դժվարությամբ, բայց հաղթահարեցին*: Բասրայի ուղղությամբ ճնշումն ուժեղացնելու նպատակով ուղղաթիռներից իջեցվեց օդային դեսանտ՝ մեկ բրիգադի ուժով: **Օդադեսանտային կորպուսի ուժերով իրականացվեց խոր օպերատիվ շրջանցում, որն ստեղծեց ամբողջ զորախմբի շրջապատման վտանգ:** Հարավում ակտիվ գործողություններով իրաքյան զորքերի քուվեյթյան խմբավորումը գամվեց սահմանին, և ԲԱՈՒ-ի հիմնական ուժերն ստացան օպերատիվ թևանցման զորաշարժ կատարելու հնարավորություն, թեև օպերատիվ թևանցումը ռազմարվեստում ոչ հաճախ հանդիպող հնար է: Այս ամենն ուղեկցվում էր հակառակորդի պաշտպանության խոր թիկունքում ծովային դեսանտի ափհանման սպառնալիքով: Փաստորեն, հերթական անգամ հիմնավորվեց, որ տարաշարժի արդիական հնարավորությունների պարագայում, հատկապես՝ օդային դեսանտի գրագետ օգտագործման դեպքում, ստատիկ պաշտպանությունը կարող է հեշտությամբ ճեղքվել:

Իրաքյան բանակի ՑՉ ջախջախումը տևեց ընդամենը չորս օր: Ամերիկյան զրահատանկային զորքերի հարձակման արագությունը ժամում միջինը 70–80 կմ էր, բացառիկ դեպքերում և օդային դեսանտի զուգակցմամբ՝ 100 կմ: Փաստորեն, ռազմարվեստի պատմության մեջ կրկնվեց Մանշտայնի 11-րդ բանակի ձեռնարկումը՝ օպերատիվ մակարդակի զորամիավորումը հաղթեց ռազմավարական զորախմբին և դուրս եկավ ռազմավարական բնագիծ: Մարտի 6-ին կնքվեց զինադադար:

* Սա դասական գերմանական բլիցկրիգի տանկային հարվածի մոդել էր, որը մինչև այսօր քննարկվում է արևմուտքում: Ամերիկյան ռազմական մտքի վրա չափազանց մեծ է ԵՀՊ-ի ժամանակ գերմանական բանակի գործողությունների ազդեցությունը:

ՃԿՈՒՆ ԵՎ ՕԶԱԽԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԵՂՔՈՒՄԸ

Իրաքյան հաջորդ՝ 2003 թ. մարտի 19-ին սկսված, պատերազմում Հուսեյնը, հաշվի առնելով նախորդ պատերազմի փորձը, որոշել էր փոխել մոտեցումները: Ամերիկյան բանակի ղեկավարությամբ գործող դաշնադրային ուժերը ներխուժեցին Իրաքի տարածք: Ս. Հուսեյնն սպասում էր այդ ներխուժմանը և փորձել էր ցամաքային զորքերին նախապատրաստել ու ճիշտ դասավորել: Իրաքյան բանակը կազմված էր մոտավորապես 350000-անոց զորքից՝ 24 դիվիզիա և 7 բանակային կորպուս, ուներ մոտավորապես 5000 միավոր զրահատեխնիկա: Ավիացիոն բաղադրատարրը և ՀՕՊ-ը անմարտունակ էին. առաջին պատերազմից հետո դրանք տարիների ընթացքում չափազանց թուլացել ու կազմալուծվել էին: Հուսեյնը զորքերը հակառակորդի հավանական հարձակման ուղղության վրա չէր դասավորել հոծ, մեկտեղված: Կարելի է ասել, որ սա հակառակորդին մոլորեցնող ամերիկյան քողարկման լավագույն հաջողությունն էր: Իրաքյան զորքը դասավորված էր հիմնականում ըստ կորպուսների՝ երեքական դիվիզիաներով, այսինքն՝ օջախային պաշտպանության սկզբունքով[24]: Մայրաքաղաքի հիմնական պաշտպանությունը հանձնված էր նախագահական գվարդիային, որի մարտունակությունը ամենաբարձրն էր:

Հուսեյնը փորձել էր զորքերը այնպես դասավորել, որ հիմնական ուժերը մեկ հզոր օդային հարվածի տակ չընկնեն և հնարավոր լինի կատարել զորաշարժեր: Այսինքն՝ իրաքյան ղեկավարությունը, հեռանալով դասական ռազմագիտական կանոններից, փորձել էր կիրառել ավելի շատ անկանոն գործողությունների տրամաբանությունը: Նա համոզված էր, որ ամերիկյան օդացամաքային գործողությունների ռազմավարության համաձայն՝ ամերիկյան բանակը ևս գործելու է անկանոն մարտական գործողությունների տրամաբանությամբ:

Ամերիկյան զորքերը միավորվել էին՝ կազմելով 5-րդ բանակային կորպուսը: ԱՄՆ-ի ծովային հետևակի կորպուսից մասնակցում էր 1-ին ռազմարշավային (էքսպեդիցիոն) դիվիզիան, որն ուժեղացված էր մեկ գնդով և այլ ուժերով[25]: Մեծ Բրիտանիան մասնակցում էր մոտավորապես 28000-անոց ցամաքային զորախմբով[26]:

---

[24] Տես *G. Fontenot, E. J. Degen, D. T. Tohn.* On Point: The United States Army in Operation Iraqi Freedom. Washington, 2004, PP. 98–100; *R. Grant.* First 600 Days of Combat:The US Air Force in the Global War on Terrorism, 2004, PP. 130–132:

[25] Տես *K. M. Woods, M. R. Pease, M. E. Stout, W. Murray, J. G Lacey.* Iraqi perspectives project: A View of Operation Iraqi Freedom from Saddam's Senior Leadership. Joint Forces Command, 2006, PP. 136–138; *Գ. Ֆոնտենոտ, Է. Ջ. Դեգեն, Դ. Թ. Թոհն,* Նշ. աշխ., էջ 79–81, *A. Gordon.* Marines on the Ground. Concord Publication, 2006, PP. 4–6; "Operations in Iraq. Lessons for the Future". UK Ministry of Defence. London, 2003, PP. 4–6:

[26] Տես "Operations in Iraq. Lessons for the Future", PP. 4–6, 83–85:

Ընդհանուր ցամաքային խմբավորման թվաքանակը մոտավորապես 130–140 հազար էր՝ 1600-1700 զրահամիջոցներով: Օդուժը, ինչպես միշտ, մեծ խմբավորումով էր ներկայացված՝ մոտավորապես 1800 ԹԱ, որի կեսից ավելին՝ հարվածային մարտավարական ու ռազմավարական ինքնաթիռներ: Հեռավոր հարվածներ էին հասցվում ինչպես ԱՄՆ-ի տարածքից, այնպես էլ Գուամ կղզուց և Մեծ Բրիտանիայից: Պարսից ծոցում և Միջերկրական ծովում գործող նավատորմում ամերիկյան հինգ ավիակրային խմբեր էին՝ տասնյակ նավերով, որոնց մի զգալի մասը կարող էր հարված հասցնել թևավոր հրթիռներով:

Դաշնադրային ուժերի առջև դրվել էր հստակ ռազմաքաղաքական խնդիր՝ գրավել ամբողջ Իրաքը կամ դրա մեծ մասը՝ մայրաքաղաքով հանդերձ, և տապալել Ս. Հուսեյնի իշխանությունը: Սա չափազանց բարդ և շատերի համար անհնարին թվացող խնդիր էր:

Հուսեյնը այս անգամ էլ սպասում էր մինչև ցամաքային գործողությունների սկիզբը երկար ավիացիոն հարվածների, սակայն նա սխալվեց. դաշնակիցները գործեցին ավելի անկանոն մոտեցմամբ: Նրանք օդուժի երկար նախապատրաստություն ձեռնարկեցին: Արձակվեց ընդամենը չորս տասնյակ ԹՀ: Միաժամանակ լայնածավալ գործողություններ սկսեցին նաև ցամաքային խմբավորումները, հատկապես՝ հատուկ նախանշանակման ջոկատները, որոնք ծավալուն դիվերսիոն գործունեություն նախաձեռնեցին: Արդեն երեկոյան ամերիկյան ծովային հետևակի ուժերը ոչ միայն ներխուժել էին Իրաքի տարածք, այլև հսկողության տակ էին վերցրել որոշ ռազմավարական կետեր[27]: Ամսի 23-ին ամերիկյան 5-րդ կորպուսի ուժերը և ծովային հետևակի 1-ին դիվիզիան, բրիտանացիների հետ ավարտելով հարավային Իրաքի հիմնական ռազմավարական կետերի գրավումը (նավթահանքեր, հարթակներ, նավահանգիստներ, կամուրջներ), բաժանվելով Եփրատի տարբեր կողմերը, հարձակում սկսեցին դեպի Իրաքի մայրաքաղաք[28]:

Օդային բացարձակ գերազանցությունը հանգեցրել էր նրան, որ դաշնակիցները իրենց ՑԶ-ին հանձնարարել էին առաջին հայացքից անմիտ խնդիրներ՝ բաց ու սակավ ուժերով դուրս գալ հակառակորդի դեմ: Այդ ուժերը պետք է խայթող հարվածներով ու տեղաշարժերով իրենց վրա վերցնեին հակառակորդի ՑԶ-ները՝ դրանց ստիպելով դուրս գալ թաքստոցներից: Այս պատերազմում ամերիկյան ՕՀՄ-ների հասցրած հարվածները իրենց խտությամբ ու ճշտությամբ աննախադեպ էին: Հարվածներ էին հասցվում 6-7 ժամ անընդմեջ, ընդսմին դրանց ընթացքում հնարավոր էր լինում ճշգրտումներ կատարել և ոչնչացնել նաև դիրքերը փոփոխող նշանակետերը: Այսինքն՝ տարաշարժուն պաշտպանությունը ևս իրաքյան ուժերին ոչինչ չէր տալիս, քանի որ դաշնակիցների վերահսկողությունը շատ բարձր մակարդակի էր:

[27] Տես *Ա. Գորդոն,* Նշ. աշխ., էջ 8–18:

[28] *В. Целуйко.* Война в Ираке. Чужие войны. Под ред. Р. Пухова. М., 2012, сс. 184–185:

Դաշնակիցները կատարեցին մարտական մոտավորապես 20000 թռիչք, որոնց ընթացքում կիրառվեց շուրջ 20000 միավոր գերճշգրիտ և 9000 միավոր սովորական ՕՀՄ[29]: Գերճշգրիտ զենքերի թվում էին նաև մոտ 1000 միավոր ԹՀ-ները[30]:

Դաշնադրային ուժերը, կրելով չնչին կորուստներ՝ 170-180 զինծառայող և մի քանի տասնյակ միավոր տեխնիկա[31], ջախջախիչ պարտության մատնեցին Իրաքին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ այս օրինակներից կարող ենք եզրակացնել, որ անգամ համաշխարհային պատերազմներից հետո ձեռնարկվել են բազմաթիվ օպերացիաներ, որոնց ժամանակ գրագետ հարձակման դեպքում հնարավոր է եղել ճեղքել ստատիկ, թեկուզև լավ համալրված պաշտպանությունը: Այն պետությունները, որոնք փորձել են պաշտպանությունը դարձնել ավելի ճկուն, ավելի շարժունակ, ստացել են որոշակի առավելություն, սակայն դրա համար անհրաժեշտ է եղել գործել ավելի գրագետ, ավելի արագ և ունենալ ավելի լավ կառավարում: Այսինքն՝ նման պաշտպանության պահանջները բոլոր տեսանկյուններից ավելի խիստ են: Սակայն նման պաշտպանությունը հնարավորություն է տալիս հասնելու հաջողության և ավելի լավ պայմաններ է ստեղծում հակահարձակման անցնելու համար:

---

[29] Տես *Ա. Գորդոն,* Նշ. աշխ., էջ 8:

[30] Տես *Վ. Յելույկո,* Նշ. աշխ., էջ 211:

[31] Տես *Ռ. Գրանտ,* Նշ. աշխ., էջ 1–2:

ՀՀ ԶՈՒ-Ի ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ն. Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ԶՈՒ-ի գնդապետ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, իմ զեկույցում փորձելու եմ համառոտակի ուրվագծել կառավարման համակարգի ընդհանուր դրույթները, ներկա վիճակը և ներկայացնել դրա զարգացման ուղիները մեր պետության, Զինված ուժերի հնարավորությունների, տարածաշրջանի առանձնահատկությունների, հավանական հակառակորդի սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմական գործողությունների բնույթի կանխատեսվող զարգացումների լույսով:

Կառավարումն ըստ էության իշխանության դրսևորում է՝ որոշակի միջոցներով՝ օրինական իրավունքով, հեղինակությամբ և բռնությամբ, ազդել մարդկանց վարքի, գործունեության վրա, իր կամքի և հնարավորությունների պարտադրմամբ:

Զորքերի կառավարման դրույթների ակնարկը դեռ մեր թվարկությունից առաջ 6-րդ դարում տվել է ռազմարվեստի հիմնադիրներից մեկը՝ չինացի Սուն-Ցզին.

«Հաղթել կարող են հինգ դեպքում, երբ.

- *գիտեն կռվել և կռվից ձեռնպահ մնալ,*
- *կարողանում են հմտորեն օգտվել և՛ մեծաթիվ, և՛ փոքրաթիվ ուժերից,*
- *տիրակալի և ժողովրդի ցանկությունները համընկնում են,*
- *միշտ զգույշ լինելով՝ ակնդետ սպասում են հակառակորդի սայթաքելուն,*
- *զորավարը տաղանդավոր է, և տիրակալը չի ուղղորդում նրան»*[1]*:*

Այս հինգ դրույթները հաղթանակի ճանապարհն են:

Մարտական կանոնադրություններում և զորքերի կիրառման այլ ղեկավար փաստաթղթերում զետեղված՝ ժամանակակից համազորային մարտի սկզբունքներում զորքերի կառավարման սկզբունքը՝ ենթակա ուժերի և միջոցների կայուն և անընդհատ ղեկավարումը, նշված է որպես վերջին կետ: Սակայն իմ խոր համոզմամբ՝ կառավարման դերը և նշանակությունը այնքան մեծ են, որ այն պետք է լինի առաջին կետը և լինի գլխավոր սկզբունքը:

---

[1] *Սուն-Ցզի,* Ստրատեգիայի արվեստը: Ռուսերենից հայերեն թարգմանությունը՝ Ա. Տեր-Հովհաննիսյանի: Ե., 2013, գ. 3, էջ 21:

Զինված ուժերի բոլոր օղակներում զորքերի կառավարումը պետք է լինի կայուն, անընդհատ, օպերատիվ և ծածուկ: Բոլոր դեպքերում պետք է ապահովվի կառավարման անհրաժեշտ աստիճանի կենտրոնացում, ընդսմին տրված խնդիրների կատարման եղանակների ընտրության գործում ենթականերին հնարավորություն ընձեռնվի ցուցաբերելու ինքնուրույնություն:

Զորքերի կառավարման կազմակերպումը ներառում է կառավարման համակարգի ստեղծումը, դրա բարձր մակարդակի պատրաստության պահպանումը, մարտի ընթացքում զարգացումը, ինչպես նաև համակարգի անխափան աշխատանքի ապահովման միջոցառումների նախապատրաստումը և իրականացումը:

Սակայն սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացումը, զորքերի կազմիաստիքային կառուցվածքի փոփոխությունները և, որպես արդյունք, զորամիավորումների և զորամասերի մարտական հնարավորությունները էական ազդեցություն են ունենում ժամանակակից համազորային մարտի վարման բնույթի և եղանակների ու զորքերի կառավարմանը ներկայացնում են ավելի ու ավելի խիստ պահանջներ:

Կառավարման ընթացքում առաջին պլան են մղվում հետևյալ պրոբլեմները.

1) զորքերի զարգացող մարտական հնարավորությունների կիրառման արդյունավետության մեծացումը,

2) ժամանակի շահումը,

3) իրադրության տվյալների հավաքման և մշակման, որոշումների ընդունման, մարտական խնդիրների առաջադրման, մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման ընթացքում հակառակորդից առաջ անցնելը:

Զինված պայքարի նոր միջոցների զարգացումը իր հետքն է թողում նաև ղեկավարման բոլոր օղակների շտաբների աշխատանքի վրա: Ժամանակակից պայմաններում կառավարման մարմինների, հատկապես՝ շտաբների համար առաջանում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ սահմանափակ ժամանակում կատարել աճող ծավալով տեղեկատվության վերամշակում:

Այս անհրաժեշտությունը այսօր դժվար հաղթահարելի է, իսկ մոտ ապագայում ավելի կսրվի:

Մյուս կողմից՝ մարտական գործողությունների բարձր և աճող դինամիկան մեծացնում է ընդունվող որոշումների որակի համար բոլոր օղակի հրամանատարների պատասխանատվությունը:

Բարդ և ծավալուն տեղեկատվությունը ժամանակին գնահատելու համար պահանջվում է դրա ուսումնասիրման և վերլուծման վրա կատարել ժամանակի նշանակալի ծախս: Միևնույն ժամանակ, ընդունվող որոշումները և մշակվող պլանները պետք է լինեն բավականաչափ հիմնավոր: Այստեղ նույնպես դիտվում է բարդություն՝ ընդունվող որոշումների և պլանների որակի ու դրանց ընդունման և մշակման համար հատկացվող ժամանակի առումով:

Առավել կարևոր պրոբլեմը, որին բախվում են հրամանատարները և շտաբները, սպաների մեծ զբաղվածությունն է ոչ ստեղծագործական աշխատանքներով, որոնք ղեկավարման մարմիններից խլում են ժամանակի շոշափելի մասը:

Այդ ամենը հանգեցնում է այն բանին, որ իրադրության վերլուծության, որոշումների ընդունման, ենթականերին խնդիրների առաջադրման և զորքերի մարտական գործողությունների նախապատրաստման գործնական աշխատանքի համար մնում է ծայրաստիճան քիչ ժամանակ:

Ուզում եմ արծարծել նաև խախտված կառավարման վերականգնման կազմակերպման ու իրագործման խնդիրը:

Ժամանակակից պատերազմների փորձը վկայում է, որ կառավարման համակարգի վրա նպատակային ազդեցության դերի մեծացումը գերակա խնդիրներից է: Դրա վառ վկայությունն է 2016 թ. ապրիլյան ռազմական գործողությունների ընթացքը, երբ հակառակորդի հրետանին համակարգված կրակ էր վարում մարտավարական օղակի բոլոր կառավարման կետերի վրա՝ որոշ դեպքերում կիրառելով նաև հարվածային անօդաչու թռչող ապարատներ:

Հակառակորդի հետախուզության և խոցման ժամանակակից միջոցները հնարավորություն են տալիս կառավարման համակարգի նկատմամբ կիրառելու «Հայտնաբերել–խոցել» սկզբունքը:

Կառավարման կետերի հայտնաբերման համար կարող է հատկացվել մեր պաշտպանության խորքում գործող հետախուզական խմբերի մինչև 40 %-ը: Ընդսմին հետախուզական մարմինները կարող են ոչ միայն հայտնաբերել, այլև խոցել մեր կառավարման կետերի մինչև 50 %-ը: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ մարտական գործողությունների ժամանակ 2-3 ժամվա ընթացքում հակառակորդի հետախուզությունը կարող է բացահայտել մեր կառավարման կետերի մինչև 80 %-ը:

Կառավարման կետերի խոցման համար կարող են ներգրավվել ինչպես հեռահար համազարկային կրակի և խոշոր տրամաչափի հրետանային համակարգեր, այնպես էլ հարվածային ԱԹԱ-ներ, մարտավարական ավիացիա և մարտավարական հրթիռներ, ինչպես նաև ՌԷՊ-ի միջոցներ:

Ուստի, վերլուծելով մեր կառավարման համակարգը խախտելու հակառակորդի հնարավորությունները, կարող ենք եզրակացնել, որ կառավարման կետերի խոցելիությունը հակառակորդի հետախուզության և կրակային խոցման միջոցներով մեծ է:

Կառավարման համակարգի զարգացման ընդհանուր ուղիներ կարող ենք համարել.

1. Կառավարման մարմինների պատրաստության որակի բարձրացում՝ նոր մոտեցումներով և տեխնոլոգիաներով, կառավարման մարմնի անձնակազմի պատրաստման վարժասարքերի մշակում և ներդրում:
2. Տեղեկույթի հավաքման և ընդհանրացման ավտոմատացում:

3. Կառավարման կետերի շարժունակության մեծացում՝ զորամասի և բարձ օղակների կառավարման կետերի վերազինում ավտոտեխնիկայի հենքի վրա հավաքված մոդուլներով, որոնք կահավորված լինեն աշխատանքի և հանգստի կազմակերպման համար, ինչը ժամանակակից մարտի պայմաններում հնարավորություն կտա ապահովելու կառավարման համակարգի բարձր մակարդակի կենսունակությունը, շարժունակությունը, անընդհատությունը և օպերատիվությունը:
4. Գիտական մոտեցումով՝ տեսական հիմքերով և գործնական ակնարկով, «Մարտական պայմաններում համազորային շտաբների ծառայություն» ձեռնարկի մշակում:
5. Մշակված «Խախտված կառավարման վերականգնումը» ուղեցույցի ուսումնասիրում, անհրաժեշտության դեպքում՝ լրամշակում և Զինված ուժերում որպես ձեռնարկի ներդրում:
6. Զորամասից զորամաս օղակների միջև ևս առանձին ռոկադային օպտիկամանրաթելային կապի գծերի զարգացում և փռում, ինչի շնորհիվ բանակում կստեղծվի «օղակաձև» համակարգ և կապի անընդհատության աստիճանը կհասցվի առավելագույնի:
7. Ռադիոկապի բոլոր օժանդակ հանգույցների սարքավորում որպես ինքնավար համակարգերի, որոնք կաշխատեն առանց անձնակազմի միջամտության: Սարքավորանքի սնուցման կազմակերպում արևային պանելների միջոցով:
8. Մինչև ջոկի, հաշվարկի և կրակային այլ միավորի հրամանատար օղակի համալրում թվային և գաղտնագրման հնարավորություն ունեցող ռադիոկայաններով, նույն սկզբունքով զորատեսակների և հատուկ զորքերի ստորաբաժանումների համալրում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ

Դիմելով գիտաժողովի հարգարժան մասնակիցներին՝ ուզում եմ իմ կարծիքը հայտնել օտարերկրյա պետությունների ռազմական և այլ ոլորտների փորձի ուսումնասիրման և մեր պետության կառույցներում ներդրման ուղղությամբ գործնական քայլերի ձեռնարկման վերաբերյալ: Կարծում եմ, որ մեր բանակի ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման փորձը բավականաչափ մեծ է և իր դրսևորումներով հարուստ ինչպես մարտավարական, այնպես էլ օպերատիվ ու ռազմավարական արվեստներում: Եվ մինչև մեր Զինված ուժերում ԱՄՆ-ի կամ այլ առաջատար պետությունների փորձի ներդրումը առաջարկում եմ ուսումնասիրել Արցախյան գոյապայքարի 1992–1994 թթ. և 2016 թ. պատերազմների փորձը:

Միանշանակ է, որ գիտաժողովում հնչեցված՝ տարբեր ոլորտներին առնչվող միջացառումները կարող են դրական լիցք հաղորդել զորքերի կառավարման ու կիրառման նկատմամբ նոր մոտեցումների ընտրության և գործնականում դրանցով առաջնորդման գործառույթներում:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ նպատակահարմար է, բացի դրական կողմերից, ուսումնասիրել նաև դրանց բացասական կողմերը (ըստ երևույթին, օտարերկրյա մասնագետները չեն ցանկանա ներկայացնել իրենց բանակներում բացասական փորձի դրսևորումները), որպեսզի մենք այսօր գտնենք դրանց լուծումները, այլ ոչ թէ ռազմական գործողությունների ժամանակ:

ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Գ. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, ԶՈՒ-ի փոխգնդապետ

Ներկայացվող զեկուցման մեջ կփորձեմ արծարծել արդի պայմաններում ՌԷՊ-ի շարժող ուժի և զարգացման հեռանկարային ուղիների նկատմամբ մոտեցումների հարցը՝ առանց կրկնելու ժամանակակից ՌԷՊ-ի բովանդակությանն ու էությանը վերաբերող հայտնի ճշմարտությունները:

Պաշտպանության համակարգի զարգացման վերաբերյալ Պաշտպանության նախարարի տեսլականում նախորոշվում է մեր ԶՈՒ-ն ժամանակակից սպառազինությամբ համալրելու անհրաժեշտությունը: ԶՈՒ-ի զորքերի և զենքի կառավարման համակարգերի, դրանցում կիրառվող ռադիոէլեկտրոնային միջոցների քանակական և որակական հատկանիշների, ինչպես նաև դրանց շարունակական զարգացման ուղղությամբ հակառակորդի ԶՈՒ-ի ղեկավարության վարած աշխատանքների հաշվառմամբ տրամաբանական է, որ մեր ռազմատեխնիկական և ռազմաարդյունաբերական քաղաքականությունը պետք է ուղղված լինի նաև մեր ԶՈՒ-ի ռադիոէլեկտրոնային պայքարի ոլորտի զարգացման վրա՝ նրա բովանդակության բոլոր լայն իմաստներով:

Ժամանակակից հասարակության համընդհանուր տեղեկութացման պայմաններում վերջին տասնամյակներում զինված պայքարի բնույթի փոփոխության միտումները վկայում են նրա տեղափոխումը դեպի տեղեկատվական ոլորտ:

Դրա հետ մեկտեղ նպատակահարմար է, բացի զինված պայքարի ավանդական ոլորտներից (ցամաք, ծով, օդ, տիեզերք), առանձնացնել ևս մեկը՝ էլեկտրամագնիսական սպեկտրը:

Վերջին տասնամյակներում զինված ընդհարումների, փորձարկումների և զորավարժությունների ընթացքում ձեռք բերված փորձը ցույց է տալիս, որ զորքերի խմբավորումների մարտական հնարավորությունների աստիճանն զգալի չափով աճում է ոչ միայն և ոչ այնքան խոցման գերճշգրիտ միջոցների կիրառման, որքան, առաջին հերթին, ենթակա ուժերի և միջոցների ղեկավարման գործում գերազանցության հասնելու շնորհիվ: Այդ գերազանցությունը ձեռք է բերվում և պահպանվում, եթե պատրաստված զորքերը ժամանակակից հետախուզության և կառավարման միջոցներն օգտագործում են ռացիոնալ կերպով:

Այսպիսով՝ կառավարման տեսակետից գերակայությանը տիրապետող հակամարտող կողմը ունակ է նույնիսկ սովորական խոցման միջոցների օգտագործման դեպքում, ճիշտ ժամանակին ստանալով հակառակորդի

մասին լիարժեք և ճշգրիտ տեղեկություններ, ընդունելով ստեղծված իրավիճակին համարժեք որոշումներ և օպերատիվ կերպով դրանք հասցնելով ենթականերին, ջախջախել թվապես իրեն մի քանի անգամ գերազանցող հակառակորդին:

Պետք է նշել, որ բոլոր տեսակների ժամանակակից և հեռանկարային սպառազինության և ռազմական տեխնիկայի (առաջին հերթին՝ գերճշգրիտ, «բանական», ռոբոտացված, հետախուզական, ՌԷՊ-ի, կապի և կառավարման միջոցների) տեխնիկական հիմքը կազմում են ռադիոէլեկտրոնային միջոցները:

Որպես կանոն՝ օպերացիայի նպատակներին հասնելու համար տարատեսակ ռադիոէլեկտրոնային միջոցները միավորվում են կապի միջոցներով՝ ստեղծելով տարբեր մակարդակների բարդությամբ և զանազան նախանշանակման համակարգեր: Ընդ որում, ժամանակակից զինված ընդհարումների դինամիկության հետևանքով դրանց ճնշող մեծամասնություն կազմում են ռադիոկապուղիները: Հետախուզության, ճանաչման և տեղորոշման շատ համակարգեր նույնպես հիմնված են ռադիոալիքների տարածման (անդրադարձման) սկզբունքի վրա:

Այժմ զինված պայքարի բոլոր ոլորտների ռադիոէլեկտրոնային միջոցներով և դրանց հիման վրա ստեղծվող համակարգերով հագեցվածության պայմաններում ձևավորվել է մի տարիմաստ իրավիճակ: Մի կողմից՝ այդ միջոցների և համակարգերի ամենուրեք ներդրման շնորհիվ կտրուկ մեծանում են օպերացիաների նպատակներին հասնելու հնարավորությունները, մյուս կողմից՝ դրանց աշխատանքի կանոնավոր բանելակարգերը խախտվելու, առավել ևս՝ շարքից դուրս գալու դեպքում կարող են ի դերև լինել բոլոր առավելությունները, նույնիսկ տեղի ունենալ անվտանգության լրիվ կորուստ: Այսպիսով՝ ակնհայտ է դառնում տեխնիկապես զարգացած և հագեցված զորքերի այսպես կոչված «կախվածության գործոնը»:

Զարմանալի չէ, և կարծում եմ՝ առավել ևս կարևոր է, որ ստեղծված իրավիճակում ռադիոէլեկտրոնային պայքարը, լինելով հակառակորդի առանձին ռադիոէլեկտրոնային միջոցների ու դրանց հիմքի վրա ստեղծված համակարգերի աշխատանքի ապակազմակերպման և նույնատիպ յուրային համակարգերի պաշտպանության բավական մատչելի եղանակ, պետք է մղվի առաջին պլան և համարվի զարգացման առաջնահերթություն:

Որոշակի պայմաններում հենց ՌԷՊ-ի կիրառման մեթոդները կարելի է դիտել որպես հակառակորդի զինված պայքարի բարձր տեխնոլոգիական միջոցների և համակարգերի առավելությունները չեզոքացնող «անհամաչափ» միջոցառումներ:

ԶՈՒ-ում զորքերի և զենքի կառավարման միջոցների և համակարգերի բազմազանությունը պահանջում է ՌԷՊ-ի նկատմամբ ցուցաբերել համակարգված մոտեցում, այսինքն՝ ՌԷՊ-ը դիտել որպես մի նպատակային համակարգ, որն ունի համապատասխան համակարգային հատկություններ, օրինակ՝ համակարգեր ձևավորելու, համակարգերը պահպանելու, բազմապատկիչ և այլն: Ընդ որում, պետք է հաշվի առնել գործնականում բավական

հայտնի և հաստատված այն թեզը, որ համակարգին կարող է հաջող հակազդել միայն ոչ պակաս բարդությամբ համակարգը:

Պետք է նաև հաշվի առնել, որ ՌԷՊ-ի միջոցների կիրառման փորձը ցույց է տալիս դրանց արդյունավետության մեծացումը այլ ֆունկցիոնալ նշանակության ազդեցություն գործող միջոցների հետ համակարգված կիրառման դեպքում:

Զորքերի և զենքի կառավարման համակարգերի և միջոցների զարգացման ակնհայտ միտումները, վերջին տասնամյակների զինված ընդհարումներում կիրառված ռադիոէլեկտրոնային միջոցները (օրինակ՝ հաճախականային տիրույթների զգալի ընդլայնումը, ճառագայթման հզորությունների և հեռավորությունների նվազումը, տվյալների փոխանակման արագության մեծացումը, հատուկ աշխատանքային բանելակարգերի կիրառումը, ցանցային կառուցվածքների ձևավորումը, օդային, անօդաչու և տիեզերական համակարգերի լայն օգտագործումը և այլն) վկայում են, որ կարելի է որոշել ՌԷՊ-ի համակարգերի ամբողջությամբ վերցված և առանձին տարրերի զարգացման մի շարք հեռանկարային ուղղություններ, որոնցից մի քանիսը կմեկնաբանեմ: Դրանք են.

1. ՌԷՊ-ի առանձին միջոցների ֆունկցիոնալ հնարավորությունների և համապիտանիության մեծացումը:

Խոսքը հիմնականում մեր սպառազինությունում առկա ՌԷՊ-ի միջոցների այն նմուշների մասին է, որոնց արդիականացման շնորհիվ զգալիորեն աճել են դրանց մարտական հնարավորությունները:

Զարգացման այս ուղին հնարավորություն է տալիս ապահովելու ՌԷՊ-ի միջոցները հակառակորդի կառավարման համակարգերում կիրառվող ռադիոէլեկտրոնային միջոցներին որակապես համապատասխանեցնելու նախապայմանը, ինչպես նաև տեխնիկական բնութագրերի բարելավման շնորհիվ որոշ չափով նվազեցնելու քանակական հարաբերակցության անբարենպաստ ազդեցությունը:

Նման աշխատանքներ մեր ռազմաարդյունաբերության համալիրի ներուժի ներգրավմամբ արդեն կատարվել են, անհրաժեշտ է դրանք շարունակել ավելի մեծ մասշտաբով:

2. Ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգի ստեղծումը պաշտպանության կառուցման ժամանակ՝ այլ համակարգերի և տարրերի հետ մեկտեղ:

Խորապես համոզված եմ, որ զինված ընդհարումների դիտվող զարգացումների պայմաններում մոտ ապագայում առաջանալու է պաշտպանության կառուցման ժամանակ ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգի ստեղծման անհրաժեշտություն, ընդ որում, տարբեր օղակներում՝ ԶՈՒ, բանակային կորպուս, գունդ և այլն, տարբեր բովանդակությամբ՝ ըստ տվյալ օղակի առանձնահատկությունների և ՌԷՊ-ի խնդիրների կատարման համար առկա ուժերի ու միջոցների: ՌԷՊ-ի համակարգի ստեղծման անհրաժեշտությունը աճում է հակառակորդի կառավարման համակարգի զարգացմանն ուղիղ համեմատական կարգով:

Արդեն մեկ անգամ նշել եմ համակարգի դեմ բարդությամբ ոչ պակաս համակարգով պայքարելու անհրաժեշտության թեզը, իսկ ելնելով այն փաստից, որ հակառակորդի զորքերի և զենքի կառավարման համակարգը բազմաշերտ և աստիճանակարգորեն բարդ համակարգ է, որը ներառում է հետախուզության, ազդարարման, ճանաչման, կապի և այլ ենթահամակարգեր, դրա դեմ առավել արդյունավետ կերպով պայքարելու համար անհրաժեշտ է ստեղծել ՌԷՊ-ի համակարգ, որում կընդգրկվեն ՌԷՊ-ի խնդիրների կատարման համար ներգրավված բոլոր ուժերն ու միջոցները, ընդսմին դրանք պետք է միավորվեն այնպես, որ դառնան մեկ միասնական գործիք, որը կգործի մեկ ընդհանուր մտահղացմամբ և պլանով: Ընդ որում, այն պետք է ներառի ռադիոէլեկտրոնային հետախուզության, ՌԷՊ-ի, ՀՕՊ-ի, կապի, հրթիռային զորքերի և հրետանու, ավիացիայի ինչպես առանձին միջոցներ, այնպես էլ ենթահամակարգեր:

3. Հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցների ֆունկցիոնալ խոցման եղանակների մշակումը՝ այնպիսի զենքերով, որոնք օգտագործում են հզոր ուղղորդված էլեկտրամագնիսական ճառագայթում:

Ռադիոէլեկտրոնային միջոցների հոծ խմբավորումների ձևավորումը և դրանց վրա էլեկտրամագնիսական ազդեցության արդյունավետության մեծացման ձգտումը կհանգեցնեն ՌԷՊ-ի բովանդակության այնպիսի զարգացման, երբ ՌԷՊ-ի միջոցները ճնշող ազդեցություն կգործեն ոչ թե առանձին միջոցի, այլ դրանց մի ամբողջ խմբավորման վրա, ընդ որում, որպես ռադիոէլեկտրոնային միջոցների խմբավորում կարող ենք դիտել նաև ԱԹԱ-ների բազմությունը:

Այսպիսի միջոցների շարքն են դասվում գերկարճ իմպուլսային բարձր հաճախականության հզոր ճառագայթների աղբյուրները, որոնց կիրառումը կարող է առաջացնել տեղափակված տարածքում և օդային տարածությունում ռադիոէլեկտրոնային միջոցների զանգվածային ռադիոէլեկտրոնային խոցում և շարքից դուրսբերում:

Զանգվածային ռադիոէլեկտրոնային ազդեցության մեծացման այլ հնարավոր ուղղություններից են մթնոլորտում արհեստական իոնված շրջաններ առաջացնող միջոցները, որոնք խոչընդոտում են ռադիոալիքների տարածմանը և արգելափակում տեղափակված տարածքի ռադիոուղիներով տեղեկատվության փոխանակումը այլ շրջանների հետ:

ՌԷՊ-ի վարման այսպիսի մարտավարական եղանակի կիրառումը կարող է միջոցառումների մասշտաբը հասցնել օպերատիվ-մարտավարական մակարդակի, ինչպես նաև խոչընդոտել օդանավակայաններից ինքնաթիռների վերթիռին:

4. ՌԷՊ-ի մասնագետների ուսուցման կատարելագործումը:

ՌԷՊ-ի նորագույն միջոցների ստեղծմանն ու ձեռքբերմանը զուգահեռաբար մեր ԶՈՒ-ում ի հայտ է գալիս ՌԷՊ-ի մասնագետների ուսուցման հարցը, որը կարևոր և պրոբլեմային է:

Խնդրի հիմնական պատճառներից մեկն այն է, որ ՌԷՊ արտադրող հայրենական կազմակերպությունները բավական երիտասարդ են և չունեն

զորքերում այդ կայանները շահագործող անձնակազմի պատրաստման համար համապատասխան մասնագետներ, իսկ ՌԷՊ-ի ժամանակակից և տեխնիկապես բարդ միջոցների անձնակազմի ուսուցումը պատշաճ կերպով կազմակերպելու համար միայն նրանց մշակած գրականությունը բավական չէ:

Օտարերկրյա, մասնավորապես՝ ՌԴ, կազմակերպություններում այս հարցը դրված է անհամեմատաբար բարձր մակարդակի, սակայն նրանց ուսումնական բազայի հիման վրա մեր մասնագետների ուսուցումը բավական ծախսատար է, պետք է նաև հաշվի առնել, որ ուսուցում ստացած անձնակազմից ոչ բոլորն են անցնում ԶՈՒ-ում երկարատև ծառայության, ուստի և նոր համալրված անձնակազմի համար կրկին ծագում է ուսուցման կազմակերպման խնդիրներ:

Այս խնդրի արդյունավետ լուծման օպտիմալ տարբերակ է ստեղծել ԶՈՒ-ի ՌԷՊ-ի ուսումնական կենտրոն, որտեղ համապատասխան մասնագետների և պատրաստված դասախոսների ներգրավմամբ հնարավոր կլինի բարձր մակարդակով կազմակերպել և իրականացնել ուսման գործընթացը ԶՈՒ-ի ՌԷՊ-ի բոլոր զորամասերի և ստորաբաժանումների մասնագիտացումներով:

Ուսումնական կենտրոնի ստեղծման համար հենք կարող է լինել ՌԷՊ-ի ուսումնական վաշտը, որտեղ հնարավոր է կահավորել համապատասխան լսարաններ և ուսումնական կետեր՝ մեծ մասամբ արդեն առկա ուսումնանյութական բազայի օգտագործմամբ:

5. Ռադիոէլեկտրոնային միջոցների և համակարգերի խոցման ջանքերի փոխադրումը «հակառակորդի տարածք», անօդաչու և շպրտվող (նետվող) ՌԷՊ-ի միջոցների լայն կիրառումը:

6. Օպերացիաների (մարտական գործողությունների) վարման շրջաններում հակառակորդի հետախուզական տեխնիկական միջոցներին հակազդեցություն գործելու համար նմանարկման և բարդ ռադիոէլեկտրոնային իրավիճակ ստեղծող միջոցների կիրառումը:

7. Հակառակորդի հետախուզական տեխնիկական միջոցներին հակազդեցություն գործելու նպատակով սպառազինության և ռազմական տեխնիկայի տեսանելիության նվազեցման նոր տեխնոլոգիաների մշակումը:

8. ՍՈՏ-ն, ռազմական օբյեկտները ռադիոէլեկտրոնային հետախուզությունից և կառավարվող զենքով խոցումից գոտիական և օբյեկտային եղանակով պաշտպանելու համար ՌԷՊ-ի վրագետնյա բազմաֆունկցիոնալ համակարգերի ստեղծումը:

Ապագայում ՌԷՊ-ի զորքերի սպառազինության զարգացման հիմնական ջանքերը, հնարավոր է, հարկ կլինի կենտրոնացնել նշված նորամուծական ուղղությունների վրա:

Ակնհայտ է, որ զարգացման այս ուղիները առաջիկայում կարող են փոխակերպվել՝ պայմանավորված զինված ընդհարումների, գիտության, տեխնիկայի զարգացման տրամաբանությամբ և, որպես հետևանք, պետք է գտնվեն ռազմական գիտության հատուկ ուշադրության կենտրոնում:

ՄԵՐ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԳՈՒՄԱՐՏԱԿԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊՆ փոխգնդապետ

1. ՆԱԽԱԲԱՆ

Ռազմարվեստի զարգացման գործում փակուղիները որպես երևույթ կրում են բավական կայուն բնույթ և սովորաբար առաջանում են մինչպատերազմական շրջանում: Մեր ԶՈՒ-ն այսօր աշխարհում այն եզակի բանակներից է, որն ամեն օր վարում է ոչ լայնածավալ մարտական գործողություններ և մշտապես կանգնած է լայնածավալ պատերազմի շեմին: Հաշվի առնելով հակառակորդի զինվածության և պատրաստության աստիճանը՝ կարող ենք ասել, որ մեր բանակին սպասում է բնույթով բավական արդիական պատերազմ՝ նորագույն զինատեսակների կիրառմամբ և նոր մարտավարական լուծումներով:

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի տեսլականում և ելույթներում շեշտվում է ակտիվ պաշտպանության և *ոչ լայնածավալ հարձակողական գործողությունների մարտավարության զարգացումը*: Փորձենք հասկանալ՝ ինչ է այս ամենը նշանակում, և ինչպես է այն արտահայտվում ժամանակակից ռազմագիտական զարգացումներում:

2. ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՕՊՏԻՄԱԼ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Ըստ էության՝ ամբողջ աշխարհում դեռ գերակայում է բանակ–կորպուս–դիվիզիա–գունդ–գումարտակ դասական կառուցվածքը: Այս կառուցվածքը այնքան էլ չի համապատասխանում օպերատիվ թատերաբեմերի վրա վարվող ոչ լայնածավալ, ոչ զանգվածային ռազմական (մարտական) գործողություններին: Այն բանակները, որոնք «Սառը պատերազմից» հետո շփվեցին կամ մասնակցություն ունեցան նմանատիպ պատերազմներին, ստիպված եղան փոխել իրենց մոտեցումները: Առաջին հերթին աչքի զարնեց դիվիզիաներից բրիգադների, գնդերից գումարտակների անցումը: Դրանք հաճախ մշտական ստորաբաժանումներ չէին, ստեղծվում էին կարճաժամկետ խնդիրներ լուծելու համար, սակայն դառնում էին ավելի մեծ չափով օրինաչափություն, քան բացառություն: Վաշտերի և գումարտակների հիմքով ստեղծված մարտավարական շարժունակ, ճկուն, արագագործ և ինքնավար ստորաբաժանումները ծնվել են դեռ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ[1]: Նախասկիզբը, ինչ խոսք, գերմանական ռազմական միտքն է: Գումար-

[1] Տես *С. Левик.* Штурмовая группа «зачищает» дом. «Армейский сборник», Ноябрь

տակային մարտավարական խումբ ասածի ժամանակակից հասկացողության, որը ենթադրում է մեծ շարժունակություն՝ շնորհիվ տրանսպորտային միջոցների և ինքնագնաց հրետանու, հիմքը 30-ական թվականներին գերմանական Վերմախտի ծրագրած գրոհային խումբն է *(Kampfgrupp)*[2]: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նույն ամերիկյան, իսրայելական, ֆրանսիական և ռուսական բանակներում ստեղծվում են նմանատիպ գումարտակային, վաշտային խմբեր[3]: Երբ մարտական գործողությունները ձեռնարկվում են ոչ մեծ օպերատիվ թատերաբեմերում, շատ արդյունավետ են լավ պատրաստված, ինքնաբավ, ինքնուրույն որոշումներ կայացնող հրամանատարով գումարտակային մարտավարական խմբերը[4]: Այս լուծումները առաջինը կիրառողներից մեկն էլ եղել ենք հենց մենք՝ Արցախյան պատերազմի ժամանակ[5]: Պաշպանական շրջանների ստեղծումը և նվազագույն հետևակով խառը զրահախմբերի կիրառությունը այդ իսկ տրամաբանական լուծումների շրջանակում էր:

Ամբողջ աշխարհում ռազմական գիտությունը փնտրտուքի մեջ է, և միակ ուղղությունը, որը շատ թե քիչ հստակորեն է ուրվագծվում, այն է, որ ամենատարբեր աշխարհագրական (ռելիեֆ) և կլիմայական պայմաններում առաջադրված բոլոր խնդիրները շատ կարճ նախապատրաստումից հետո ունակ կլինեն կատարելու՝ փոքր ինքնաբավ մարտավարական խմբերն են (վաշտ, գումարտակ, շարժունակ ստորաբաժանում):

2000-ական թվականների սկզբին գումարտակային մարտավարական խմբերը, ցանցակենտրոն կառավարման հետ զուգորդմամբ, տարածում ստացան ամերիկյան բանակում: Եվ պատահական չէ, որ 2003 թ. ապրիլի 5-ին Իրաքի մայրաքաղաք առաջինը մտավ 64-րդ տանկային գնդի 1-ին գումարտակային մարտավարական խումբը, իսկ այդ հաջողությունից հետո ավելի մեծ նպատակներով ապրիլի 7-ին իրականացվեց *"Thunder Run Two"* օպերացիան, որին մասնակցեցին 64-րդ տանկային գնդի առաջին և չորրորդ գումարտակները և 15-րդ հետևակային գնդի երրորդ գումարտակային մար-

2012, № 11; *Н. И. Никифоров.* Штурмовые бригады Красной Армии в бою. М., 2008:

[2] Տես *J. Lucas.* Battle Group!: German Kampfgruppen Action in World War Two. USA: Rigel Publications, 2004:

[3] Տես *Ю. Б. Байрамуков, Е. А. Драбатулин.* Общая тактика. Сухопутные подразделения армий иностранных государств. Красноярск, 2011, с. 6; *В. Владимиров.* Реорганизация соединений в Сухопутных войсках США. «Зарубежное военное обозрение», 2005, № 7:

[4] Տես *В. Н. Зарицкий, М. Ю. Сергин, Л. А. Харкевич.* Основы общей тактики для подготовки офицеров запаса артиллерийского профиля. Учебное пособие. Тамбов, 2004; «Общевойсковые тактические группы». «Военная энциклопедия», т. 5. М., 2001, с. 556; *В. И. Мураховский, М. В. Павлов, Б. С. Сафонов, А. Г. Солянкин.* Роль и место танков в общевойсковом бою. «Современные танки». Под ред. Б. С. Сафонова и В. И. Мураховского. М., 1995, сс. 9–13:

[5] Տես *Ա. Հովհաննիսյան,* Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը: Ե., 2013, էջ 210–235:

տավարական խումբը[6]: Դրա շնորհիվ փաստացի գրավվեց Բաղդադի մի առանձին մեծ հատված:

2003 թվականին Իրաքում ԱՄՆ-ի ձեռնարկած օպերացիաները լավ հիմք էին հասկանալու համար, որ բրիգադները պետք է լինեն կազմակերպիչ մարմիններ, որոնք ուղղահայաց և հորիզոնական անխափան կապի շնորհիվ կկառավարեն, կուղղորդեն գումարտակները, անհրաժեշտության դեպքում՝ պայմանավորված ունեցած հարվածային միջոցներով, կաջակցեն նրանց գործողություններին: Ընդսմին դրանք, օժտված լինելով ինքնաբավությամբ, ունակ են ինքնուրույնաբար կատարելու առաջադրված խնդիրները, իսկ խմբի հրամանատարական կազմը ավելի ազատ է որոշումների կայացման հարցում[7]:

3. ՕՐԻՆԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ

Ռուսական բանակը, Հյուսիսային Կովկասում վարելով հակաահաբեկչական գործողություններ, հասկացավ, որ մարտավարական դասական գումարտակ–գունդ–դիվիզիա շղթան այլևս արդյունավետ չէ: Դրա համար ռուս-վրացական պատերազմում նա կիրառեց գումարտակային մարտավարական խմբերը, ինչը հաստատում է ռուս-վրացական պատերազմի (08.08.08) ելքը վճռած 58-րդ բանակի հրամանատար գեներալ Անատոլի Խրուլյովը: Նա, գնահատելով հակառակորդին, եկել է այն եզրակացության, որ պետք է կոտրի բոլոր դասական կարծրատիպերը և մարտական գործողություններ վարի փոքր խմբերով՝ հարվածներ հասցնելով տարբեր ուղղություններից, հակառակորդին չտալով ժամանակ նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելու համար: Նա, ունենալով երկու գումարտակային խումբ (դրանք ուժեղացված էին, կարելի է ասել՝ ավելի շատ կրճատ կազմով գնդեր էին), դրանք բաժանում է վաշտային, իսկ որոշ տեղերում նաև դասակային խմբերի[8]: Նա փորձում է այդ խմբերով վրացական զորքերին հասցնել առավելագույնս անսպասելի ու դիպուկ, կայծակնային հարվածներ և անհետանալ, կրակային խոցումով ստիպել հակառակորդին անցնել պաշտպանության, ստեղծել մեծ ուժերի պատրանք, ամեն գնով խափանել հակառակորդի կառավարման համակարգի գործունեությունը, իր ստորաբաժանումների և կրակային միջոցների միջև ապահովել անընդհատ փոխգործություն: Ըստ Խրուլյովի՝ դրա համար անհրաժեշտ է ունենալ լավ ուսուցանված անձնակազմ և հրամանատարներ: Որպես արդյունք՝ գումարտակային (վաշտային) մարտավարական խմբերը, կտրված լինելով հիմնական ուժերից, կատարեցին իրենց վրա դրված խնդիրը՝ կաշկանդել հակառակորդին, նրան կորուստներ պատճառել, ձախողել նրա խնդիրների կատարումը և ժամանակ շահել գլխավոր ուժե-

[6] Տես *M. R. Gordon, B. E. Trainor*. Cobra II: The Inside Story of the Invasion and Occupation of Iraq. Vintage Books, 2007, PP. 378–410:

[7] Տես *Վ. Վլադիմիրով,* Նշ. աշխ.:

[8] Տես «Внезапности не было: генерал Хрулев о пятидневной войне в Южной Осетии», 08.08.2018 (https://sputnik-abkhazia.ru/interview/20180808/1024661498/general-xrulev-o-pyatidnevnoj-vojne-v-yuzhnoj-osetii.html):

րի վերախմբավորման համար: Հակառակորդը չհասավ իր գլխավոր նպատակին՝ գրավել Ցխինվալը, ապա նոր անցնել պաշտպանության:

Ռազմագիտական գրականության մեջ կան հետաքրքիր տեղեկություններ նաև Ուկրաինայում, Սիրիայում ռուսական մոտոհրաձգային ստորաբաժանումների կիրառման վերաբերյալ:

Մասնավորապես՝ ԱՄՆ-ի ԶՈՒ-ի զրահատանկային զորքերում ծառայող Ամոս Ս. Ֆոքսն իր հոդվածում նշում է, որ ռուսական կողմը հաջողությամբ օգտագործել է կիսաանկախ գումարտակային մարտավարական խմբեր, հետախուզահարվածային միջոցներ, որոնք սերտորեն փոխգործել են ԱԹԱ-ների և կրակային միջոցների հետ, ինչը և մեծացրել է մարտավարական խմբերի հրամանատարներին կրակային աջակցության ցուցաբերման արագությունը[9]: Որպես հաջողության վառ օրինակ հեղինակը նշում է 2014 թ. հուլիսի 11-ին Զելենոպոլիե քաղաքին հասցված հարվածը: Այդ ժամանակ մարտավարական ԱԹԱ-ներն առավելագույնս օգտագործվել են ի նպաստ գումարտակային մարտավարական խմբերի, որոնք կազմավորվել էին հենց մարտավարական հաջողության հասնելու համար: Դա ջախջախիչ հարված էր ուկրաինական բրիգադներին:

Մյուս հաջող ձեռնարկումը 2014 թվականի օգոստոսի սկզբին էր, Իլովայսկ քաղաքի մերձակայքում, երբ գումարտակային մարտավարական խմբերի գործողություններն ուղեկցվեցին ԱԹԱ-ների լայնամասշտաբ կիրառմամբ: Ռուսական նման խմբերի կիրառմամբ հաջորդ օպերացիան 2014 թ. սեպտեմբերից մինչև 2015 թ. հունվար տևած Դոնեցկի օդանավակայանի գրավումն էր, «Փոքր Ստալինգրադը»: Դրա վերջնարդյունքը եղավ այն, որ ուկրաինական կողմը կրեց մոտ 200 անվերադարձ և մոտ 500 սանիտարական, ինչպես նաև ռազմական տեխնիկայի զգալի կորուստ[10]:

Ինչպես ցույց տվեց ռուս-ուկրաինական պատերազմը, գումարտակային մարտավարական խմբերը հանդես եկան որպես ժամանակակից մարտական գործողությունների վարման «նուրբ» և նպատակային գործիք: Այս խմբերի օպերատիվ ճկունության ու հաջողությունների շնորհիվ ՌԴ ԳՇ պետ գեներալ Վ. Գերասիմովը նախատեսեց 2016 թ. սեպտեմբերին առկա 66 գումարտակային մարտավարական խմբերի թիվը մինչև 2018 թ. հասցնել 125-ի: Բացի այդ, խմբերը պետք է համալրվեն բացառապես պայմանագրային զինծառայողներով, ինչը ևս կբարձրացնի նրանց մարտունակության աստիճանը:

Այս տեսակետից այլ է ՌԴ ԶՈՒ-ի մասնակցության պատկերը Սիրիայում, քանի որ Սիրիա մեկնած խմբավորման կազմում համազորային ստորաբաժանումներ որպես այդպիսին պաշտոնապես չեն նշվել՝ բացառությամբ պահպանության թվակազմից: Սիրիական բանակի զորատեսակների հետ համատեղ գործել են նաև ռուսաստանյան հատուկ նախանշանակման ստորաբաժանումները, ինչպես նաև այսպես կոչված մասնավոր կազմակեր-

[9] Տես «Тактика российских батальонных тактических групп. Взгляд из-за океана». «LiveJournal», 28.01.2017 (https://starcom68.livejournal.com/2235355.html):

[10] Տես նույն տեղում:

պությունները: Սակայն սա շատ քիչ էր, որպեսզի պատերազմական տարիներին հյուծված և լիարժեք ղեկավարումը կորցրած սիրիական բրիգադներն ու դիվիզիաները ունենային հաջողություն:

Սիրիայում ռուսական միջամտությունն սկսվեց հրահանգիչների ակտիվ ու կանոնակարգված աշխատանքով: Ի՞նչ վիճակում էին կառավարական ուժերը[11].

- չէին զբաղվում մարտական պատրաստմամբ,
- անձնակազմը միատարր չէր և ներառում էր տարբեր կրոնական ուսմունքներ դավանողների,
- ծաղկում էին դասալքությունը և կոռուպցիան,
- հրամանատարական կազմը պլանավորումը կատարում էր շատ դանդաղ և չէր կարողանում օպերատիվ կերպով արձագանքել փոփոխվող իրադրությանը,
- առկա էր թույլ ղեկավարման համակարգ,
- չկար ընդհանուր մատակարարում,
- զորքը մարտի դաշտում հանկարծակիի էր գալիս և խուճապի մատնվում, երբ հակառակորդը կիրառում էր անծանոթ մարտավարական հնարքներ և այլն:

Ռուս հրահանգիչների հիմնական գործը դարձավ Հանրապետական գվարդիայի և 4-րդ տանկային դիվիզիայի «Վագրեր» բրիգադի հետ աշխատանքը, քանի որ, ի տարբերություն այլ զորամասերից, դրանցում.

- անձնակազմը գրեթե միատարր էր (հիմանականում՝ ալավիներ),
- հրամանատարական կազմը բացառապես իշխանամետ էր (շատերն ունեին պետական վերնախավի հետ ազգակցական կապ),
- նոր ստացվող սպառազինությամբ համալրվում էին առաջին հերթին այդ զորամասերը:

Ռուս մասնագետները փաստացի սկսեցին սիրիական «ընտրյալ» զորամասերին զրոյից ուսուցանել ժամանակակից մարտավարական հնարքներ: Օրինակ՝ սիրիացիներն անգամ պատկերացում չունեին, թե ինչ են գումարտակային կամ վաշտային մարտավարական խմբերը:

4. ԳՈՒՄԱՐՏԱԿԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ է ներկայացնում գումարտակային մարտավարական խումբը: Դա մոտոհրաձգային կամ տանկային գումարտակների հիմքի վրա ձևավորվող ժամանակավոր մարտավարական խումբ է, որի կազմում, կախված կատարվելիք խնդրից, կարող են լինել հետևյալ մարտական ստորաբաժանումները՝ 1-3 մոտոհրաձգային վաշտ, 1-2 տանկային վաշտ, 1-2 120-մմ ինքնագնաց ականանետային մարտկոց, հակատանկային վաշտ, ինժեներական, զենիթային, հետախուզական և մարտական ապահովման այլ ստորաբա-

[11] Տես «После Алеппо: Сирийской армии жизненно необходима реформа». «Русское Агентство Новостей», 16 декабря 2016 (http://xn----ctbsbaa3aibxhck.ru-an.info):

ժանումներ: Խումբը պետք է պատրաստ լինի կատարելու ինքնուրույն ռազմարշավ մեծ հեռավորությունների վրա կամ տեղափոխվելու ամենատարբեր միջոցներով և առաջադրանքը կատարելու անծանոթ տեղանքում: Գումարտակային մարտավարական խմբերը չունեն հիմնական կազմ, այլ կառուցվում են ըստ իրադրության և կատարվելիք խնդրի պահանջների[12]:

Ժամանակավորապես կազմավորված գումարտակային մարտավարական խմբերի առավելությունն այն է, որ դրանց հրամանատարները հիմնականում ծանրաբեռնված չեն երկրորդական հարցերով, այլ զբաղվում են այն հարցերով, որոնք անմիջականորեն կապված են մարտական գործողության վարման հետ, լրակցված և աջակցող ստորաբաժանումներն ունեն իրենց հրամանատարները, պետերը, պատասխանատուները, որոնք պարտավոր են կազմակերպելու ապահովման հարցերը:

Իսկ որն է մշտական կազմով գումարտակային (վաշտային) մարտավարական խմբերի առավելությունը.

- հրամանատարությունը միշտ կարող է դրա համար ընտրել արհեստավարժ պատրաստված անձնակազմ,
- գումարտակի հրամանատարը կտիրապետի իր անձնակազմի կամային, որակական հատկանիշներին՝ անձամբ ճանաչելով նրանց,
- կառաջանան փոխգործողության և ներդաշնակման կազմակերպմանն առնչվող պակաս թվով խնդիրներ:

5. ԻՆՉՊԵՍ ՀԱԿԱԴԱՐՁԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՍԱՐԱԿԵՌԵԼ ԽԱԽՏՎԱԾ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Մեր ԶՈՒ-ի գլխավոր խնդիրներն են տարածքների պաշտպանությունը շփման գծի երկայնքով և պետական սահմանի անձեռնմխելիության պահպանումը:

Սակայն հակառակորդի ուժերի և միջոցների հետ հարաբերակցությունը արդեն հասնում է կրիտիկական արժեքի: Վերջին 8–10 տարիներին սպառազինության Ադրբեջանի գնումների բաց անվանացանկում ընդգրկված են՝ տանկեր, ինքնագնաց հրետանի, համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, հարվածային ուղղաթիռներ ու «անօդաչուներ», ինժեներական տեխնիկա և այլն, իսկ կազմակերպորեն նրա ԶՈՒ-ն հենվում է բրիգադների վրա, ընդսմին ղեկավարությունը փորձում է կառուցվածքով նմանակել արևմտյան մոդելը, այն է՝ ուժեղացնել բրիգադային գումարտակները, որոնք ի վիճակի լինեն կատարելու ինքնուրույն խնդիրներ: Դրա համար ձգտում են բրիգադները հագեցնելու տրանսպորտային և կրակային միջոցների լայն տեսականիով, ընդհուպ մինչև ուղղաթիռային էսկադրիլիա: Մոդելի առումով սա առաջադիմական նպատակ է: Ըստ տեղեկությունների՝ այնտեղ կիրառ-

[12] Տես «Основы общевойскового боя». «Боевой Устав по подготовке и ведению общевойскового боя», ч. 2. Батальон, Рота. Под ред. А. Д. Вавилова. М., 2006, г. 1, сс. 8–12:

վում է ղեկավարման ուղղահայացի կոշտ տարբերակը: Հասկանալի է, որ այդ հարձակողական զինանոցի ստեղծումը նպատակ ունի ձեռնարկել ճեղքում ու ջախջախել խորը շարակարգված ԱՀ ՊԲ-ն և Ղարաբաղյան խնդրում ռազմական ճանապարհով հասնել ցանկալի հանգուցալուծման:

Ի՞նչպես ենք հակադարձելու հակառակորդին...

Նախ և առաջ պետք է զարգացնել ակտիվ պահեստազորը: Խաղաղ պայմաններում ձեռնարկել նրա ինտենսիվ պատրաստումը՝ տարբեր խնդիրների կատարման համար վաղօրոք կազմավորելով որպես ստորաբաժանումներ: Այդ ստորաբաժանումներն սպառնալից ժամանակաշրջանում նախապես՝ համաձայն վերադաս շտաբի մտահղացման, շփման գոտու անհրաժեշտ ուղղություններում կփոխարինեն մշտական պատրաստության զորամասերին և կստանձնեն ուժեղացված ռեզերվով մարտական հերթապահության կատարումը:

Հակադարձումը կամ նախահարձակ, ոչ լայնածավալ կանխիչ հարձակողական գործողությունները կարող են իրագործվել նշված զորամասերի գումարտակների հենքի վրա կազմավորված, լիարժեք կերպով մարդկանցով ու սպառազինությամբ համալրված գումարտակային (վաշտային) մարտավարական խմբերի ուժերով:

Ինչո՞ւ գործողություններ գումարտակային (վաշտային) մարտավարական խմբերի միջոցով, ո՞րն է դրանց հաջողության գրավականը.

- ինքնաբավությունը (ըստ առաջադրվող խնդրի) և շարժունությունը,
- ծածուկ կերպով տեղաշարժվելու հնարավորությունը,
- հետախուզական տվյալներին արագ արձագանքելու հնարավորությունը,
- ըստ իրադրության փոփոխության՝ խմբի հրամանատարի ինքնուրույն կերպով որոշումներ կայացնելու հնարավորությունը,
- նույնիսկ մեկ գումարտակային (վաշտային) մարտավարական խմբի բացահայտումը հակառակորդին հնարավորություն չի տա պարզելու ընդհանուր մտահղացումը,
- հզոր կրակային ներգործության հնարավորությունը,
- մյուս մարտավարական օղակների համեմատությամբ ղեկավարման դյուրինությունը:

Ինչո՞ւ նախահարձակ, կանխիչ գործողություններ, քանի որ հարձակվող կողմը միշտ ունի մի քանի առավելություն.

- ինքն է ընտրում իր համար բարենպաստ հարձակման տեղն ու ժամանակը, նույն ժամանակ պաշտպանվողը պետք է ընդունի մարտը բոլոր պարագաներում, նույնիսկ այն դեպքում, երբ կնախընտրեր չմտնել մարտի մեջ,
- հարձակվողը կարող է կենտրոնացնել մարտավարական խմբերը և հարված հասցնել ցանկալի հատվածներում, ուղղություններով, մինչդեռ պաշտպանվող կողմը պետք է պատրաստվի հակադարձելու պաշտպանության յուրաքանչյուր հատվածում՝ ստիպված լինելով

իր ուժերը ապակենտրոնացնել պաշտպանության գծի ամբողջ երկայնքով,

– հարձակվողը կարող է ընտրել, թե որ օբյեկտները պետք է գրավի և երբ հարձակվի, մինչդեռ պաշտպանվող կողմը երբեք վստահ չէ, թե հարձակվողը ինչ քայլի կդիմի տվյալ պահին:

ՁՈՒ-ի կառուցվածքային և մարտական պատրաստման բարեփոխումները պետք է կատարվեն «մի քայլ առաջ» սկզբունքով: Դա նշանակում է, որ գնդային հրամանատարության ղեկավար լիազորությունները փոխանցվում են մի աստիճան բարձր՝ ԲԿ օղակին, և նույն օղակի ստորաբաժանումների վարչակազմով ուժեղացվում են ինչպես ըստ ուղղությունների մի աստիճան բարձր գտնվող ստորաբաժանումների, այնպես էլ գումարտակային մարտավարական խմբերի վարչակազմերը: Դա հիմնավորվում է նաև այն բանով, որ գնդի վարչակազմը, մարտական խնդիր ստանալով, ունակ է կայացնելու ընդամենը մեկ որոշում, երբ արևմտյան բանակների բրիգադները նույն ժամանակում ունենում են գոնե երեք որոշման տարբերակ: Խնդիրն այն է, որ արևմտյան բրիգադային վարչակազմում ընդգրկված են 60–80, ռուսական բրիգադներում՝ 40–50 զինծառայող[13]:

Ներկայումս մեր գումարտակները համալրվում են նոր զինատեսակներով (ԿՈՌԴ գնդացիր, 120-մմ ականանետեր, ԱԹԱ, հակատանկային միջոցներ), կրակային միջոցների արդյունավետությունը է՛լ ավելի կմեծանա շնորհիվ դրանց տարաշարժունության, եթե տեղադրվեն մեքենաների վրա, իսկ կառավարման համակարգում տարբեր զորատեսակների հետախուզական մարմինների և հետախուզական տեխնիկական միջոցների կատարած հետախուզման և նշանացուցման տվյալները մեկ տիրույթում կենտրոնացնելով՝ կարող ենք մեծացնել կրակային և հարվածային միջոցներով խոցման արագությունն ու դիպուկությունը, իրադրության փոփոխմանը համահունչ՝ ժամանակին արձագանքելու դրանց կարողությունը:

Մեր օրերում քողարկումը մարտում հաջողության հասնելու հիմնական նախադրյալներից մեկն է: Քանի որ տեղանքը հիմնականում լեռնաանտառային է և կտրտված, սահմանափակ անցանելիությամբ, ապա կարելի է հետևություն կատարել, որ ինչպես գնդային, այնպես էլ գումարտակային տեղաշարժերը նույնպես ապաքողարկված են և սակավ խուսավարող, իսկ ավելի փոքր միավորները՝ վաշտային մարտավարական խմբերը, միշտ հնարավոր է արագ և քողարկված ձևով հավաքել՝ մարտի սկզբում կազմելով բռունցք: Որպես օրինակ բերենք 1995 թվականին Գրոզնու մոտ երկաթգծի կայարանում մոտոհրաձգային բրիգադի ջախջախումը[14]:

---

[13] Տես նույն տեղում, *А. В. Хомутов.* Бой ведёт батальонная тактическая группа. «Армейский сборник». Научно-методический журнал МО РФ, 2009, № 6:

[14] Տես *Р. А. Соловьев.* Штурм Грозного: как это было. «Солдат удачи», 2004, № 12; *Мирослав Кулеба.* Империя на коленях, 1998, сс. 161–163:

6. ՎԵՐՋԱԲԱՆ

Առաջին շարակազմի գնդի պարագայում նպատակահարմար է ունենալ ժամանակավորապես կազմավորվող գումարտակային (վաշտային) մարտավարական խմբեր, քանի որ՝

- հրամանատարը տիրապետում է ենթակա անձնակազմի մասնագիտական և բարոյականային հատկանիշներին,
- ներդաշնակման խնդիրներ չեն ծագում,
- փոխգործությունը կատարվում է գնդի մակարդակով,
- ստորաբաժանումների հրամանատարները և անձնակազմը միմյանց լավ ճանաչում են,
- հարձակողական գործողություններն սկսելու են անմիջական շփման վիճակից:

Այլ է պատկերը օպերատիվ-մարտավարական օղակում, քանի որ մեր ռեզերվների հարձակողական (հակահարձակողական) գործողությունների վրա ազդում է տեղանքի ռելիեֆը. այն կարող է նվազեցնել հարձակման տեմպը, սահմանափակել որոշ տեսակի հատուկ զորքերի կիրառումը: Լեռնային տեղանքի ուժեղ կտրտվածությունը զորքին ստիպում է հարձակումը վարել իրարից մեկուսացած առանձին ուղղություններով: Զորքի, մարտակարգի ցրվածությունը առանձին ուղղություններով գործողություններ վարելու ժամանակ պահանջում է մոտոհրաձգային գնդի և ստորաբաժանումների ավելի մեծ ինքնուրույնություն, բարդացնում է նրանց կառավարումը, ինչպես նաև գործակցությունը և համակողմանի ապահովումը: Բացի այդ, խորքից մոտոհրաձգային գնդի առաջխաղացման դեպքում, ըստ տիրող տեսակետների և զորքերի մարտական պատրաստության պրակտիկայի, երթուղիներով միաժամանակ շարժվում են 4-6 մոտոհրաձգային և տանկային գումարտակներ, 12-18 վաշտեր, որոնք հակառակորդի հետախուզահարվածային համալիրների և ականապատման հեռակառավարվող համակարգերի համար տիպային նշանակետեր են: Հակառակորդից թաքցնել նման առաջխաղացումը չափազանց դժվար է: Այս ամենը հիմնավոր փաստարկներ են, որպեսզի օպերատիվ-մարտավարական օղակի ռեզերվի կազմը ունենա այլ կառուցվածք՝ որպես օպերատիվ տարաշարժուն խումբ կամ խմբեր ներառելով մշտական կազմով գումարտակային (վաշտային) մարտավարական խումբ, ընդսմին դրանք ունակ կլինեն կարճ ժամանակում ըստ իրավիճակի խնդիր կատարելու սպառնալից ուղղությամբ:

Մարտավարական խմբերի ձևավորմանը համահունչ իրականացվում են ոչ լայնածավալ հարձակողական և ակտիվ պաշտպանության մարտական գործողություններ: Դրանք ստորաբաժանումների ներդաշնակմամբ և շտաբային մարզումներով կդառնան կայացած մարտական միավորներ, որոնց հրամանատարությունը կարող է լուծել բարդ խնդիրներ, թեկուզ այլ ստորաբաժանումներ ղեկավարելով:

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գ. Գ. ԱՍՐՅԱՆ, ՊՆ գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու

ՀՀ Զինված ուժերի կրթական համակարգի արդիականացման հիմնական խնդիրները բխում են ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում զորքերին ներկայացվող պահանջներից: Այսօր փոխվում են զինված ուժերի ընդհանուր տեսքը և մարտական գործողությունների վարման ընթացքում զորքերի կիրառման մեթոդները: Զինծառայողների պատրաստման համակարգի և դրա գործունեության սկզբունքների փոփոխումը տեղի է ունենում այն դեպքում, երբ տվյալ գործընթացները կարգավորող ավանդական մեթոդները դառնում են անարդյունավետ: Հետևաբար պետք է լինում արդիականացնել ռազմական կրթության համակարգը:

Ռազմական կրթության համակարգի բոլոր բաղադրիչների բարեփոխումները նպատակահարմար է սկսել կառավարման կառույցների գործունեության արդյունավետության մեծացմամբ և ավարտել ռազմական կրթության արդիականացման բովանդակային կողմերի փոփոխությամբ:

Անընդհատ աճում են զինծառայողների (մասնագետների, սպաների) և բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունների շրջանավարտների որակական չափանիշներին և նրանց ուսուցման բովանդակությանը, կազմակերպմանն ու մեթոդիկային ներկայացվող պահանջները: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել և զարգացնել կրթական գործընթացում կառավարման կիրառվող ռազմավարությունը, ինչպես նաև զորքերում և ռազմաուսումնական հաստատություններում ստեղծված ուսումնական, դաստիարակչական և մեթոդական աշխատանքների կառավարման պրակտիկան, վերացնել կրթական գործընթացի կառավարման կազմակերպական, տնտեսական և գիտամանկավարժական մեխանիզմների թերությունները, կատարել ռազմական գիտությունների զարգացման և ուսուցման համար հատկացվող ռեսուրսների ծախսման օպտիմալացում:

Զինծառայողների պատրաստման կառավարման արդյունավետության մեծացումը ապահովվում է կառավարման, կազմակերպական-մանկավարժական, բովանդակային, նյութատեխնիկական և կադրային բնույթի համալիր միջոցների կիրառմամբ: Ռազմակրթական համակարգի կառավարման արդյունավետության մեծացման հիմնական ուղղություններն են՝

– գիտակրթական գործընթացի արդյունավետ կառավարման կազմակերպական-իրավական և տնտեսական պայմանների ստեղծում,

– կառավարման համակարգի կատարելագործում,
– կառավարման կոմպետենտություն, ղեկավար և ուսուցանող կազմի համալրվածության աստիճանի բարձրացում,
– գիտակրթական գործընթացի նյութատեխնիկական բազայի արդիականացում:

Ժամանակակից ռազմամանկավարժական գիտություն և ռազմական կրթություն մատուցող ռազմաուսումնական կառույցների կառավարման մարմիններն ստիպված են լուծել ռազմական գիտահետազոտական և ուսումնական գործընթացների արդյունավետության մեծացման, ուսուցման նկատմամբ գիտական մոտեցումների և կրթության որակի ապահովման՝ բացառապես բարդ ու կարևոր խնդիրներ, ձևավորել այնպիսի կրթական համակարգ, որը բավարարի ՀՀ ԶՈՒ-ի գերակա խնդիրների լուծման պահանջներին:

Ուսուցման կազմակերպման կատարելագործումը պետք է ուղեկցվի՝
– ռազմաուսումնական հաստատություններում գիտահետազոտական կենտրոնների ձևավորմամբ,
– ռազմաուսումնական հաստատությունների նյութատեխնիկական և տեղեկատվական-մեթոդական ապահովման արդիականացմամբ,
– ռազմաուսումնական հաստատությունների գիտամանկավարժական ներուժի զարգացմամբ,
– ստորաբաժանումների հրամանատարների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հմտությունների զարգացմամբ,
– ուսումնական գործընթացում արդիական կրթական ծրագրերի և նորամուծական տեխնոլոգիաների ներդրմամբ,
– ռազմաուսումնական հաստատություններում ռազմական մասնագետների և գիտական աշխատողների պատրաստման գործնական ուղղվածության ուժեղացմամբ,
– ռազմական գիտության զարգացման և արդյունավետության մեծացման գործընթացի ակտիվացմամբ:

Պետք է մեծ ուշադրություն դարձնել ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտների վերաբերյալ զորքերից ստացվող կարծիքների վերլուծությանը և պատրաստման բովանդակության ճշգրտման ժամանակին կազմակերպմանը:

Համաձայն ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից են՝ «կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը»[1]: Ռազմական կրթության համակարգի արդիականացումը հնարավորություն կտա համադրելու տարբեր

[1] Տես «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ 2004 թ. դեկտեմբերի 14-ի հմ. ՀՕ-62-Ն օրենքը, հոդ. 4, կետ 3 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=25820):

մակարդակներում զինծառայողների պատրաստման փուլերը: Կրթական համակարգի շրջանակներում դրանք կդառնան անընդհատ և շարունակական:

Տեսական գիտելիքներով օժտված, գործնական ունակություններ ձեռք բերած և մասնագիտական աճի հեռանկարներ ունեցող ռազմական մասնագետ պատրաստելու համար ռազմական կրթության համակարգի արդիականացումը պահանջում է՝

- զարգացնել ռազմական մասնագետների մասնագիտացված պատրաստման նկատմամբ հայեցակարգային մոտեցումների համակարգը,
- օպտիմալացնել կրթական համակարգի յուրաքանչյուր փուլը,
- ուսուցման տարբեր փուլերի համար մշակել ու ներդրել նոր մոտեցումներ,
- կիրառել ուսուցման ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաներ,
- ապահովել ուսուցման արդյունավետության վերլուծությունը և կրթության որակը:

Նշված գործընթացների հաջողությունը կապահովի զինծառայողների պատրաստման անընդհատությունը, հաջորդականությունը և շարունակականությունը: Այս գաղափարը աշխարհի զարգացած պետություններում ընդունված է որպես ռազմական կրթության արդիականացման հիմնարար ձև:

Շարունակական կրթությունը՝ որպես ռազմական մասնագիտական գործունեության վրա ազդող գործոն, մի կողմից, ընդունում է ռազմական կրթության զարգացման գործընթացում առանձնահատուկ մեխանիզմի կարգավիճակ, մյուս կողմից՝ նպաստում է ուսուցանվողի մասնագիտական կարողությունների և անձնային որակների անընդհատ զարգացմանը:

Շարունակական պատրաստման հայեցակարգի էությունն է՝ ուսուցման նպատակների, բովանդակության, մեթոդների, ձևերի, կիրառվող կրթական տեխնոլոգիաների անընդհատ և շարունակական պատրաստման արդյունավետության չափանիշների, գործընթացի կառավարման մեխանիզմների տեսակավորմամբ հաջորդականության և շարունակականության բնույթի որոշումը:

Ամբողջական և բազմաբնույթ պատրաստություն չստացած զինծառայողը (սպան) ի վիճակի չէ բարձր որակով կատարելու իր գործառութային պարտականությունները: Այս դեպքում հեռանկարային է համակարգի շարունակականությունը դիտել որպես առանձին տարրերից բաղկացած ամբողջականություն:

Նման հայեցակարգով ենթադրվում են՝ շարունակական պատրաստման նպատակներ, յուրաքանչյուր կրթական փուլում ձեռք բերվող գիտելիքների, կարողությունների ու հմտությունների որոշակի ծավալ, համակարգի կառուցման օպտիմալ մեխանիզմների ստեղծում և աշխատունակության ապահովման կազմակերպական սկզբունքներ, ուսումնական գործունեության արդյունավետության չափանիշներ ու պայմաններ, ուսուցման համակար-

գում ծավալվող գործընթացների ժամանակակից տեխնոլոգիաներ, ամբողջական հայեցակարգային նպատակային ծրագրերի վրա հիմնված համակարգի կառավարման մեխանիզմներ և առանձնահատկություններ բացահայտող սկզբունքային դրույթների համախումբ:

Ուսումնական գործընթացի շարունակականությունը ենթադրում է՝

– ուսումնական գործընթացի գիտական հիմնավորում,
– մասնագիտացված կրթության մակարդակի բարձրացում և զինծառայողների որակավորման կատարելագործում,
– կրթական համակարգում ուսուցման տարբեր գործընթացների և ծրագրերի օպտիմալացում և դրանց միջև տրամաբանական բովանդակային կապի ու անընդհատության ապահովում:

Արդի փուլում շարունակական պատրաստման համակարգի կառուցման խնդիրների հետազոտումն ուղղված է՝

– գործող նախնական ռազմական, միջին և բարձրագույն ռազմամասնագիտական, բարձրագույն ռազմական և հետբուհական կրթության, զորքերում մարտական (հրամանատարական, օպերատիվ) պատրաստման, մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման կրթական ծրագրերի փոխկապվածության և հաջորդականության ապահովմանը,
– կրթական ծրագրերով սահմանված գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռքբերման գործընթացի բովանդակության, ինչպես նաև նոր գիտելիքների, գործընթացների տեսակների, ինքնակրթության մեթոդների և միջոցների յուրացումն ապահովող համակարգի ձևավորմանը և արդյունավետության մեծացմանը:

Շարունակական պատրաստման նպատակներն են՝

– զինծառայողի լիարժեք զարգացումը ամբողջ մասնագիտական կարիերայի ընթացքում,
– անընդհատ փոփոխվող մասնագիտական միջավայրում զինծառայողի մասնագիտացման հարմարեցման հնարավորությունների մեծացումը,
– զինծառայողի կարողությունների և հնարավորությունների զարգացումը:

Շարունակական պատրաստումն ընդգրկում է՝

– հիմնական մասնագիտական կրթություն բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում,
– ուսուցում զորքերում մարտական (հրամանատարական, օպերատիվ) պատրաստման համակարգում և ուսումնական կենտրոններում,
– մասնագիտական վերապատրաստում, որակավորման և վերարակավորման մակարդակների բարձրացում մասնագիտական կենտրոններում,
– անձնական մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով հիմնական և լրացուցիչ կրթության, ինչպես նաև մարտական (հրամանատարական, օպերատիվ) պատրաստման համակարգի

հիմնական կրթական ծրագրերի շրջանակներում նոր գիտելիքների, կարողությունների և ունակությունների ձեռքբերմանն ուղղված ինքնուրույն աշխատանք:

Շարունակական կրթության համակարգում հաջորդականությունը *(succession, преемственность)* զինծառայողների պատրաստման ծրագրերի մշակման և օպտիմալացման հիմնական սկզբունքն է, այսինքն՝ յուրաքանչյուր հաջորդ ծրագիր պետք է հիմնված լինի նախորդի վրա:

Շարունակական պատրաստման զարգացման միջոցառումներն են.

1. զինծառայողների շարունակական կրթության համակարգի կարգավորման մարմինների և մեխանիզմների ձևավորումը,

2. ՀՀ ԶՈՒ-ում և ռազմաուսումնական հաստատություններում ռազմական կրթության անընդհատության գաղափարին համապատասխան՝ զինծառայողների շարունակական կրթության համակարգի ձևավորումը,

3. շարունակական կրթության համակարգի գործունեության արդյունավետությունն ու կրթության որակն ապահովող մեխանիզմների ձևավորումը:

Ռազմական կրթության համակարգի զարգացումը, կատարելագործումը և կրթության գործընթացների շարունակականությունը լիարժեք կերպով կարող են իրականացվել միայն ուսումնական գործընթացի նկատմամբ գիտական մոտեցումների ցուցաբերման հիմքի վրա: ՀՀ ռազմական և ռազմամանկավարժական գիտության զարգացման հարթակի ստեղծման առավել կարևոր խնդիրներից է ազգային ռազմագիտական բազայի ձևավորումը: Դա պահանջում է ծավալուն տեսական, հետազոտական և գործնական աշխատանք: Առաջին հերթին անհրաժեշտ է մշակել ռազմական գիտության զարգացման ճանապարհային քարտեզ, ազգային և արտերկրի ռեսուրսների ներգրավմամբ պատրաստել նախընտրելի և հեռանկարային մասնագիտություններով ռազմական գիտությունների աշխատողներ, ինչը կհանգեցնի ՀՀ-ում ազգային ռազմական գիտական կադրերի պատրաստմանը:

Զինծառայողների պատրաստման արդյունավետության մեծացման խնդիրն է՝ ձևավորել զորքերի պահանջներին համապատասխան մասնագիտական և որակական մակարդակ ապահովող շարունակական պատրաստման համակարգ:

Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է, որ՝

1. սպաների, զինծառայողների պատրաստումը ներառի ոչ միայն կրթական աստիճանների շարք, այլև տեսական, կազմակերպական, գործնական և մեթոդական միջոցառումների համալիր՝ ուղղված ռազմական բուհերում և անմիջականորեն զորքերում մասնագետների ուսուցմանը, դաստիարակությանը, մասնագիտական զարգացմանը և ինքնուսուցմանը,

2. զինծառայողների պատրաստման արդյունավետ կառավարման անհրաժեշտ կազմակերպական-մանկավարժական պայմաններ ստեղծելու համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման համակարգի ծրագրերի ներդրում,

3. ռազմական բուհերի ներքին կառուցվածքի և ուսումնանյութական բազայի կատարելագործման շարունակականություն: Սպառազինության և

ռազմական տեխնիկայի նոր նմուշները, ժամանակակից վարժասարքերը, համակարգչային տեխնիկան նպատակահարմար է առաջնահերթ կերպով տրամադրել ռազմական բուհերին,

4. շարունակական պատրաստման համակարգի բոլոր փուլերում ընդգրկել ռազմական կրթության պետական չափորոշիչներ,

5. մշակել շարունակական պատրաստման ծրագրերի որակի և դրանք իրականացնող կազմակերպությունների գնահատման ընթացակարգերի տեխնոլոգիաներ և գործիքներ:

Նշված միջոցառումները կբարելավեն մասնագիտական կրթության համակարգը շարունակականության սկզբունքի իրագործման հաշվին:

Այսպիսով՝ շարունակական պատրաստման համակարգն ընդգրկում է՝ պետական կրթական չափորոշիչների պահանջները, ռազմակրթական ծրագրերի և կառույցների ամբողջությունը և դրանց գործունեությունը կարգավորող կառավարման մարմինները: Միասնական ղեկավարմամբ, մեթոդիկայով և ընդհանուր վերահսկողությամբ կկենտրոնացվեն ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների (մասնագետների, սպաների) պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը, կձևավորվի անընդհատ շարունակական կրթության հստակ ուղղություն, ինչը կհանգեցնի ռազմական կադրերի պատրաստման համակարգի գլխավոր նպատակին՝ ռազմական մասնագետների, սպաների, ռազմական բուհերի շրջանավարտների բարձր մասնագիտական որակների ձևավորմանը, որակավորված սպաներով զորքերի կայուն համալրման ապահովմանը, նրանց մասնագիտական մակարդակի մշտական բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *С. А. Архангельский.* Лекции по научной организации учебного процесса в высшей школе. М., 1976, сс. 22–40.

2. *Г. Г. Асрян.* Актуальные проблемы системы подготовки офицеров-артиллеристов тактического звена ВС РА. «Тематический сборник». СПб., 2012, № 38.

3. *Г. Г. Асрян.* Концепция непрерывной профессиональной подготовки офицеров-артиллеристов тактического звена – основа модернизации ВС РА. «Труды XV Всероссийской НПК РАРАН». СПб., 2012.

4. *Г. Г. Асрян.* Перспективы развития системы непрерывной подготовки офицеров ВС РА. «Труды XIV Всероссийской НПК РАРАН». СПб., 2011.

5. *Г. Г. Асрян.* Теоретические подходы к оценке эффективности управления в системе военно-профессионального образования. «Труды Международной НПК Санкт-Петербургского Университета управления и экономики». СПб., 2012.

6. «Военная педагогика». Учебник для вузов. Под ред. О. Ю. Ефремова. СПб., 2008, сс. 107–138.

7. *Ч. Куписевич.* Проблемы непрерывного образования. «Вестник высшей школы», 1988, № 1.

8. «Перспективы развития системы непрерывного образования». М., 1990, сс. 199–209.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Բ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՀՈՒ-ի գնդապետ

20-րդ դարի վերջին վերահաստատելով իր անկախությունը՝ Հայաստանի Հանրապետությունն ընդունեց պետությունների կայացման անցումային ժամանակաշրջանին բնորոշ կերպափոխման առանձնահատկությունները: Հայրենասիրական դաստիարակությունը կրեց տարերային բնույթ՝ հիմնվելով առանձին անհատների ու խմբերի բարձր քաղաքացիական գիտակցությամբ պայմանավորված գործունեության վրա, մարդկանց, որոնք հայրենիքի նկատմամբ ունեցած պատասխանատվությամբ փորձեցին լրացնել այդ բացը: Դրան զուգահեռաբար Արցախյան ազատամարտը դարձավ ազգը համախմբող գործոն, որի դասերով մեծացան հաջորդ սերունդները: Հետպատերազմյան տարիներին ներմուծված նոր կրթական ծրագրերը, ըստ էության, ուղղված են միայն անձի անհատական կրթությանը և իր իրավունքների ու ազատությունների ճանաչմանը:

Լրատվության միջոցներով, համացանցով, տարաբնույթ այլ քարոզչական միջոցներով հասարակության մեջ ուղղակի կամ անուղղակի կերպով լայնորեն տարածվում է աղանդները, անաշխատ շքեղ կյանքը, հանցագործ աշխարհի բարքերը գովաբանող տեղեկույթ, որը քաղաքացու մեջ ձևավորում է եսասիրություն, ցինիզմ, թմրամոլություն, խաղամոլություն ու հարբեցողություն, դաժանություն, բռնություն, անբարոյականություն, անպարկեշտություն, ընտանիքի և ծնողների հանդեպ անհարգալից վերաբերմունք: Որպես արդյունք՝ հասարակության և հատկապես երեխաների ու երիտասարդների շրջանում ակտիվանում են օտարամոլության գաղափարները: Հեշտ կյանքի ու անաշխատ միջոցներով արագ հարստանալու ամենաթողության գաղափարները անձանց մեջ կոտրում կամ վերացնում են սովորելու, աշխատելու, ընտանիքի հոգսերը հոգալու, պետությանը ու հասարակությանը ծառայելու ցանկություններն ու խթանները:

Այդ ամենի հետևանքով ժամանակի ընթացքում հասարակության որոշակի սոցիալական շերտեր փոխել են ազգային միաբանության ու միակամության նկատմամբ վերաբերմունքը՝ առաջնային պլան մղելով նյութականը: Տարբեր հասարակական հարաբերություններում սոցիալական արդարության ապահովումը մղվել է երկրորդ պլան, ինչը լրջագույն սպառնալիք է պետության քաղաքականության նկատմամբ վստահության ապահովման հարցում: 2007 թ. փետրվարի 7-ին ՀՀ Նախագահի հաստատած **«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը»** որպես ռազմական անվտանգության դեմ ներքին սպառնալիք է գնահատել նաև բարոյահոգեբանական և հայրե-

նասիրական դաստիարակության թերի վիճակը, պետականության նկատմամբ պատշաճ հարգանքի, առողջ ապրելակերպի, ընտանիքի ավանդական դերի և ազգային ինքնության աղավաղումը[1]:

Ներկայումս դեռ կան գաղափարական, դավանական, սոցիալական և այլ տարաբաժանումներ:

Այդ նկատառումներով **«ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությամբ»** սահմանված է, որ **«Հասարակության և անհատի բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում և շարունակվի կրթության բոլոր մակարդակներում»**[2]:

Որպես օրենսդրական հիմք՝ **«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի** 1-ին կետի 16-րդ ենթակետը սահմանում է, որ **Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը ներառում է «հայրենասիրական դաստիարակության ապահովումը, ռազմամարզական բնույթի միջոցառումների կազմակերպմամբ բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը»**[3]**:**

Պետության դեմ ուղղված մարտահրավերներն ու սպառնալիքները առաջադրել են հանրության համախմբման, միասնական դաշտի ձևավորման կենսական խնդիր, որի լուծումն անհնար է առանց հայրենասիրական գաղափարաբանության՝ քաղաքացիներին իրար հոգեպես ու գիտակցորեն շաղկապող, նրանց ավանդական նկարագրից բխող նպատակները, վարքը և գործունեությունը սահմանող գաղափարների ու արժեքների համակարգի:

Որպես արժեք՝ հայրենասիրությունը բազմաբովանդակ է՝ հասարակական ապրումների խմբում բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկը: Որպես կարգախումբ՝ այն արտացոլում է հասարակության մեջ տիրող, ինչպես նաև ազգային-էթնիկական հոգևոր-բարոյական մթնոլորտը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, հանրության, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչն է, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ կառույցների միասնության:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային-էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով ուղղորդվող կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մտածելակերպով, ազգային ինքնագիտակցությամբ, հարատևման ի վերուստ տրված հրամայականով:

---

[1] Տես «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 21–22:

[2] Տես նույն տեղում, էջ 21:

[3] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 5, կետ 1, ենթակետ 16 (http://www.arlis.am/documentview.aspx?docid=117631):

Հայրենասիրության բարձր մակարդակի դրսևորման հասնելն ու պահպանելը բավական բարդ ու աշխատատար գործընթացների առնչվող խնդիր է: Ելնելով շարադրվածից՝ փորձենք հասկանալ հայրենասիրական դաստիարակության և հայրենասիրության էությունը, տեղն ու դերը անհատի, հասարակության ու պետության կյանքում.

Հայրենասիրական դաստիարակությունը պետական իշխանության մարմինների, հասարակական կառույցների նպատակամղված և համակարգված գործունեությունն է՝ ուղղված քաղաքացիների շրջանում բարձր հայրենասիրության ինքնագիտակցմանը, Հայրենիքին հավատարմության զգացումի ձևավորման և Հայրենիքի պաշտպանության քաղաքացիական ու սահմանադրական պարտքի կատարման պատրաստակամության գիտակցմանը:

Հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևոր-բարոյականի հաստատմամբ առավել սոցիալականացված զգացմունք: Այն՝ որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ է, այլև դրա գոյության և զարգացման էական աղբյուր: Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտը անհատն է, որի գերակա սոցիալ-բարոյական խնդիրն է իր հայրենիքին պատմական, մշակութային, ազգային և հոգևոր պատկանելության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք: Հայրենասիրության իմաստը հոգևոր արժեքայնության մեջ է: Այն՝ որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

Ընդհանրացնելով այս մտքերը՝ կարող ենք ասել, որ հայրենասիրությունը հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների մի համակարգ է, որը անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն է ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը՝ դրսևորվելով ինքնահիրացման ակտիվ գործընթացում, որ ծավալվում է ի շահ Հայրենիքի բարօրության:

Անտարակույս, հայրենասիրությունը որոշ առումով հանդես է գալիս որպես հասարակական ու պետական վերնաշենքի ինքնատիպ հիմք, գաղափարական հենարան: Այստեղից էլ այն համոզմունքը, որ հայրենասիրությունը չի կարող հանդես գալ վերացարկված, այսինքն՝ լինել օբյեկտից ու սուբյեկտից դուրս: Հայրենասիրության օբյեկտը միանշանակ կերպով խտացված Հայրենիքն է՝ իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ: Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրույթը, դասակարգը, ազգը և այլն:

Հայրենասիրության գիտակցությամբ պետք է համակվի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, յուրաքանչյուր հայ, քանզի հայրենասիրության պակասը չի կարող հայության կենսունակությունը պահպանել գոյության համար ազգերի մղած անհաշտ պայքարում, ավելին. հայրենասիրական դաստիարակությունը հանդես է գալիս որպես ազգի միասնության երաշխավորման հիմնական գործոն: Որպես գործելակերպ անհրաժեշտ է ամբողջ պետական համակարգում, առավել ևս բանակում, արհեստավարժ անձնակազմի և զորակոչիկների շրջանում պարտականության զգացողությունը փոխարինել առաքելութ-

յան զգացողությամբ: Յուրաքանչյուր սպա, ենթասպա և շարքային զինծառայող պետք է առաջնորդվի պետությանը և ժողովրդին ծառայելու իր պատմական առաքելության գիտակցումով:

Հայոց պատմությունը բազմիցս հաստատել և ապացուցել է, որ մեր ամեն մի հաջողության գլխավոր գրավականը, հաղթանակների ազդակիչ ուժն ու ապավենը ի սկզբանե եղել ու այսօր էլ կա՝ հայրենասիրությամբ տոգորված քաղաքացին ու ռազմիկը՝ ազգային հենքի վրա ստեղծված բանակը՝ որպես ժողովրդի սերն ու վստահությունը վայելող համաժողովրդական կառույցի բացառիկ դրսևորում, որտեղ անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակն ու կարգապահությունը գերադրական վիճակում են:

Այս առումով հայրենիքի պաշտպանի պատրաստումը, այդ թվում և դաստիարակությունը, պետք է դիտել որպես բազմակողմանի ու շարունակական գործընթաց, որում ներառվում են և՛ բարոյական, և՛ գեղագիտական, և՛ հայրենասիրական դաստիարակությունը, քանի որ հայրենասիրությունը ձևավորվում է բազմաթիվ առաքինությունների հենքի վրա: Մարդը չի կարող հայրենասեր լինել, եթե ծնողասեր չէ, ազնիվ չէ, արժանապատիվ չէ, գիտակից չէ: Անհատի դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքից, շարունակվի դպրոցում, բուհում, բանակում՝ նույն արժեհամակարգով, նույն գաղափարներով ու բարոյահոգեբանական շեշտադրումներով: Այսինքն՝ մենք խնդիր ունենք ձևավորելու միասնական գաղափարաբանություն:

Որպես գործընթացի հաջորդական փուլ՝ կարևորում ենք նաև հասարակության դաստիարակությունը, քանի որ անձը մեծանում է հասարակության մեջ, զինվորը զինծառայությունից վերադառնում է հասարակության շարքերը, դառնում նրա բարոյական նկարագրի, մտածելակերպի, չափանիշների կրողը: Որքան էլ դպրոցում, բուհում, բանակում դաստիարակությունը և քարոզը նպատակամղված լինեն, հասարակական բարքերն ազդելու են անհատի վրա: Այս առնչությամբ մեծ անելիքներ կան պետական քարոզչական դաշտում՝ հակազդեցություն գործելու այն աղավաղված, ոչ հայեցի վարքին ու բարքերին, որոնք ներթափանցում են երիտասարդների ապրելակերպի մեջ:

Ինչպես նշել եմ, հայրենասիրությունն այն գաղափարն է, որը հնարավորություն է տալիս միավորելու ամբողջ ազգը՝ անկախ տարիքից, սեռից, կուսակցական կամ կրոնական պատկանելությունից, սոցիալական դրությունից, պաշտոնից կամ այլ հանգամանքներից: Սկզբունքորեն այդ գաղափարներն առկա են, միայն անհրաժեշտ է գտնել դրանց ակտիվացման և դեպի հասարակության տարբեր շերտերի համար զանգվածային սոցիալական օգտակար գործունեություն ուղղորդման ճանապարհները:

Հայրենասիրական դաստիարակության հաջողության գրավականը անմիջականորեն պայմանավորված է հետևյալ ուղղություններով զարգացող համակարգված գործունեությամբ.

ա. հայրենապաշտության դաստիարակում,

բ. պետութենամիտության դաստիարակում,

գ. ավանդապահության դաստիարակում,

դ. բարեգործության դաստիարակում:

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայրենիքին և ազգին անմնացորդ ծառայելու գաղափարը ՀՀ քաղաքացու արժեհամակարգի առանցքն է: Թերևս ոչ մի երկրում հայրենիքի գիտակցությունն այնքան հստակ և սուր չի դրսևորվում, որքան հայ իրականությունում: Դա բնական է, քանզի հայերը, լինելով Հայկական լեռնաշխարհի բնիկներ ու ճակատագրի բերումով կորցնելով իրենց բնօրրանի մեծ մասը, հայրենատիրության խնդիր ունեն, և դրանից բխում է պատմական հանձնառության առումով ամենազորեղ հատկանիշը՝ հայրենիքի ճակատագրի համար պատասխանատվության գիտակցումն ու ստանձնումը՝ իր ուժերի ու կարողությունների ներդրմամբ:

ՊԵՏՈՒԹԵՆԱՄԻՏՈՒԹՅՈՒՆ

Պետությունը ազգին դարձնում է հզոր, ապահովում նրա անվտանգությունն ու հարատևումը: Հայոց վերաստեղծված պետությունը պետք է դառնա մեր ժողովրդի վերածննդի հիմնական գործոնը՝ նպատակաուղղված համայն հայության Հայաստանակենտրոն առաջընթաց զարգացմանը: Պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է պատկերացնել մեկն առանց մյուսի: Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են մեր պետականության ստեղծման պատմական իրողության հետ: Բանակը, մեր պարագայում՝ Ազգային բանակը, կայուն և զարգացած հայկական պետականության հզորության հիմքն է, հարատևման ամենազորեղ կռվաններից մեկը: Ազգային բանակը մեր պետության անվտանգության երաշխավորն է, հայրենիքի ապահովության առաջին գրավականը:

Այս իրողությամբ առաջնահերթ է ազգային գաղափարախոսության արմատավորումը, և այն պետք է խորապես ընկալելի դառնա յուրաքանչյուր հայ քաղաքացու համար, ինչը նրան կմղի մտածելու և գործելու անձնական պատասխանատվությամբ ու պետական գաղափարականությամբ:

ԱՎԱՆԴԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ազգային հոգեկերտվածքի առանձնահատկությունների հենքի վրա ստեղծելով իր գաղափարախոսությունը՝ հայությունը հազարամյակներ ի վեր շարունակել է երթը, պատմության քառուղիներում պահպանելով իր ստեղծարարությունը, հեղինակել անանց արժեքներ, բայց դրա հետ մեկտեղ ճանաչել, հարգել ու գնահատել համամարդկային արժեքները: Պատմության քառուղիներում կարողացել է պահպանել ոչ միայն իր հավատքը, մշակույթը, լեզուն, այլև իր ազգային ավանդույթները: Այդ առումով էլ ավանդապահությունը պետք է դիտել որպես առաջադիմական երևույթ, որպես ազգային ակունքներից սնվող «առողջ պահպանողականություն», որը չհրաժարվելով անցյալում իր հանրույթի քաղաքակրթական ձեռքբերումներից՝ բնավ չի ժխտում նաև ժամանակակից աշխարհի արժեքները: Ավանդույթի ուժը ոչնչով չի զիջում իրավունքի ուժին, և վերջինիս հավասար ամենուր կարգավորում է հանրային կյանքը:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Երբ բարեգործությունը մարդկանց մեջ սովորույթի է վերածվում, քաղաքացին ակամա դառնում է մարդասեր և հայրենասեր: Յուրաքանչյուր քաղաքացի, իր խնայողությունից կամ վարձավճարից որոշակի գումար ներդրելով Հայրենիքի շենացման ու պաշտպանունակության ամրապնդման գործում, արդեն մեկ քայլ կատարում է որպես հայրենասեր քաղաքացի՝ արմատավորելով իր անձը հայության և Հայրենիքի շահերին ստորադասելու գաղափարը: Բարեգործական առաքելությամբ հանդես գալը երաշխավորում է մեկը մյուսի նկատմամբ հուսալի հենասյուն լինելը, մեկի շահը մյուսի շահով պայմանավորելու և մեկի հոգսը մյուսինը դարձնելու հոգեբանությունը: Այս գաղափարի տարածումը նպաստավոր ազդեցություն կունենա մարդկային հարաբերությունների արմատավորման և ազգային համախմբվածության ապահովման վրա՝ ստեղծելով փոխադարձ վստահության, հարգանքի և գիտակցական վերաբերմունքի վրա հիմնված մի այնպիսի մթնոլորտ, որի պայմաններում հասարակության յուրաքանչյուր անդամ իրեն զգում է ընդհանուրի մի մասը և ոչինչ չի խնայում ընդհանուրի շահի համար:

ՈՐՊԵՍ ՎԵՐՁԱԲԱՆ

Նման ծրագրային մոտեցումները հնարավորություն կընձեռեն հայրենասիրական դաստիարակության աշխատանքների շնորհիվ ունենալու՝

1. համընդհանրացման պայմաններում ՀՀ քաղաքացու ազգային դիմագծի, ինքնության, լեզվի, մշակույթի ու ավանդույթների պահպանում,
2. պետության պաշտպանունակության, ազգային անվտանգության և ռազմական հզորության ամրապնդում և զարգացում,
3. հայրենիքի պաշտպանությանն անմիջականորեն մասնակցելու համար պատասխանատվության ձևավորում,
4. ազգային արժանապատվության, իր ընտանիքի, ազգի և պետության համար հպարտության զգացում, ինչպես նաև իր սահմանադրական և քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամություն,
5. ազգային արժեքների պահպանման ու ապագա սերունդներին փոխանցման ապահովում,
6. հասարակության շրջանում պետության, օրենքի, պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքի հաստատում,
7. բարեգործության՝ որպես կենսակերպի ընկալում, ինչը կապահովի ազգային համախմբվածությունը, հասարակության յուրաքանչյուր անդամի՝ ընդհանուրի մի մասը լինելու գիտակցումը:

Այսպիսով՝ ծրագրային ըմբռնումների իրականացման կարևոր սկզբունք է վերոնշյալ աշխատանքների համակարգված, բոլոր ուղղություններով փոխկապված գործունեությունը: Այս պարագայում երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության ճիշտ և արդյունավետ կազմակերպումը երաշխավորելու է Զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակի բարձրացումը և զինվորական կարգապահության ամրապնդումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ՝ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, ՊՆ փոխգնդապետ

Պատիվ ունեմ ներկայացնելու զեկուցումս, որի առանցքում Զինված ուժերի հեղինակության բարձրացման խնդիրն է սոցիալական մեդիայում և, հատկապես՝ ՀՀ Պաշտպանության նախարար պարոն Դավիթ Տոնոյանի առաջադրած Պաշտպանության համակարգի զարգացման ուղերձ-տեսլականի առանցքում առկա հայեցակարգային տեսակետներից մեկը, այն է՝ պաշտպանության համակարգում «պարտականության զգացողության»՝ իմացական վերափոխմամբ «առաքելության զգացողությամբ» փոխարինելու դրույթը[1]:

Ստորև Ձեր ուշադրությանը կներկայացնեմ «առաքելության զգացողությամբ» առաջնորդվելու ևս մեկ առանձնահատուկ և արդիական տիրույթ՝ սոցիալական մեդիան՝ իմաստավորելով պաշտպանական ոլորտում «առաքելության զգացողությամբ» գործելու անհրաժեշտությունը ո՛չ միայն առաջադրված խնդիրն իրագործելիս, այլև պայմանավորված այլ բնագավառներում ևս «առաքելության զգացողությամբ» գործելու հրամայականով:

Ներկայացվելիք գաղափարը արդիական է ուղերձ-տեսլականում նշված այն հիմնավորմամբ, որ ՀՀ Կառավարության ծրագրում հստակորեն ամրագրված է բանակաշինության և զինվորական ծառայության շուրջ հաստատված մթնոլորտի ու մոտեցումների արմատական փոփոխության հրամայականը՝ որպես Զինված ուժերի մարտունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոց և, իմ համոզմամբ, նաև որպես Զինված ուժերի հեղինակության բարձրացման գրավական:

---

* Գիտաժողովին հնչած հեղինակի սույն գիտական զեկուցումը գիտաժողովի անցկացման օրերին առանձին հատվածներով լայնորեն լուսաբանվել է հեռուստաթերթերով և լրատվական կայքերի միջոցով: Տես, օրինակ, «Շանթ» հեռուստաընկերության «Հորիզոն» լրատվական ծրագրի 2018 թ. սեպտեմբերի 9-ի ժամը 15:00-ի թողարկումը (տես՝ https://www.youtube.com/watch?v=znl3tU88jyM&t=187s), կամ՝ «Զինվորականներին՝ բջջային հեռախոսի և ինտերնետի հնարավորություն, բայց բարձր վերահսկողության ներքո. քննարկումներ ՊՆ-ում»: «Shant News», 08.09.2018 (https://www.shantnews.am/news/view/144870.html): – *Խմբ.:*

[1] Տես *Դ. Է. Տոնոյան, ՀՀ* պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը: «ՀԲ», 2018, հմ. 1–2 (https://razmavaraget.files.wordpress.com/2018/08/hb-2018-n-1-2.pdf):

ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության, Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայ ազգաբնակչության համար միշտ էլ գերակա կարևորություն է ունեցել հայկական Զինված ուժերի մարտունակության և հեղինակության հարցը: Եվ սա ոչ թե պաթոսային ձևակերպում է, այլ կենսակերպ: Բանակի հեղինակությունը մնում է մեր ժողովրդի հպարտության և պատվախնդրության առարկա: Բանակը, որպես կայացած կառույց, հայկական երկու պետությունների քաղաքացիների և Սփյուռքի հայրենակիցների համար մշտապես ոգևորիչ, ավանդաբար հուսալի և օրինաչափորեն վստահելի է մնում՝ անառարկելիորեն համարվելով մեր ժողովրդի ու հայկական երկու պետությունների գոյության անվտանգության երաշխավորը:

Հետևողականորեն կատարվում է բանակի շարունակական զարգացումն ու հզորացումն ապահովելու ամենօրյա աշխատանք: Միաժամանակ, որպես ներպետական զարգացումների ու հասարակական տրամադրությունների զարկերակ, բանակը շատ զգայուն մարմին է, և նրա հեղինակությունը ստվերող ամեն մի արատավոր երևույթ կամ անհատ անմիջապես թիրախային ու խոցելի է դարձնում բանակը՝ հասարակության աչքերում:

Զինված ուժերի գոյության և ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության ամբողջ ընթացքում պաշտպանական համակարգի նախկին ու այժմյան ղեկավարությունը, համակարգի ոլորտային ստորաբաժանումները, հատկապես՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, Պաշտպանական քաղաքականության և Անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչությունները, մեծ աշխատանք են կատարել և կատարում բանակի հեղինակության բարձրացման, ռազմահայրենասիրական մթնոլորտի ձևավորման և այդ թեմատիկայով անհրաժեշտ արգասիքների ստեղծման ու տարածման ուղղությամբ (այն է՝ հաղորդաշարեր, հեռուստածրագրեր, հոլովակներ, հրատարակություններ, պարբերականներ, սեմինարներ, գիտաժողովներ, քննարկումներ և այլն): Այս գիտաժողովը նույնպես դրա ապացույցն է:

Գաղտնիք չէ, որ աշխարհը զարգանում է արագընթաց տեմպերով և մեր Զինված ուժերի հեղինակության բարձրացման խնդիր կա նաև մերօրյա իրականության անքակտելի մաս կազմող և շատ անգամ այդ իրականությանը զուգահեռ գոյություն ունեցող վիրտուալ աշխարհում, մասնավորապես՝ սոցիալական մեդիայում, իսկ Հայաստանի պարագայում՝ հատկապես՝ «Ֆեյսբուք» և «Թվիթեր» սոցիալական ցանցերում: Խնդիրն առավել քան կարևորվում է՝ հաշվի առնելով, որ այս հանգամանքին հետևողականորեն կարևորություն է տալիս և այս ուղղությամբ մեծ ռեսուրսներ ծախսում թշնամին՝ օգտագործելով սոցիալական մեդիայի ամբողջ գործիքարանը՝ որպես հետախուզական և հակահայ բովանդակությամբ ագրեսիվ քարոզչական միջոց:

Այս հանգամանքին մշտապես մեծ կարևորություն եմ տվել, քանի որ վերջին տարիների իմ գիտական հոդվածների զգալի մասը նվիրված է եղել տեղեկատվական անվտանգության, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի, դրա միջոցով հասարակական համախմբման, ինչպես նաև բանակ-տեղե-

կատվական հասարակություն բազմաշերտ խնդիրներին: Այդ հոդվածները տպագրված են ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի տպագիր համարներում[2], իսկ դրանց էլեկտրոնային տարբերակները հասանելի են ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Ռազմավարագետ» կայքում, որը, ի թիվս մի շարք այլ բլոգների, ստեղծել և վարում եմ ինքս[*]:

Իմի բերելով իմ այդ ուսումնասիրությունները՝ կցանկանայի ձեր ուշադրությանը ներկայացնել սոցիալական մեդիայի որոշ առանձնահատկություններն ու այդ համատեքստում նշված օնլայն տիրույթում ՀՀ Զինված ուժերի հեղինակության բարձրացմանը նպատակաուղղված գործնական առաջարկներ:

Արդի աշխարհում համացանցային տեխնոլոգիաների կատարելագործման, արագորեն ընդլայնվող հնարավորությունների շնորհիվ զարգացել են բոլոր տեսակի կայքերը, աճում է համացանցից օգտվողների թիվը, հատկապես՝ բջջային հեռախոսների միջոցով: Վերջին տարիներին զգալի տեմպերով զարգացել է սոցիալական մեդիան[**], որն առանձնանում է նոր բովանդակությամբ, հարուստ գործիքարանով, ինտերակտիվությամբ, գովազդային և քարոզչական թիրախային տեխնոլոգիաների կիրառմամբ, տեղեկույթի հասանելիությամբ, օպերատիվությամբ, տարածական և աշխարհագրական սահմանափակումների վերացմամբ:

Սոցիալական մեդիան ներառում է սոցիալական ցանցերը, բլոգոլորտը, միկրոբլոգային հարթակները, առցանց ֆորումները, տեղեկույթի փոխանակման սոցիալական համակարգերը, լուսա- և տեսահոստինգները, համացանցից օգտվողներին սկավառակային տարածքի տրամադրումը՝ համացան-

---

[2] Տես *Ա. Մ. Շահվերդյան,* Բլոգ-կայքերը՝ որպես սոցիալական համախմբման գործիք: «ՀԲ», 2015, հմ. 4 (https://razmavaraget.files.wordpress.com/2016/02/haykakan-banak_2015-n4.pdf), *նաև՝ նույնի՝* Ֆեյսբուք սոցիալական ցանցում ՀՀ ռազմական տեղեկույթի և բանակային թեմաներով նյութերի տարածման հարցի շուրջ: «ՀԲ», 2016, հմ. 3 (https://razmavaraget.files.wordpress.com/2016/12/armenian-army-n-3-2016.pdf):

[*] Հեղինակը գործող բլոգեր և ադմինիստրատոր է 8 տարուց ավելի: Բացի իր գրական-բնապահպանական-ռազմահայրենասիրական բլոգ-կայքից (http://arlenshah.wordpress.com), նա ստեղծել և վարում է նաև մոտ մեկ տասնյակ այլ բլոգներ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Ռազմավարագետ» պաշտոնական բլոգը (http://razmavaraget.wordpress.com), «Տարածաշրջանային անվտանգության դինամիկան Հարավային Կովկասում» միջազգային ֆորումի «Անվտանգ Կովկաս» բլոգը և այլն: Նրա բլոգն արժանացել է ավելի քան 100 մրցանակների, իսկ 2012 և 2013 թվականներին ճանաչվել է «Տարվա բլոգ»: Նա իր գրական-ստեղծագործական գործունեությունը ակտիվորեն լուսաբանում է նաև «Facebook» և «Twitter» սոցիալական կայքերում *(Խմբ.)*:

[**] Սոցիալական մեդիա (անգլերեն՝ social media, social networking services), զանգվածային հաղորդակցության տեսակ, որն իրականացվում է համացանցի միջոցով, զգալիորեն տարբերվում է ավանդական ԶԼՄ-ներից (տես, օրինակ, “Social media” (http://www.Oxforddictionaries.com/definition/english/social-media?q=social+media&searchDictCode=all), *նաև՝* «Ի՞նչ է սոցիալական մեդիան» (http://www.neomedia.am/publishing/)):

ցում տեղեկույթ զետեղելու համար (օրինակ՝ «Յութուբը»), ծանոթության կայքերը, սոցիալական էջանշումների համակարգերը, երկրալոկացիոն ծառայությունները (օգտատիրոջ տեղավայրի որոշումը), բջջային տիրույթը: Սոցիալական մեդիայի համար հարթակ են ծառայում նաև «Վիկի» համացանցային ազատ հանրագիտարանը, էլեկտրոնային փոստը, տարբեր աղբյուրների տեղեկույթը մեկտեղող սոցիալական ագրեգատորները և այլն:

Սոցիալական մեդիան և, մասնավորապես՝ սոցիալական ցանցերը, այսօր մարդու կյանքի անքակտելի մասն են: Եթե նախկինում, լինելով հանրության անդամ, սոցիալական միջավայրի դերակատարը՝ մարդը, մնում և գործում էր միայն իր հանրության շրջանակներում, ապա սոցիալական ցանցերում նրա հնարավորություններն այնքան են աճել, որ անգամ տեղեկութային միջավայրի տիրույթն այլևս չի բավարարում նրան, քանի որ նա ոչ միայն տեղեկույթի սպառող է, այլև ստեղծող ու տարածող՝ այդպիսով դառնալով մեդիա բովանդակություն ստեղծողների հասարակության մաս: Մարդն իր օրն սկսում և անցկացնում է սոցիալական ցանցում՝ ոչ միայն այնտեղից ստանալով իրեն անհրաժեշտ տեղեկույթը, այլև այնտեղ արտահայտելով իր հույզերը, մտքերը, ապրումակցումները: Այսինքն՝ շատ մարդկանց համար «անիրական», երևակայական իրականությունը դարձել է իրական ու գերակա, որտեղ նա առավել ակտիվ է, նախաձեռնող և յուրատիպ: Այսպիսի մարդկանց համախումբը ձևավորում է սոցցանցերի միջավայրը, բարենպաստ էկոլոգիան: Որքան առողջ ու բարեբեր է սոցիալական ցանցի էկոլոգիան, այսինքն՝ այդպիսի միջավայրը, այնքան այդ ցանցն ավելի արդյունավետ է: Այս նպատակով ես առաջարկել եմ գիտական շրջանառության դնել «Սոցիալացանցային էկոլոգիա» *(«Социально-сетевая экология», «Social Network Ecology»)* և «Սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն» *(«Социально-сетевая экологическая безопасность», «Social Network Ecological Security»)* նոր հասկացությունները, որոնք հանգամանորեն ներկայացրել և հիմնավորել եմ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի օրերս լույս տեսած նոր համարում զետեղված իմ հոդվածում[3]:

Սոցիալացանցային բարենպաստ էկոլոգիան հանգեցնում է սոցիալական մեդիա տիրույթի անդամների համախմբման, երբ պայմանավորվում են համացանցում, իսկ հետո գործողություններ կատարում իրական կյանքում[4]: Սա նպաստում է տեղեկատվական հասարակության զարգացմանը, ինչպես նաև որակապես նոր տիպի քաղաքացիական հասարակության ձևավորմանը, հատկապես՝ երիտասարդության շրջանում, որն էլ հիմնականում տիրապետում և կիրառում է նորագույն էլեկտրոնային հաղորդակցության

[3] Տես *Ա. Մ. Շահվերդյան,* «Սոցիալացանցային էկոլոգիա» հասկացությունը՝ որպես անվտանգային հետազոտությունների նոր ոլորտ: «ՀԲ», 2018, հմ. 1–2 (https://razmavaraget.files.wordpress.com/2018/08/hb-2018-n-1-2.pdf):

[4] Տես *Marie Dollé.* Social Media in the Era of Consolidation, 28 May 2015 (http://www.socialmediatoday.com/social-networks/mariedolle/2015-05-28/social-media-era-consolidation-infographic):

միջոցները[5]: Այս իրողությունը հատուկ է ոչ միայն գունավոր հեղափոխություններին, հայ հասարակության համար նույնպես այն արդեն կյանքի մաս է: Քիչ չեն օրինակները, երբ համացանցի միջոցով չափազանց կարճ ժամանակահատվածում Երևանում և Հայաստանի այլ քաղաքներում տեղի են ունենում զանգվածային ակցիաներ՝ հասարակական կամ քաղաքական հնչողություն ունեցող տարբեր հարցերի վերաբերյալ[*]: Ավելին, 2018 թ. ապրիլ–մայիս ամիսների ներքաղաքական զարգացումները, Թավշյա հեղափոխությունն ու ժողովրդական շարժումը փաստեցին, որ Հայաստանում սոցիալական մեդիային նույնպես լրջագույնս ուշադրություն է հատկացվում, մեզանում այն այսօր նպատակային, թիրախային և չափազանց ընդգրկուն ու արդյունավետ հաղորդակցամիջոց է:

Ֆեյսբուքում զետեղվող ու տարածվող հասարակական ու պետական ընդգրկմամբ ամենատարբեր ու բազմազան տեղեկույթի մեջ քիչ չեն զինվորական, բանակային ու անվտանգային թեմաներով նյութերը: Բանակի վերաբերյալ մտքերի, կարծիքների փոխանակման և նյութերի տարածման առումով ֆեյսբուքյան օգտատերերը հատկապես ակտիվանում են Ղարաբաղյան հակամարտության շփման գծում, սահմանամերձ գոտում և Արցախում իրադրության սրման ու այլ իրավիճակներում: Այսպիսի ակտիվության մեծ աճ գրանցվեց 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ: Բացի ՊՆ պաշտոնական հավաստի տեղեկույթ տրամադրող ՊՆ լրատվական օղակից, պաշտոնական և «առաջին ձեռքից» տեղեկույթի տարածման արագ ու վստահելի ֆեյսբուքյան հարթակ էր հատկապես ՀՀ Պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջը[6]:

Պետք է ասել, որ բանակային թեմաներով ֆեյսբուքյան էջերի ու նյութերի տարածումը թեպետ դժվար վերահսկելի է, սակայն պետք է միշտ լինի ուշադրության կենտրոնում և գնահատվի՝ հնարավոր վտանգների ու զարգացումների առումով: Այս իմաստով այսօր կան խոցելի խնդիրներ:

---

[5] Տես *Л. А. Бобова*. Механизмы социальной консолидации в сетевом обществе (http://www.vestnik.mgimo.ru/sites/default/files/pdf/bobova.pdf):

[*] Այս իրողությունը առավել նկատելի է Թավշա հեղափոխությանը նախորդած և հետհեղափոխական շրջանում, երբ ժողովրդական լայն զանգվածներն արագորեն համախմբվում են մի հարցի շուրջ և սոցիալական մեդիայի միջոցով տեղեկանալով՝ հավաքվում Երևանի և այլ քաղաքների հրապարակներում և փողոցներում: Այդպիսի արագ հավաքի վերջին օրինակներից է 2018 թ. հոկտեմբերի 2-ի երեկոյան՝ Բաղրամյան պողոտայի, ՀՀ ԳԱԱ-ի, այնուհետև ՀՀ ԱԺ-ի տարածքում տասնյակ հազարավոր մարդկանց հավաքը (տես «ՀՀ վարչապետը քաղաքացիներին Ազգային ժողովի մոտ հավաքվելու կոչ արեց»: «Armenpress», 02.10.2018 (https://armenpress.am/arm/news/949436.html), *նաև՝* «Նիկոլ Փաշինյանը մյուս քաղաքների բնակիչներին կոչ է անում դուրս գալ կենտրոնական հրապարակներ»: «Armenpress», 02.10.2018 (https://armenpress.am/arm/news/949460.html), «Բաղրամյան պողոտայում քաղաքացիներն իրենց կամքն են արտահայտում, հավաքն օրենքի սահմաններում է. ՀՀ ոստիկանապետ»: «Armenpress», 02.10.2018 (https://armenpress.am/arm/news/949453.html)):

[6] Տես Արծրուն Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջը (https://www.facebook.com/arcrun):

Օրինակ՝ տագնապ է հայտարարվում, իսկ դրա ժամանակ զինծառայողներ կան, որոնք լուսանկարվում են, երբեմն նույնիսկ գաղտնիություն պարունակող բաց սեյֆերի կամ տեսարանների հետնապատկերով և այդ լուսանկարները զետեղում են համացանցում: Ես նույնիսկ հանդիպել եմ ստատուսների և անգամ անհատապես հորդորող նամակ եմ գրել տվյալ օգտատիրոջը, որպեսզի ջնջի, ասենք օրինակ, իր հետևյալ ստատուսը. «Այսօր տագնապ էր»: Դա նշանակում է, որ զինծառայողների մի զգալի մասը օգտվում է սոցիալական ցանցերից և, ցավոք սրտի, որպես կանոն, սխալ կերպով, այսինքն օգտվում է՝ ինքն իրեն թիրախային դաշտ տեղափոխելով և մյուսներին էլ թիրախավորելով: Եթե միևնույն է պիտի օգտվի, ապա թող գոնե օգտվի գրագետ կերպով: Հետևաբար՝ զինվորականներին պետք է հնարավորություն տալ բջջային հեռախոս ու ինտերնետ հասանելիություն ունենալ, բայց զուգընթացաբար անհրաժեշտ է ապահովել հնարավորինս բարձր վերահսկողություն, քանի որ լիարժեք վերահսկել ամենը հնարավոր չէ:

Գաղտնիք չէ, որ չնայած սոցիալական ցանցերից օգտվելու վերաբերյալ Պաշտպանության նախարարի և ԶՈՒ-ի ԳՇ պետի հրամաններին ու սահմանափակումներին՝ ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ համակարգի մեր ծառայակիցներն ու գործընկերները ակտիվորեն օգտվում են Ֆեյսբուքից և սոցիալական այլ ցանցերից: Միանգամից նշեմ, որ խոսքը միայն սպաների, ՊՆ և ԳՇ համակարգի հատուկ քաղաքացիական ծառայողների ու քաղաքացիական աշխատակիցների մասին է, ոչ թե զինվորների, քանի որ զինվորներին այս հոդվածը չի վերաբերում: Նրանց մի մասը իր սոցիալական ցանցի էջում ներկայանում է որպես զինվորական՝ տեղադրելով զինվորական համազգեստով լուսանկար, թեպետ կա դրա արգելք: Սակայն ըստ էության այդ արարքում հանցավոր որևէ բան չկա, եթե տվյալ օգտատերը չի խախտում որևէ օրենք, չի վնասում կամ վարկաբեկում բանակի և մասնավորապես սպայի հեղինակությունը, չի տարածում պետական գաղտնիք պարունակող կամ այլ արգելված տեղեկույթ, չի զբաղվում քաղաքական քարոզչությամբ կամ կուսակցական և այլ քաղաքական շահերի հրապարակախոսությամբ: Այսինքն, ըստ էության, անբասիր, օրինակելի կենսագրություն ունեցող և իր ծառայությունը բարեխղճորեն կատարող զինվորականը, ունենալով էջ նույն Ֆեսյբուքում, ոչ միայն չի արատավորում սպայի պատիվը, այլև իր արժանապատիվ կեցվածքով նպաստում է սպայի նկատմամբ հարգանքի տարածմանը նաև սոցիալական ցանցի միջոցով: Չէ՞ որ այդ օգտատերն ունի ընկերներ, իր ընկերներն էլ իրենց հերթին ունեն ընկերներ, և բոլորը տեսնում են, որ տվյալ զինվորականը պարկեշտ, առաքինի մարդ է, Հայրենիքի նվիրյալ և անմնացորդ ծառայում է պետությանն ու ժողովրդին: Ավելին, այդ զինվորական օգտատերերի մեջ կան այնպիսիք, որոնք բացի իրենց ծառայությունից, նաև ծավալում են ստեղծագործական կամ ռազմահայրենասիրական քարոզչական բնույթի գործունեություն և այդպիսով ոչ միայն էականորեն նպաստում են բանակի հեղինակությանը հասարակության շրջանում, այլև ամրապնդում են այն փաստը, որ զինվորականության մեջ կան տաղանդավոր մտավորական շատ մարդիկ և գիտնականներ, որոնք բարձրացնում են հայ սպայի

պատիվն ու վարկը՝ նաև այլ ոլորտներում ծավալած իրենց արդյունավետ գործունեության շնորհիվ: Այդ մարդիկ, առանց կողմնակի ուղղորդման, կամովին ստանձնել են յուրատիպ մի առաքելություն՝ հայրենասիրական գործունեությամբ նպաստել բանակի հեղինակության բարձրացմանը և իրենց ավանդը ներդրելով այդ հարցում՝ որակական նոր մակարդակի բարձրացնել բանակ–հասարակություն կապը: Դա իր հերթին զգալիորեն նպաստում է ժողովրդական բանակի կերտմանը, երբ հասարակության յուրաքանչյուր քաղաքացիական ներկայացուցիչ հպարտ է նրանով, որ բանակի ներկայացուցիչը ոչ թե ընդամենը ծառայողական հրամաններ կատարող է, այլ մտածող, ստեղծագործող մարդ, գիտնական մտավորական, ով իր ուրույն ասելիքով հարստացնում է զինվորական ավանդույթներն ու մեծացնում զինվորականի դերն ու նշանակությունը հասարակության մեջ: Այդպիսի զինվորականները սոցիալական ցանցերում շատ չեն (գրական և այլ ստեղծագործական գործունեությամբ զբաղվող զինվորականներ, զինվորական լրագրողներ և այլն), սակայն նրանք կարող են դառնալ այն կորիզը, որոնց վրա հենվելով գերատեսչական օղակները ռազմահայրենասիրական արդյունավետ քարոզչական գործունեություն ծավալեն սոցիալական մեդիատիրույթում: Այսինքն՝ նրանց ստանձնած կամավոր առաքելությունը ձեռք բերի ավելի համակարգված, նպատակային, թիրախային բնույթ: Սոցիալական ցանցերից գրագետ ձևով օգտվելը և այն նպատակային խնդիրների համար ծառայեցնելը միջազգային տարածուն պրակտիկա է, որը շատ տեղերում արդյունավետ կերպով օգտագործվում է նաև հենց զինված ուժերի շրջանակներում: Բացի այդ, այսօր սոցիալական ցանցերը դարձել են հասարակական տրամադրությունների, հասարակության խոսույթի ձևավորման առաջնային ու հիմնական տիրույթներից մեկը:

Ըստ այս փաստերի և իմի բերելով վերոշարադրյալը՝ կարծում եմ, որ Պաշտպանության նախարարի ուղերձ-տեսլականում արտահայտված «առաքելության զգացողությամբ» գործելու գաղափարի իմաստավորմանը լիովին ներկրվում է սոցիալական մեդիայի դերի կարևորումը և պաշտպանական համակարգի աշխատակցի՝ զինծառայողի կամ քաղաքացիական ծառայողի՝ սոցիալական մեդիայում և, մասնավորապես՝ սոցիալական ցանցում իր դերի ու պատասխանատվության գիտակցումը, ինչպես նաև այդ տիրույթում զինված ուժերի հեղինակության բարձրացման նպատակով իր առաքելության ընկալման և ստանձնման խնդիրը: Եթե զինծառայողը պատասխանատվությամբ ու գրագիտաբար օգտագործի սոցիալական մեդիայի առատ գործիքարանը, ապա դրանով ոչ միայն կկանխարգելի բազմաթիվ անցանկալի հետևանքներ, այլև կկարողանա նպաստավոր քայլեր ձեռնարկել բանակի հեղինակության բարձրացման գործում: Համակարգում սոցիալական ցանցերից օգտվելու տոտալ արգելանք կիրառել հնարավոր չէ, քանի որ դա անհնար է վերահսկել լիարժեքորեն, միշտ կլինեն զինվորականներ, որոնք գուցե նաև անտեղյակության հետևանքով կամ միամտաբար, սակայն կտեղադրեն իրենց զինվորական լուսանկարները: Ի վերջո, սոցիալական ցանցից օգտվելու արգելքը մարդու իրավունքի խախտում է, քանի որ այն

բաց տիրույթ է, և դրանից հարկադրաբար հրաժարումը սահմանափակում է մարդու ազատությունները:

Հաշվի առնելով այս ամենը՝ կցանկանայի հրապարակել «Հայկական բանակ» գիտական ամսագրում շրջանառության դրած իմ 5 գործնական առաջարկները:

1) Ուսումնասիրելով ինչպես ՊՆ տիրույթում գործող ու համակարգվող, այնպես էլ ՊՆ վերահսկողության տիրույթից դուրս անհատական էջերը կամ նախաձեռնողական խմբերը՝ կարծում եմ, որ նպատակահարմար է, որ ՊՆ և ԳՇ համապատասխան մարմինների ուժերով՝

ա) վերանայվեն սոցիալական ցանցերից օգտվելու գերատեսչական իրավական ակտերը՝ առնվազն այն զինվորականների մասով, որոնք այսպես թե այնպես օգտվում են սոցիալական ցանցերից՝ ներկայանալով որպես օրինակելի սպաներ և իրենց էջերում նպաստելով հայկական բանակի հեղինակության բարձրացմանը: Տվյալ զինվորականներից կազմել կորիզ կամ խումբ՝ յուրահատուկ կարգավիճակով, որպեսզի նրանք ազատորեն օգտվելով սոցիալական ցանցերի իրենց պրոֆիլներից, առավել նպատակային ձևով նպաստեն բանակի հեղինակության բարձրացմանը: Ոչ թե մտահոգվեն նկարներում իրենց զինվորական համազգեստով ներկայանալիս, այլ դա համարեն պատվաբեր և հայրենանվեր կեցվածք: Տվյալ անձանց էջերի անվտանգության խնդիրը առավել մեծ ուշադրության առարկա դարձնել ՊՆ համապատասխան մարմինների համար, որպեսզի ռազմահայրենասիրական և ստեղծագործական նյութերի տարածման դեպքում այդ էջերը պաշտպանված լինեն և չդառնան հակառակորդի թիրախ: Ըստ էության, ՊՆ և ԳՇ համապատասխան օղակները պետք է ոչ թե սահմանափակեն կամ արգելեն, այլ քաջալերեն ու սատարեն հայրենանվեր գործունեությամբ ու քարոզչությամբ զբաղվող և իրենց գրառումներում ու նյութերում բանակի հեղինակության բարձրացմանը նպաստող զինվորականներին:

բ) մշակվեն ընդհանուր մոտեցումներ ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ համակարգում ներառված և ֆեյսբուքում անձնական պրոֆիլներ ունեցող բոլոր զինծառայողների, քաղաքացիական հատուկ ծառայողների և քաղաքացիական աշխատողների համար, որպեսզի նրանք, որպես ընդունված սկզբունք, ՊՆ վարած յութուբյան ալիքներում տեղադրվող հոլովակները, առանձին ռեպորտաժներն ու «Զինուժի» ամբողջական թողարկումները, ՊՆ պաշտոնական լրատվությունը ՊՆ կայքից տեղադրեն իրենց ֆեյսբուքյան էջերում, այն է՝ կիսվեն այդ հղումներով իրենց ընկերների հետ՝ այդպիսով տարածվող տեղեկույթն իրենց անձի շնորհիվ մեկ անգամ ևս առավել հավաստի ու հիմնարար դարձնելով: Սա կնպաստի թե՛ ՊՆ-ի և ԶՈՒ-ի ԳՇ՝ ֆեյսբուքից օգտվող զինծառայողների ու աշխատակիցների համախմբմանը տեղեկատվական անվտանգության և տեղեկատվական հակազդեցության համատեքստում, և թե՛ ՊՆ ֆեյսբուքյան հարթակների և յութուբյան էջերի դիտումների թվաքանակի կտրուկ աճմանը, նշված հարթակների տարածմանն ու վարկի բարձրացմանը այլ ֆեյսբուքյան ու թվիթերյան հարթակներում կամ թեմատիկ խմբերում: Զինծառայողը կգիտակցի, որ ՊՆ պաշտոնական տեղեկույթի,

հղման կամ նյութի՝ իր տարածելը սեփական համեստ, սակայն կարևոր ներդրումն է բանակի հեղինակության մեծացմանը, հայրենասիրական գաղափարների տարածմանը սոցիալական մեդիա տիրույթում: Այսինքն՝ համակարգի աշխատակից-օգտատերը զինված ուժերին վերաբերող նյութի տարածումը կհամարի ոչ թե պարտավորվածություն, այլ բանակի հեղինակությանը նպաստող իր առաքելություններից մեկը: Գործելով «առաքելության զգացողությամբ»՝ նա կգիտակցի, որ իր տարածած բանակային յուրաքանչյուր նյութը թիրախային ու նպատակային է, և ինքը մեկ քայլով ավելի է սերտացնում բանակ–հասարակություն կապը, ավելի է համախմբում բանակի հանդեպ հասարակական տրամադրությունները, ավելի է ամրացնում բանակի նկատմամբ վստահությունը, ավելի թափանցիկ, ճանաչելի և առօրյա կյանքում՝ կարևոր է դարձնում բանակային թեմատիկայով յուրաքանչյուր արգասիք կամ գործողություն: Եթե այս մոտեցումը կանոնակարգված կերպով գործադրվի պաշտպանական համակարգում (ինչպես, օրինակ, վերջերս ընդունված բջջային հեռախոսների օգտագործման վերաբերյալ կանոնակարգը[7]), ապա այն որևէ կերպ չի վնասի մարդու իրավունքները, չի ճնշի իր սոցցանցի էջը տնօրինելու նրա ազատ կամքը, քանի որ համակարգի աշխատողը ոչ թե դժկամությամբ կկատարի այդ գործողությունը՝ համարելով այն պարտադիր անցանկալի պարտականություն կամ հրաման, այլ կկատարի ոգևորությամբ, սեփական դերի իմաստավորմամբ և կարևորմամբ՝ առավել ևս ստանալով իր ընկերական լսարանի համարժեք քաջալերող ու դրական արձագանքը: Բացի այդ, ՊՆ թեմատիկ նյութերով իր սոցցանցի էջում կիսվելը չի խլում զինվորականի ծառայողական ժամանակը, քանի որ բոլորին հայտնի է, որ դա արվում է շատ արագ, մեկ-երկու «քլիքով», նույնիսկ հեռախոսով: Հավատացնում եմ ձեզ, որ ՊՆ-ին վերաբերող հավաստի նյութը (օրինակ՝ *«Mil.am»*-ից) սեփական էջում կիսվելու համար անհրաժեշտ է շատ կարճ ժամանակ՝ ընդամենը երկու վայրկյան:

2) Նշված առաքելության երկրորդ կարևոր պայմանը հետևողականությունն է: Ոչ թե հորդորել ու ակնկալել, թե ով կցանկանա՝ նա էլ թող տեղադրի բանակային նյութերը, այլ հակառակը՝ համակարգի աշխատակից-օգտվողներից կազմել կուռ վիրտուալ կորպուս՝ այդպիսով կեղծ պրոֆիլներով ապատեղեկատվություն տարածող հակառակորդին ներկայացնելով զինված ուժերի միասնականությունը նաև սոցիալական մեդիայում: Այս համատեքստում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել զինված ուժերի գործունեությունը լուսաբանող յութուբյան հարթակներին և դրանցում տեղադրվող սոցիալական հոլովակների որակին, որոնցով ֆեյսբուքյան օգտատերերը կիսվում են իրենց խմբերում ու էջերում: Պետք է հորդորել նրանց ու հետևողականորեն աշխատել նրանց հետ՝ նյութերի տարածման և դրանց առավել հետևողական ու խնամքով վերաբերվելու համար:

[7] Տես «ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով կանոնակարգվել է ժամկետային պարտադիր զինծառայողների բջջային հեռախոսներից օգտվելը», 17.08.2018 (http://mil.am/hy/news/5496):

3) Հայտնի է, որ սոցիալական ցանցերում նյութն ունի շղթայական տարածման հնարավորություն, ինչն ավելի է մեծացնում դրա հանրային յուրացման շրջանակը: Որքան մեծ է նյութի տարածման շրջանակը, այնքան մեծ է դրա դիտելիությունը: Վստահելի օգտատիրոջ տարածած նյութի շրջանառմամբ մեծանում է դրա առավել լայն տարածման հնարավորությունը: Բերեմ իմ անձնական օրինակը: Ես իմ գրած ռազմահայրենասիրական բանաստեղծությունները և բանակային նյութերը տեղադրում եմ ավելի քան կես միլիոն էջադիտումներ ունեցող իմ հեղինակային գրական բլոգ-կայքում[8], այնուհետև կիսվում եմ դրանց հղումով հինգ հազար ընկեր ունեցող իմ ֆեյսբուքյան պրոֆիլում[9], տարածում էլեկտրոնային փոստով՝ նյութերիս բաժանորդագրված շուրջ 12 հազար ընթերցողների, տեղադրում մի քանի տասնյակ ֆեյսբուքյան խմբերում, ընդհանուր թվով՝ մոտ 400-450 հազար օգտատիրոջ համար: Նրանց զգալի մասը կիսվում են իմ հայրենասիրական ստեղծագործություններով, բանակը, հայ սպային ու զինվորին գնահատող ու փառաբանող նյութերով: Եթե յուրաքանչյուր օգտատեր սոցցանցի իր էջում տեղադրի եթե անգամ ոչ իր ստեղծած, ապա գոնե բանակային-ռազմահայրենասիրական թեմայով ՊՆ հավաստի նյութ, հոլովակ, հաղորդում կամ ստեղծագործություն, ապա լսարանում դրա տարածումը, դրական արձագանքը շատ ավելի լայն մասշտաբների կհասնի, քան զուտ առկա ընկերների թիվը:

4) ՊՆ համապատասխան մարմինները անհրաժեշտաբար մշակեն հայկական բանակի թեմայով բազմաթիվ նոր հաշթեգների *(hashtag)* համախումբ (հմուտ օգտատերերի մասնակցությամբ) ու դրանք համակարգված ձևով օգտագործվեն ֆեյսբուքյան հարթակներում՝ խմբեր, անհատական էջեր: Օրինակ ֆեյսբուքյան ստատուս գրելիս օգտատերը անպայման կկիրառի այդ հաշթեգները:

5) «Հայոց բանակ» ապրանքանիշի ձևավորում և հենց Ֆեյսբուքի միջոցով բանակը խորհրդանշող ատրիբուտների ու տարբերանշանների տարածում՝ Հայրենիքում ու Սփյուռքում, այդ թվում՝ երիտասարդության շրջանում հայկական «զինվորական» *(«military»)* ոճի ներմուծում և խրախուսում (շապիկներ, գլխարկներ, պայուսակներ, գրենական պիտույքներ և այլն), այդ ապրանքատեսակների վաճառքի կազմակերպում և ստացված հասույթի նպատակաուղղում բանակաշինությանը: Բանակի տարբերանշանով և բանակին առնչվող զանազան ապրանքների վաճառքը կարելի է կազմակերպել նաև օնլայն ձևաչափով (ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում և Իսրայելում)[10]:

---

[8] Տես Առլեն Շահվերդյանի գրական բլոգ-կայքը (http://arlenshah.wordpress.com/):

[9] Տես Առլեն Շահվերդյանի *(Arlen Shahverdyan)* ֆեյսբուքյան էջը (https://www.facebook.com/ArlenShahverdyan):

[10] Տես «Armed Forces Gear» (http://www.armedforcesgear.com/army); «Israel Military Products» (http://www.israelmilitary.com/); «Zahal. Israeli Tactical Gear» (http://www.zahal.org/):

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, ՊՆ գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Զինված ուժերի անձնակազմի շրջանում հակամարտային իրավիճակների կանխարգելումը կարգապահության, ուստի և մարտունակության ապահովման կարևոր նախապայմաններից է: ՀՀ Պաշտպանության նախարար Դ. Տոնոյանը «Պաշտպանության համակարգի զարգացման տեսլականում» որպես առաջնահերթություններից մեկը նշում է «***Անձնակազմի հետ տարվող աշխատանքների որակի և արդյունավետության էական բարձրացումը» և ավելացնում,*** որ «...մեր վերջնանպատակն է Զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակի ու կարգապահության ամրապնդումը, բանակում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը, ոչ կանոնադրային հարաբերությունները նվազագույնի հասցնելը, զինծառայողների արժանապատվության խոցման դեպքերի, ինքնավնասման և ինքնասպանության փորձերի առավելագույնս կասեցումը»[1]: Տեղեկացնեք, որ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ը ևս մշտապես մասնակցել է ՀՀ ԶՈՒ-ում կարգապահության ամրապնդման, անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստականության մակարդակի բարձրացման հարցերի գիտական լուծմանը: Այսպես. 2014 թ. «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 3–4-րդ միացյալ համարը նվիրված էր ԶՈՒ-ի կարգապահության ամրապնդմանը, և դրանում զետեղվել էին այս ոլորտի համար ՊՆ ու ԶՈՒ-ի պատասխանատուների և հանրապետության առաջատար մասնագետների ու հասարակական գործիչների վերլուծական հոդվածները[2]:

Անշուշտ ԶՈՒ-ի անձնակազմի շրջանում կարգապահության ապահովումն էապես նպաստում է հակամարտությունների և գժտությունների կանխարգելմանը: Որքան բարձր է կարգապահությունը, այնքան քիչ է գժտությունների առաջացման հավանականությունը: Իսկ անձնակազմի շրջանում գժտությունը լիովին բացառելու համար անհրաժեշտ է, որ հրամանատարն իր վարած դաստիարակչական աշխատանքում հաշվի առնի նաև յուրաքանչյուր ենթակայի անձնային հատկությունները և անձնակազմի շրջանում գժտությունների ծագման սոցիալ-հոգեբանական պատճառներն ու զարգացման օրինաչափությունները:

---

[1] Տես *Դ. Է. Տոնոյան,* ՀՀ պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը: «ՀԲ», 2018, հմ. 1–2:

[2] Տես «Հայկական բանակ», 2014, հմ. 3–4:

Պետք է հիշել, որ գժտությունը զարգանում է՝ անցնելով նախագժտային (ծածուկ կամ լատենտ) բախման, զարգացման, սրման, լուծման և հետևանքների վերացման փուլեր: Հրամանատարը պետք է կարողանա հնարավորինս շուտ բացահայտել ենթակաների միջև ձևավորվող գժտային իրավիճակները և իր գործողություններով կանխել դրանց սրումն ու վերաճումը բախման: Անշուշտ գժտությունների կանխարգելումը ենթադրում է կարգապահական խախտումների, տարբեր տեսակի հակասությունների սոցիալ-հոգեբանական պատճառների որոշման ու կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման նկատմամբ միասնական մոտեցման կիրառում:

Զինվորական ստորաբաժանումներում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների (այսուհետև՝ զինծառայողներ) շրջանում ծագած գժտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասի հիմքում են ծառայության նկատմամբ զինծառայողների բացասական դիրքորոշումները, շարժառիթները, ենթամշակույթների (մասնավորապես՝ քրեական) նկատմամբ հակվածությունը և անձնավորության հոգեկանի զարգացման աստիճանների միջև տարբերությունները, որոնք հաճախ դրսևորվում են ապահարմարման, դյուրագրգիռության, սանձարձակ վարքի, ագրեսիվության, շահերի եսասիրական ուղղվածության, ինքնամփոփության, անդամախեղման, առաջադրանքների ոչ ճիշտ կատարման և այլ բացասական երևույթների ձևով:

Ինչպե՞ս ի հայտ բերել այն անձանց, որոնք հակված են զինվորական ծառայության ժամանակ առաջացող դժվարությունները հաղթահարելու գժտությունների միջոցով: Անհրաժեշտ է ժամկետային զինծառայողների կենսագրական փաստաթղթերից առանձնացնել այն տվյալները, որոնք կարող են հակասոցիալական վարքագծի պատճառ դառնալ: Հարկավոր է պարզել նաև, թե ինչով է զբաղվել նորակոչիկը մինչև ծառայության անցնելը, եթե աշխատել կամ սովորել է, ապա՝ որտեղ: Պետք է պարզել, թե ինչ սովորություններ և հետաքրքրություններ ունի նա, ինչ սպասելիքներ ունի զինվորական ծառայությունից: Պետք է նաև պարզել, թե մինչև զորակոչվելը ինչ սոցիալական պայմաններում է ապրել զինծառայողը, նրա ընտանիքի կազմը, և ինչ բարոյահոգեբանական մթնոլորտ է տիրում ընտանիքում, որովհետև բոլոր թվարկված սոցիալական երևույթները նախադրյալներ են ստեղծում գժտային վարքի մոդելների ձեռքբերման համար:

Անհրաժեշտ է բացահայտել նաև այն գործոնները, որոնք կարող են նպաստել զինծառայողների նյարդահոգեկան անկայունության առաջացմանը: Օրինակ՝ նախկինում տարած հիվանդությունները, չափազանց անկումային հակազդումները, երկչոտությունը, ամոթխածությունը, շրջապատի ուշադրության կենտրոնում լինելու մշտական ցանկությունը, չափազանց արտահայտված ապահարմարվողականությունը, սանձարձակ վարքը, ագրեսիվությունը, շահերի եսասիրական ուղղվածությունը, զինծառայության և զինվորական կարգապահության պահանջների նկատմամբ քամահրական վերաբերմունքը, ուշադրությունը կենտրոնացնելու դժվարությունները, վատ

հիշողությունը, սևեռուն մտքերը, մեծ հետաքրքրությունը սեռական հարցերի նկատմամբ և այլն:

Վերը թվարկված գործոններն ու դրսևորումները պարունակում են գժտածին ու քրեածին տարրեր: Ոստի դաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար սպաները մասնագիտական գիտելիքների հետ մեկտեղ պետք է ընդհանուր առմամբ ունենան նաև որոշ հոգեբանական ու մանկավարժական հմտություններ, որոնք մեծապես կնպաստեն զինվորական կոլեկտիվներում բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանն ու կանոնադրական հարաբերությունների պահպանմանը: Սակայն սխալ կլիներ նրանցից պահանջել այնպիսի աշխատանք, որի կատարման համար անհրաժեշտ են խոր հոգեբանական գիտելիքներ ու մասնագիտական հմտություններ: Այդ աշխատանքները պետք է կատարեն հոգեբանական կրթություն ստացած մասնագետ սպաները:

Զորամասում զինծառայողների գժտածին, կարգազանց վարքի կանխումն ու կանխարգելումը պետք է կատարվեն ոչ թե տարերայնորեն կամ դեպքից դեպք, այլ մշտապես, նպատակաուղղված և կազմակերպված կերպով՝ գժտամետ զինծառայողների համապատասխան վարքի վերահսկման, ուղղորդման ու նրանց դաստիարակության համար նախատեսված մեթոդների համակարգի համալիր կիրառմամբ: Գժտայնությամբ օժտված զինծառայողների հետ տարվող աշխատանքը պետք է կազմակերպվի որոշակի նախապատրաստական աշխատանքներից հետո, մասնավորապես՝ անհրաժեշտ է.

1. անցկացնել հոգեբանական և բժշկական հետազոտություններ, պարզել զինծառայողների բացասական վարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները,
2. ներգրավել համապատասխան աշխատանքի փորձ ու գիտելիքներ ունեցող սպաների՝ նրանց ներկայացնելով պրոբլեմը և աշխատանքների կազմակերպման ծրագիրը,
3. հավաքել զինծառայողների մասին որոշակի տեղեկություններ, ինչը առաջին հերթին հնարավորություն կտա կազմելու նրանց մասին նախնական պատկերացում,
4. ճշգրտել դաստիարակչական աշխատանքների ընդհանուր պլանը, մեթոդները և միջոցները:

Նախապատրաստական աշխատանքի այս փուլը սպային հնարավորություն կընձեռի պլանավորելու իր հետագա հոգեբանամանկավարժական գործունեությունը: Յուրաքանչյուր հրամանատար պետք է հիշի, որ կոչված է ոչ թե մեղադրելու, այլ դաստիարակելու և որ ստանձնել է ոչ թե դատավորի, այլ հրամանատարի դերը: Կարծում ենք՝ հրամանատարների վարած դաստիարակչական աշխատանքը կլինի ավելի արդյունավետ, եթե նրանք կարողանան ստեղծել այնպիսի պայմաններ, որ զինծառայողի բնավորության հատկանիշները ոչ թե ճնշվեն՝ առաջացնելով անլիարժեքության զգացում, այլ նպատակաուղղվեն առաջադրանքների գրագետ ու ստեղծագործական կատարմանը: Ըստ այդմ՝ պետք է ներգործել ոչ թե բնավորության վրա՝ այն

փոփոխման ենթարկելու համար, այլ անձի ուղղվածության վրա՝ փոփոխություններ առաջ բերելով անձնավորության արժեքային համակարգում, պետք է փոփոխել ներգործության վեկտորի ոչ թե էությունը, այլ ուղղությունը:

Հրամանատարը պետք է ուշադիր կերպով հետևի ենթակաների միջև ձևավորվող պաշտոնեական և ոչ պաշտոնեական հարաբերություններին, կարողանա հմտորեն կառավարել իրեն վստահված կոլեկտիվը՝ օգտագործելով և՛ իր անձնական կռահողականությունը, և՛ ձևավորվող իրադրությունը, ընդսմին նրան կարող է մեծապես աջակցել համախմբված զինվորական կոլեկտիվը:

Գժտածին վարքը շտկելու և անձի վրա ներգործելու ավանդական մեթոդներն են համոզումը և հարկադրումը: Նպատակահարմար եմ համարում սույն զեկուցման մեջ քննարկել, մասնավորապես, գժտությունների կանխարգելմանն ուղղված համոզման մեթոդի կիրառման որոշ հարցեր:

Համոզումը անձնավորության արժեքային համակարգի վերաիմաստավորում կամ փոփոխում է, որն ազդում է հայացքների, համոզմունքների և դիրքորոշումների վրա: Այս մեթոդը գործադրվում է հազարամյակներ ի վեր, և դրա կիրառման ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել մի շարք պայմանների վրա:

1. Դաստիարակության առավել արդյունավետ եղանակը դրական համոզմունքների նախնական ձևավորումն է (հայրենիքի պաշտպանության, ընկերասիրության գաղափարների նկատմամբ գիտակցված դրական վերաբերմունքի ձևավորում): Գործնականում այդ համոզմունքների ձևավորումը պետք է սկսել փոքր տարիքից. այս հանգամանքը մեկ անգամ ևս շեշտում է ընտանիքի, դպրոցի և մանկական դաստիարակչական հաստատությունների կարևորությունը: Սակայն եթե զինծառայողը նման դաստիարակություն չի ստացել, ապա բանակում հնարավոր է այդ բացը լրացնել սոցիալական արդարության պահպանման և կոլեկտիվ դիրքորոշումների ձևավորման ու դրանց ազդեցության կիրառման եղանակով:

2. Առանձին դեպքերում գժտածին վարքի շտկման համար էական արդյունքի կարելի է հասնել բացասական համոզմունքների չեզոքացման միջոցով: Եթե մարդու մեջ իր նախկին բացասական համոզմունքների առնչությամբ կասկած է առաջանում, ապա հոգեբանական ներգործության արդյունավետությունը մեծանում է, ինչը հնարավորություն է տալիս շարժառիթավորելու զինվորական ծառայությունը, այսինքն՝ ձևավորելու զինվորական ընկերասիրության գաղափարի և ծառայության նկատմամբ դրական վերաբերմունք: Ծայրահեղ վիճակում մարդը կարող է գործել իր այն գիտելիքներին հակառակ, որոնց ճշգրտության մեջ վստահ չէ: Այս ամենը վերաբերում է նաև դրական համոզմունքներին: Եթե դրանք կայուն չեն, ապա դրանց շարժառիթային դերը մեծ չէ, համապատասխանաբար, դաստիարակչական միջոցառումների արդյունքը կարող է աննշան լինել: Այստեղ զգալի դեր ունի տեղեկույթի աղբյուրի նկատմամբ վերահսկողության գործոնը: Եթե դաստիարակչական միջոցառումն անցկացնում է այն անձնավորությունը, որին չեն վստահում, ապա տեղեկույթն ընկալվում է հետևյալ կերպ. «Սպան

ասաց, որ սա չի կարելի անել: Սակայն այն ամենը, ինչ նա ասել է, չի համապատասխանում իրականությանը: Նշանակում է՝ կարելի է»:

Սխալ է այն ենթադրությունը, որ եթե մարդ ընկալում է տեղեկույթը, ապա նրա մեջ ձևավորվում են համոզմունքներ: Եթե ասվում է, որ չի կարելի ծեծել ծառայակիցներին, սակայն կանխարգելիչ քայլեր չեն ձեռնարկվում, բնականաբար, դա չի կարող լուրջ կերպով ընկալվել: Որպեսզի ընկալված տեղեկույթը դառնա համոզմունք, անհրաժեշտ է ապահովել տեղեկույթի աղբյուրի նկատմամբ վստահություն:

3. Կարևոր է ոչ միայն որոշակի համոզմունքների ձևավորումը, այլև պրակտիկայում այդ համոզմունքները իրագործելու կարողությունների ձևավորումը: Թույլերին պաշտպանելու անհրաժեշտության համոզմունքը պահանջում է բռնությանը ընդդիմանալու կարողություն: Համոզմունքները կենսունակ են դառնում միայն որոշակի կարողությունների հետ զուգադրելու դեպքում, երբ ձևավորվում է մի համակարգ, որը նպաստում է համապատասխան վարքի շարժառիթավորմանը և կանոնադրական նորմերին համահունչ կայուն վարքին:

Զինվորական ծառայությունն ուղեկցվում է խիստ ենթակարգությամբ ու գործողությունների կանոնակարգվածությամբ, ամենօրյա ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ, սոցիալական դերերի ընտրության սահմանափակությամբ և այլն: Դրանք՝ որպես գործոններ, տարբեր կերպ են ազդում զինծառայողների վարքի վրա, ոմանց համար դառնում են կարգապահական խախտման պատճառ, իսկ մյուսները նման խախտումներ չեն կատարում:

Ինքնին հասկանալի է, որ ստորաբաժանման առանձին զինվորների գործողությունների լիարժեք ներդաշնակման կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ կոլեկտիվում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, առանձին զինվորների միջև չկան քիչ, թե շատ նշանակալի հակասություններ (գժտություններ): Ուստի հրամանատարը պետք է առանձնակի ուշադրություն դարձնի գժտությունների կանխմանը դեռ դրանց սաղմնային վիճակում, երբ ստեղծվում է դրանց ծագման վտանգը, կամ դրանց կարգավորմանը, եթե դրանք արդեն ծագել են, ինչի համար նա պետք է ունենա գիտելիքներ միջանձնային գժտությունների ծագման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների, ինչպես նաև դրանց կանխման սոցիալ-հոգեբանական եղանակների մասին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթակաների հետ հրամանատարների աշխատանքը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե նրանք զինվորների շրջանում վայելում են հեղինակություն: Հեղինակությունը ղեկավարին չի տրվում պաշտոնի հետ, այն վայելում են նրանք, ովքեր մասնագիտական գործունեության ընթացքում դրսևորում են ամենօրյա հոգատարություն: Հեղինակությունը կախված է նաև ենթակաների հետ փոխհարաբերությունները կառուցելու ունակությունից: Առանց հրամանատարի հեղինակության անհնար է ենթակայի անվերապահ ենթարկվածությունը: Եթե զինվորը հավատում է իր ղեկավարի որոշումների անկեղծությանը, արդարացիությանը և բանականությանը, հավատում է նրա գլխավորած

գործի հաջողությանը, ապա նա պատրաստ է լինում կատարելու բոլոր օրինական պահանջները: Դրան նպաստում է ենթակաների բնավորության և հակումների մասին հրամանատարի կողմից լավ իրազեկությունը:

Հրամանատարի հեղինակության ձևավորումը պայմանավորված է նաև նրա ունեցած ռազմամասնագիտական գիտելիքների մակարդակով, գործունեության ընթացքում ձեռք բերված հմտություններով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հրամանատարի մասնագիտական գործունեության և կարգապահության ապահովման միջև գոյություն ունի անմիջական կապ: Որքան սահմանափակ են հրամանատարի մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, այնքան զինվորական ստորաբաժանումում ցածր է կարգապահության մակարդակը:

Ամփոփելով՝ ևս մեկ անգամ նշենք, որ զորամասերում (ստորաբաժանումներում) գժտությունների, կարգապահական խախտումների կանխարգելման համար անհրաժեշտ է.

1. պարբերաբար անցկացնել բարոյահոգեբանական վիճակի ախտորոշման աշխատանքներ՝ զինծառայողների այն վարքագծերի, բնութագրերի ու առանձնահատկությունների առանձնացմամբ, որոնք գժտածին և քրեածին հակումների ձևավորման տեսանկյունից ռիսկային են,

2. զինկոմիսարիատներում բժշկական հետազոտությունների հետ մեկտեղ անցկացնել նախնական սոցիալ-հոգեբանական հետազոտություններ՝ զորակոչիկների անձնային առանձնահատկությունները, հանրակրթական ու մասնագիտական պատրաստականության մակարդակը, ոստիկանության հետ առնչության դեպքերը (զանցանքներ, թմրանյութերի, ալկոհոլային խմիչքների օգտագործման փաստեր) պարզելու համար: Զորակոչիկների վերաբերյալ հետազոտությունների արդյունքները անհրաժեշտ է գրանցել նրանց անձնական գործերում, ինչը լուրջ օգնություն կլինի զորամասի հրամանատարական կազմի համար՝ նորակոչիկների հարմարման դժվարությունների հաղթահարման աշխատանքները կազմակերպելիս,

3. քանի որ կարգապահական խախտումներն զգալի չափով պայմանավորված են բանակի մասին զորակոչիկների ոչ ճիշտ պատկերացումներով, ուստի անհրաժեշտ է զորակոչիկներին տրամադրել բավարար տեղեկություններ ծառայության, կարգապահական կանոնադրության պահանջների, բանակում մարտական պատրաստման բովանդակության, ծառայության հետ կապված ռիսկերի ու վտանգների, արձակուրդի տրամադրման կարգի և այլ հարցերի վերաբերյալ,

4. զինծառայողների շրջանում կարգապահական խախտումները հետևանք են նաև զինվորական կոլեկտիվներում սպայական կազմի ոչ պրոֆեսիոնալ հոգեբանամանկավարժական վերահսկողության: Ուստի դաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար սպաները մասնագիտական գիտելիքների հետ մեկտեղ պետք է ունենան նաև հոգեբանին և մանկավարժին հատուկ որոշակի հմտություններ: Ռազմակրթական հաստատություններում կուրսանտները պետք է պետական որակավորման քննություն հանձնեն նաև «հոգեբանություն» և «մանկավարժություն» առարկաներից,

5. այսօր համացանցը հնարավորություն է տալիս կազմակերպելու դասընթացներ հեռավորության վրա: Կարծում ենք՝ կարելի է այդ հնարավորությունն օգտագործել և հրամանատարական կազմի համար նախօրոք հաստատված ծրագրով՝ առանց զինվորական ծառայությունից կտրելու, կազմակերպել հոգեբանության և մանկավարժության դասընթացներ և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Զ. Դ. Ասատրյան,* Զինվորական կարգապահության ամրապնդման հիմնախնդիրները (դասախոսությունների ժողովածու): Ե., 2013:
2. *Զ. Դ. Ասատրյան,* Պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների հոգեբանական ախտորոշման և կարգապահական խախտումների կանխարգելման հարցի շուրջ: «Հայկական բանակ», 2014, հմ. 3–4:
3. *Վ. Հ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009:
4. *А. Я. Анцупов.* Социально-психологические основы предупреждения и разрешения межличностных конфликтов во взаимоотношениях офицеров. М., 1993.
5. *А. Г. Караяни, И. В. Сыромятников.* Прикладная военная психология. М., 2006.
6. *Laurie Brenner.* How to Handle a Psychological Interview (http://work.chron.com/handle-psychological-interview-14334.html):
7. *S. A. McLeod.* The Interview Method, 2014 (http://www.simplypsychology.org/interviews.html):

ՀՀ ԶՈՒ-ՈՒՄ ՍՊԱՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊՆ փոխգնդապետ

Նախևառաջ պետք է գիտակցենք, որ Հայաստանի մարդկային ռեսուրսները սահմանափակ են, հետևաբար հայոց զինուժի զինվորն ու սպան պետք է շեշտը դնեն ոչ թե քանակական առավելության, այլ որակական գերազանցության վրա:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ

ՀՀ Պաշտպանության նախարարի տեսլականում շեշտված է Հայաստանի մարդկային ռեսուրսների սահմանափակության պարագայում ՀՀ ԶՈՒ-ի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը. ձեռք բերել հակառակորդի նկատմամբ որակական գերազանցություն, որին հասնելու համար պետք են ոչ միայն նյութական միջոցներ, այլև, ինչը հույժ կարևոր է, մարդկային ռեսուրսներն ու միջոցները լավագույնս ղեկավարելու ունակ կրթված սպայակազմ:

Ըստ այդմ քննարկենք այն դրույթը, որը Նախարարի տեսլականում նշված է որպես 4-րդ առաջնահերթություն:

Զինծառայողների կրթության շարունակականության ապահովումը զինվորական ծառայության ամբողջ ընթացքում: Մենք պետք է հետևողական աշխատանքներ կատարենք զինծառայողի կրթական ցենզի և մտավոր մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ որպես Զինված ուժերի զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղության:

Առանց թերագնահատելու ՀՀ Պաշտպանության նախարարի տեսլականում մյուս ներկայացված առաջնահերթությունները՝ ասենք, որ սպաների կրթական ցենզով է պայմանավորված ՀՀ ԶՈՒ-ի մարտունակության առյուծի բաժինը:

Վերապատրաստման դասընթացներ իրականացնող ռազմաուսումնական հաստատության գործունեությունը պետք է հիմնված լինի հստակ կերպով մշակված քաղաքականության վրա, որը պետք է բխի ՀՀ ԶՈՒ-ի սպայական ռեսուրսների ճիշտ կառավարման ռազմավարությունից, այսինքն՝ վերապատրաստման դասընթացները պետք է նպատակաուղղված լինեն սպայակազմի այն կարողությունների զարգացմանը, որոնք անհրաժեշտ են ՀՀ ԶՈՒ-ի առջև դրված խնդիրների լուծման համար: Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ում սպաների վերապատրաստումն ստացել է շղթայական բնույթ՝ 12-շաբաթյա, 21-շաբաթյա դասընթաց, որի տրամաբանական շարունակությունն է ուսուցումը Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Մարշալ Հ. Բաղ-

ռամյանի անվան ՀՇՖ դասընթացներում, կամ արտերկրի համապատասխան ակադեմիաներում՝ մագիստրոսի աստիճանի շնորհմամբ:

Այս ամենի նպատակը մասնագետների վերապատրաստման կարիքի բավարարումն է, իսկ այն առաջանում է ժամանակի ընթացքում ծառայության մեջ առաջխաղացման, առաջադրված պահանջների, տեխնոլոգիաների, նոր մոտեցումների և մասնագետի ունեցած բուհական գիտելիքների թարմացման պահանջից:

Գործընթացը շատ ողջունելի և դրական է, քանի որ սպաները հաջորդ պաշտոնի անցնելու համար նախապատրաստվում են տեսականորեն և գործնական աշխատանքի շնորհիվ, սակայն դրական միտումներով հանդերձ դեռ ունի իր թույլ ու բաց տեղերը, որոնք ազդում են ընդհանուր կրթության որակի վրա: Օրինակ՝ արծարծենք այն խնդրահարույց հարցերը, որոնք առաջանում են ՌՀ-ում սպաների որակավորման բարձրացման և ռազմամասնագիտական ուսուցման կենտրոնի (այսուհետև՝ ՍՈԲ և ՌՈՒԿ) սպայակազմի խմբերի ուսուցման ժամանակ: Հարցերը վեր են հանվել օտարերկրյա բանակների ռազմաուսումնական հաստատությունների փորձի հետ համեմատականներով և զուգահեռներով, պրոֆեսորադասախոսական կազմի և ունկնդիրների շրջանում հարցումների և քննարկումների արդյունքներով:

Որո՞նք են այդ բացերը, և ի՞նչ լուծումներ են հնարավոր դրանք շտկելու համար, որպեսզի ուսման արդյունավետությունը մեծանա:

Նախ. պետք է հստակ կերպով գնահատել ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ ուղղված ռազմական բնույթի մարտահրավերները, ՀՀ ԶՈՒ-ի կարողությունները այդ մարտահրավերները զսպելու կամ անհրաժեշտության դեպքում չեզոքացնելու հնարավորությունները, ո՛չ միայն ռազմական տեխնիկայի և սպառազինության հակակշռով, այլև սպաների պատրաստությամբ՝ ըստ ժամանակի հրամայականի: Նույն համատեքստում միանշանակ կերպով պետք է գնահատվի կրտսեր սպայակազմի դերը, քանի որ նրանց՝ որպես ստորաբաժանումների անձնակազմի անմիջական հրամանատարական կազմին է վստահված մարտական պատրաստման և պատրաստականության մակարդակների բարձրացումը, նրանց մասնագիտական որակներից և հմտությունից կախված կլինի մարտական գործողությունների ժամանակ ստորաբաժանումների հմուտ ղեկավարումը, բարդ իրավիճակներում իրենց նախաձեռնությամբ կարճ ժամանակահատվածում ճիշտ որոշումներ կայացնելը, ինչը կհանգեցնի ցանկալի արդյունքի՝ առաջադրված խնդրի կատարում սակավ մարդկային կորուստներով:

Հարց է ծագում. ո՞րն է գերադասելի՝ ունենալ թերի համալրված բարձրակարգ սպայակազմ, թե «դասակից մինչև գումարտակի հրամանատարի տեղակալ» օղակում պարզապես ապահովել անհրաժեշտ թվաքանակը՝ միջակ հրամանատարական կազմով նվազագույնի հասցնելով սպայական թափուր հաստիքները:

Խնդիրները պայմանականորեն կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի. *ա) մինչև սպայական վերապատրաստման ներկայանալը* և *բ) վերապատրաստման ընթացքում:*

Ի՞նչ հանգամանքներ են ազդում կրթության որակի վրա:

ա) մինչև սպայական վերապատրաստման ներկայանալը.

1. սպա դառնալու համար դիմողների ցածր կրթական ցենզը, որն ունի իր խորքային պատճառները նախադպրոց–դպրոց շղթայում,
2. սպա դառնալու «գրավչության» բացակայությունը,
3. ավելի «դյուրին» տարբերակով սպա դառնալու հնարավորությունը՝ մեկամյա, երկուսուկես տարվա դասընթացներ,
4. թվաքանակ ապահովելու նպատակով ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված՝ ցածր կրթական ցենզով դիմորդները,
5. սպաների սոցիալ-կենցաղային վիճակը,
6. բուհեր ավարտած (հիմնականում՝ հեռակա ուսուցմամբ) ենթասպաները և պայմանագրայինները, որոնք սպայական կոչումներ են ստանում հնգամյա դասընթացների միջոցով,
7. շատ զորամասերում կրտսեր սպայակազմի հրամանատարական հավաքների անցկացման ցածր որակը,
8. սպաների ինքնապատրաստման ժամերի ոչ նպատակային օգտագործումը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, և այլ հարցեր:

բ) վերապատրաստման ընթացքում.

1. **առանց քննությունների (մրցակցության) պարտադրված վերապատրաստման կուրսերի ներկայանալը:** Վերապատրաստմանն սպաների մասնակցությունը պետք է ապահովվի մրցակցային եղանակով, հրամանատարների օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումներով կամ՝ լավագույն դեպքում, որակավորման հանձնաժողովի ատեստավորումն անցած սպան միանշանակ կերպով պետք է կրկին մասնակցի քննության, որի արդյունքներով տվյալ մասնագիտական հոսքի համար կընտրվեն լավագույնները:

Վերապատրաստումը հաճախ ընկալվում է որպես ոչ թե սովորելու հնարավորություն, այլ մասնակցելու պարտականություն: Դիտվում է ուսման նկատմամբ ունկնդիրների մակերեսային մոտեցում կամ ընդհանրապես շահագրգռվածության բացակայություն, քանի որ նա առանց ջանքերի, պլանային միջոցառման տարբերակով ներկայանում է սպայական վերապատրաստման դասընթացների, և ուսումն ավարտելուց հետո էլ պաշտոնների նշանակման վրա շատ դեպքերում ազդում են ոչ թե նրա ստացած գնահատականները, այլ զուտ դասընթացների վկայականը:

2. **Կանոնադրությունների շատ հոդվածների պահանջների անհամատեղելիությունը:** Խորհրդային կամ ռուսաստանյան բանակի չափանիշներով գրված կանոնադրությունները չեն կարող համահունչ լինել ՀՀ ԶՈՒ-ի շարային, կարգապահական, ներքին, կայազորային պահանջներին, և դրանց շատ հոդվածներ մեր իրականությունում պարզապես չեն գործում: Հարցն ավելի հրատապ է մարտական կանոնադրությունների առնչությամբ, քանի որ ուսուցանվողը սովորում է այն, ինչ չի կիրառելու մարտի դաշտում: Հակասությունների շղթան, որն առկա է, մասնավորապես, մարտական կանոնադրության առաջին և երկրորդ մասերի միջև, ուսման գործում ստեղծում է լրացուցիչ բարդություններ:

3. Վերապատրաստվող սպաների թվաքանակը խմբերում: Շատ դեպքերում վերապատրաստում իրականացնող ուսումնական հաստատությունն ի վիճակի չի լինում ապահովելու ցանկալի որակը վերապատրաստվող սպայական մասնագիտական խմբերում ունկնդիրների մեծ թվի պատճառով: Համաձայն ՀՀ ՊՆ հաստատած ծրագրի՝ ուսուցումը կատարվում է ինչպես դասախոսությունների և սեմինարների, այնպես էլ խմբային վարժանքների մեթոդով: Եթե առաջին երկուսի ժամանակ դասախոսը կարող է հասնել ցանկալի արդյունքի, ապա խմբային պարապմունքների ժամանակ դա գործնականում դառնում է անհնարին, եթե խմբում 10-ից ավելի ունկնդիրներ են, քանի որ դասախոսը, կարևորելով խմբային վարժանքները, այդուհանդերձ պետք է անհատական աշխատանք վարի յուրաքանչյուր ունկնդրի հետ և իր դասաժամին կարողանա վերջնարդյունքի հասցնել պլանով նախատեսված հարցերի մշակումը:

4. **Դասախոսական պաշտոնների ցածր կոդերը:** Ռազմաուսումնական հաստատությունում թափուր պաշտոնների համար հայտարարվող մրցույթներին շատ դեպքերում մասնակցում են զորքերում ծառայողական լճացում ապրող սպաները, որոնք որպես դասախոս չեն կարող ցուցաբերել անհրաժեշտ տեսական և գործնական որակներ: Ուստի և փորձառու սպան, եթե չունի ծառայության վայրի կամ ընտանեկան պայմանների բերումով ծագած անձնական խնդիրներ, գերադասում է ծառայությունը շարունակել զորքերում: Կադրերում հաստիքների վերանայման շնորհիվ դասախոսական կազմի կոդերի բարձրացումը կշահագրգռի բանիմաց սպաներին՝ նրանց դրդելով ներքաշվելու ուսումնական գործընթացի մեջ, ինչը կնպաստի ուսման որակի բարձրացմանը:

5. **Դասախոս – ունկնդիր հարաբերությունները՝ կախված կոդերից:** Դասախոսական կազմը որակավորման բարձրացման դասընթացներում մայոր, փոխգնդապետ հաստիքապաշտոնային զինվորական կոչումով դասախոսում է այն ունկնդիրներին, որոնք պատրաստվում են մոտոհրաձգային, տանկային, հրաձգային գումարտակների, հրետանային դիվիզիոնների հրամանատարների, տեղակալների պաշտոններ զբաղեցնելու համար: Փաստորեն, դասախոսը ունկնդիրներին պատրաստում է մի պաշտոնի, որից ցածր է վարձատրվում (շատ դեպքերում՝ նաև ունկնդրից):

6. **Պահանջատերերի հետ վերապատրաստում իրականացնող ուսումնական հաստատության ակտիվ գործակցությունը հետադարձ կապով:** Ցանկացած աշխատանքի արդյունքի ապահովման և ամրապնդման համար կարևոր է հետադարձ կապի պահպանումը: Հետադարձ կապի շնորհիվ ի հայտ են գալիս վերապատրաստման ծրագրի բացերը, թույլ տեղերը, հնարավորություն է ստեղծվում ուսումնական ծրագիր ձևավորելու զորքերում առկա խնդիրների լուծման շեշտմամբ:

7. **Նորագույն տեխնոլոգիաներով ուսուցման ներդրման դանդաղ տեմպը:** Թեև ռազմական համալսարանի հրամանատարական կազմը ձեռնամուխ է եղել տարեկան պլանի համաձայն մրցութային եղանակով և վերը նշված միջոցների օգտագործմամբ դասախոսությունները ունկնդիրների համար

ավելի հասանելի դարձնելու գործին, սակայն դա իրականացնում են միայն որոշ նախաձեռնող դասախոսներ՝ առանց համակարգման, քանի որ համապատասխան բաժիններում չկան մարդկային և նյութական անհրաժեշտ ռեսուրսներ:

8. **Հայերեն ռազմամասնագիտական գրականության սուղ քանակությունը կամ բացակայությունը:** Յուրաքանչյուր սպա իր ծառայողական գործունեության տարբեր մակարդակներում, իսկ առավել մեծ չափերով՝ ռազմաուսումնական հաստատություններում, երբ սովորելու ցանկությամբ համակված՝ ունկնդրի կարգավիճակում ցանկանում է իր գիտելիքները հարստացնել մասնագիտական գրքեր, ամսագրեր կամ աշխատություններ ուսումնասիրելու միջոցով բախվում է հայերեն գրականության անբավարարությանը: Տվյալ հարցը կարելի է լուծել, առաջին հերթին տարիների ընթացքում դասախոսական կազմի թարգմանած գրականությունը տպագրելու, էլեկտրոնային եղանակով ընդհանրացնելու և ուսումնական հաստատության ներսում փակ ցանցային գրադարան կառուցելու միջոցով:

9. **Դասախոսական կազմի՝ համացանցից օգտվելու հնարավորությունից զուրկ լինելը:** Գրականության անբավարարությունը ազդում է ոչ միայն ունկնդիրների զարգացածության, այլև դասախոսական կազմի ընդհանուր մասնագիտական պատրաստականության վրա, ինչն իր հերթին չի կարող չանդրադառնալ նրա դասավանդման որակի վրա: Համացանցի առկայության դեպքում կարելի է հասնել զգալի դրական արդյունքների:

10. ՀՇՖ-ում առկա են տեսակապի ժամանակակից միջոցներ, որոնք չեն օգտագործվում հեռահար ուսուցման տարբերակի համար: Կարևոր է ուսումնական պրոցեսում ընդգրկել զորամիավորումների հրամանատարական կազմին, վարչությունների, բաժինների պետերին, տեսակապի միջոցով անցկացնել դասախոսություններ, հարց ու պատասխաններ, քննարկումներ՝ յուրաքանչյուրն իր մասնագիտական ոլորտից վերցված և տվյալ հոսքի ունկնդիրների ծրագրում ներառված թեմաներին համահունչ:

Այս և նմանատիպ շատ այլ հարցերի վերանայման շնորհիվ կունենանք կիրթ և պրոֆեսիոնալ սպայակազմ:

Տեղին է հիշատակել հին ասացվածքը՝ ենթակային չուսուցանած մարտի դաշտ ուղարկելը դավաճանություն է: Իսկ ՀՀ-ն ճակատագրի բերումով պարտավոր է ունենալ ուսուցանված, մարտունակ և արհեստավարժ բանակ:

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ապահարմարվողականություն – дезадаптация – deadaptation
ապանվտանգայնացում – десекьюритизация – desecuritization
առաջադրանքային կառավարում – принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи – mission command, mission-type tactics
առաքելություն – миссия – mission
աստիճանակարգություն – иерархия – hierarchy
բանելակարգ – режим – mode
բնագիծ – рубеж – line
գերազանցություն – 1. превосходство, 2. отличие – 1. superiority, 2. honors, distinction
գերակայություն – приоритетность – priority
գժտայնություն – конфликтность – conflictness
գժտություն – конфликт – conflict
գիտաժողով – научная конференция – scientific conference
ենթամշակույթ – субкультура – subculture
թևանցում – фланговый обход – flank round, flank bypass, wing bypass
կանխարգելում – профилактика – prophylaxis, prevention
կարգախումբ – категория – category
կարծրատիպ – стереотип – stereotype
հակամարտայնություն – конфликтность – conflictness
հակամարտություն – конфликт – conflict
համապիտանի – универсальный – multipurpose
համընդհանուր տեղեկութացում – глобальная информатизация – global informatization
հաստատութենացում – институционализация – institutionalization
հրամանատրում առաջադրանքի միջոցով – տես *առաջադրանքային կառավարում*
մեքենայացված դիվիզիա – механизированная дивизия – mechanized division
նախաձեռնություն – инициатива – initiative
ներուժ – потенциал – potential
շարժառիթ – мотив – motive
պաշտոնական հարաբերություններ – должностные отношения – official relations
պատրաստակամություն – готовность – willingness
պատրաստականություն – выучка – skill
պատրաստվածություն – подготовленность – preparedness
պատրաստություն – готовность – 1. readiness, 2. preparedness
պատրաստում – 1. подготовка, 2. приготовление – 1. training, 2. preparation
վերթիռ – взлет – takeoff
տեղեկույթի հավաքում – сбор информации – information gathering
փոխգործություն – взаимодействие – interaction
օպերացիա – операция – operation

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները՝ ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Նախագծի ղեկավար՝ ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու *Ա. Կ. Հովհաննիսյան*

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Լեզվական խմբագրման բաժնի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի
պաշտոնակատար Դավիթ Տոնոյանը
մարտական հերթապահություն իրականացնող
հայ խաղաղապահների հենակետերից մեկում

Աֆղանստան, 2018 թ. նոյեմբեր

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ HAIKAKAN BANAK 4 (98). 2018